



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

LEA

✓
1156

1999





1862

ԱՌԱՋՆՈՐԳ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՌԱՆՁԻՆՆ

ԺՆՈՂԱՅ ՀԵՄԵՐ

ԳՐԵՑ

Հ. ՊՕՂՈՍ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆՑ

ՄԻԻԹ. ՈՒԻՏԷՆ

1862



ՎԻԷՆԱ

ՄԻԻԹԱՐԵՆՆՑ ՏՊԱՐԱՆ

1862






150

ԱՌԱՋՆՈՐԳ

Գ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ե Ա Ն



ԱՌԵՋՆՈՐԴ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՌԱՆՁԻՆՆ

ԺՆՈՂԱՅ ՀԱՄԱՐ

ԳՐԵՑ

Հ. ՊՕՂՈՍ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆՅԱՆ

ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ



ՎԵՐԵՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆ

1862



28. 1158

4 1156-40

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



ՄԱՐԴԿԱՅԻՆ կենաց մէջ խիստ հաստատան
տեսարաններուն մէկն է՝ ամուսնական սուրբ կապով
զօգուած երկու անձանց՝ երկու ամուսնացեալ
նի մը բարի զաւկրներէ բոլորած ընկերութիւնը
տեսնել: Ինչ որ գեղեցիկ պարտեղի մը մէջ հա-
սուննալու մօտեցող պտուղներով լեցուած ծառ մը՝
անսնողներուն սրտին մէջ կը պատճառէ, նոյնը շատ
աւելի սաստկութեամբ կը պատճառէ բարի զաւկրնե-
րով երջանկացած ծնողաց ներկայութիւնը: — Սուրբ
ամուսնութեամբ զօգուած ընկերութեան միակ օր-
հնութիւնն՝ ուստի եւ երջանկութիւնն է՝ ընտիր
զաւկրներու տէր ըլլալ, անոնցմով ուրախանալ, ա-
նոնց յառաջագիմութեամբը կենաց նեղութիւննե-
րուն մէջ սիւսիութիւն գտնել ու անոնցմով ուրա-
խալի ապագայի մը յոյսը սրտին մէջ սնուցանել:

Սակայն այս վայելմունքն, աս ուրախութիւնն
ու մխիթարութիւնը իրօք ստանալու եւ վայելելու
համար ինչ դժուարին ու տարժանելի վայրկեաններ,
ինչչափ նեղութեան օրեր պիտ'որ անցնին, որչափ
ջանք ու աշխատութիւն, հոգ ու խնամք, զգուշու-
թիւն ու խոհեմութիւն ի գործ պիտ'որ գրուի: Ան
նշանաւոր վայրկենին մէջ, երբ որ ամուսնացեալք եր-
կնաւոր օրհնութեան պտուղն ընդունելով՝ զաւկի մը

ճնողք ու տէր ըլլալնուն վրայ կը ցնծան, ճնողական
մեծ մեծ ու ծանր պարտքերն իրենց ճիշդ կատարու-
մը պահանջելու կը սկսին. տքնութիւն, աշխատութիւն,
ծախք ու անձնական հանգիստը ճնողական պարտուց
կատարման համար զոհ ընելը՝ նորածին զաւակին
հետ մեկտեղ ճնողաց տան մէջ կը մտնեն:
Բայց ամէնն ալ քաղցր ու հաճոյական են. վասն զի
ճնողական սերն աս ամէն՝ արտաքնոց համար
ծանր ու դժուարին երեւցող՝ աշխատութիւնները
կը թեթեւցընէ ու կը քաղցրացընէ:

Բայց աս ճնողական սերը թէ որ մարմնոյն պիտոյից
նկատմամբ միայն ճնողաց նպատակամբ զօրացուցիչ
ըլլար՝ իրենց պարտքերը յօժարութեամբ ու հաւատարմութեամբ
կատարելու, անկարգ կամ գոնէ անկատար
կ'ըլլար: Արդ նոյն սերը ճշմարիտ ու կատարեալ
ըլլալու համար պէտք է որ ճնողաց սիրտը բորբոքէ
ու իրենց զօրութիւն տայ զաւակներուն աղնուագոյն
մասին՝ բանական ու անմահ հոգւոյն վրայ
ալ ամէն կարեւոր խնամքը ցուցընելու, անոր
ամէն պիտոյքն ալ մեծ ջանքով ու խնամքով հոգալու:

Աթէ գնէինք ալ՝ որ զաւակ մը իր հոգոյն ու
մարմնոյն բարելաւութեան, առողջութեան ու կատարելութեան
համար հառաւարտապէս ճնողացը խնամոց,
հոգածութեան ու տքնութեան կը կարօտի, պէտք է
ինք ըսել՝ որ ասոնք զաւակներնուն (ճնածօրէն
սկսելով) մարմնոյն ամէն պիտոյքը հոգացած

ատեննին՝ ան վայրկեանն ալ երբեք մտքերնէն հա-
նելու չեն, որուն մէջ հոգին ալ (տղուն մէկ — մէկ
ու կէս տարեկան եղած ժամանակը) գործելու սկսե-
լով՝ իրենց խնամոցը կը կարօտի: Բայց որովհետեւ
“Հոգի առաւել է քան զմարմին”, հոգին աւելի
ազնիւ ու պատուական է ու բարձրագոյն կենաց կո-
չուած կամ սահմանուած է, անոր համար թէ որ
ծնողք իրենց զաւակացը՝ մարմնով խեղ, կարկամ,
վատառողջ ու պակասաւոր չըլլալուն համար հոգ կը
տանին, եւ զանոնք այսպիսի պակասութեանց վտանգ-
ներէն ազատ պահելու կը ջանան, որչափ եւս աւելի
ջանքով պարտական են հոգ տանելու, հսկելու եւ
աշխատելու, որ այն ազնիւ ու անմահ հոգին ու անոր
կարողութիւններն անխնամ մնալով կամ իրենց կա-
րելոր ըլլող կրթութենէն զրկուելով՝ սխալ կամ
անկարգ ընթացքով չսկսին գործել, խեղ ըլլալ,
պատշաճ ատենին գործունեաց ըլլալու չգանգաղին,
կարկամ չըլլան, եւ ծուռ գաղափարներով, յօժա-
րութիւններով ու զգացմունքով շտոգորուին, պա-
կասաւոր (հիւանդոտ) չըլլան:


Աւրեմն ծնողք պարտական են հաստատու-
թեամբ գիտնալ՝ որ իրենց զաւակաց համար երկու
տեսակ խնամք, երկոռ կերպ կրթութիւն կամ դաս-
տիարակոռթիւն հարկաւոր է. Ա. ֆիզիքական՝ մար-
մնոյն համար ու Բ. հոգեկան կամ քարոյշական՝ հո-
գւոյն համար: Ֆիզիքականը՝ որ է մարմնականը կամ
արտաքինը, անոնց ծննդեան օրէն կը սկսի. իսկ հո-

գեկանը, եթէ չենք կրնար ըսել որ նոյն ատեն կը
սկսի, գոնէ պէտք ենք ըսել՝ որ նոյն ատեն անոր
պատրաստութիւնները կամ սկզբնական մտադրու-
թիւնը ծնողաց կողմանէ պէտք է որ սկսին: — Մեր
առաջիկայ փոքր աշխատասիրութիւնը ծնողաց ձեռքն
ուղեցոյց ու առաջնորդ մը պիտ'որ ըլլայ՝ աս Հոգեկան
կամ քարոյշական Գաւառիարականութեան՝ չէ թէ միայն
կարեւորութիւնը, հասկա նաեւ ամէն գլխաւոր հան-
գամանքն ու գործադրութեան հարկաւոր ըլլող մի-
ջոցները ճանչնալու, ճանչնալէն ետքն ալ միշտ յի-
շելու որ իրենք ըստ ամենայն իրաւանց պարտական
են, եթէ կարելի է՝ անձամբ, իսկ եթէ ասիկայ կա-
րելի չէ՝ յաջող ու ընտիր անձանց ձեռքով, իրենց
զաւակներուն աս գաւառիարականութեան պտուղները
վայելել տալու, պատշաճ ատենին զանիկայ սկսելու
եւ անոր յաջողելուն փոյթ տանելու:

ԱՌԱՋՆՈՐԳ

Գ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ի Թ Ե Ա Ն

ԱՌԱՆՁԻՆՆ ԾՆՈՂԱՅ ՀԱՄԱՐ



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մեկ միևեկ մեկ տարեկան տղոց կրթութիւնը:



1. Հոգեկան կրթութեան վախճանը:

ՀՈԳԵԿԱՆ կարողութեանց կրթութիւնը՝ մարդուն հոգւոյն հետ կը զբաղի, անոր միտքն ու կամքը եւ անոնցմով բարքը կը կրթէ. ուստի եւ երկու բանի միտ կը դնէ, այսինքն՝ կրթութեամբ անձը կամ տղան մէյ մը յատկապէս մարդ կամ մարդկութեան արժանի, մէյ մ'ալ՝ ճշմարիտ քաղաքացի (քաղաքացին ընկերութեան արժանաւոր անդամ) ընելու: Իր բոլոր զբաղմունքը մասնաւորապէս տղուն կամ ուսանողին հոգեկան կարողութիւններուն կամ ընդունակութիւններուն հետ է, իր գործքն է՝ մտքին, կամքին, երեւակայութեան, յիշողութեան ու ազնիւ կամ բարձրագոյն զգացմանց զօրութիւնները բանալ, լուսաւորել, ուղղել, կրթել եւ զօրացրնել, ամէն բանի մէջ ու ամէն ժամանակ քրիստոնէական սուրբ կրօնին սկզբանց եւ ուսմանց համաձայն մտածելով ու գործելով:

Աս հոգեկան կրթութեան վախճանը կամ նպատակն ալ երեք է: Առաջին՝ զգայութիւնը նշմարառութեան վրայ արթնցրնել, որն որ բոլոր հոգեկան կենաց՝ մտածելու, զգալու եւ գիտնալու կամ գիտութեան հիմն

է: Երկրորդ՝ զգայութիւնը իրարանց ու պարստոց վրայ արթնցընել, որուն մէջ ամէն աստուածային օրէնքներն ու մարդկային ուղիղ կարգերն ու կանոնները երկրիս վրայ ապրող մարդու մը համար կարելի եղած երջանկութեան հետ մէկտեղ կը բովանդակին: Երրորդ՝ զգայութիւնը բնութեան, արուեստի, գիտութեան ու կենաց մէջ գանուած գեղեցիկ ու ազնիւ կամ յարձրագոյն յաներոն վրայ արթնցընել. ինչու որ բուն բարոյականին զգացմունքն եւ ստորին կեանքէն բարձրագոյն կենաց անցնելու միջոցը՝ աս բանիս մէջն է:

2. Մարդուն վախճանը:

Մարդս, ինչպէս որ յայտնի ծանուցուած է, երկու աշխարհքի քաղաքացի բլալուն՝ երկու վախճանունի. մէկը ժամանակաւոր ու մէկալը յստիտենական: Աս երկու վախճանին կրնայ հասնիլ՝ բնութեան համաձայն ու բանաւոր դաստիարակութեամբ, եւ կարգաւորեալ ու զգուշաւոր կրօնական հրահանգով: Մարդ բնական կամ Փիղիքական նկատմամբ, բայց եւս առաւել հոգեկան նկատմամբ կամ հոգւոյն կողմանէ, արտաքոյ կարգի մեծ կրթութեան ու կատարելութեան ընդունակ է. բայց քիչերը կը հասնին այն չափին՝ որուն կրնային ու պէտք էին հասնիլ, եթէ իրենց զօրութեանց ու կարողութեանց համեմատ՝ զգուշաւոր, հաստատուն ու կարգաւորեալ դաստիարակութիւն ունենային: — Աւստի ինչպէս որ ծնողաց անտնօրինելի պարտքն է՝ իրենց զաւկրներուն մարմնաւոր աղէկութեան ու կատարելութեան համար ձեռքերնէն եկածին չափ հոգ տանիլ, ասանկ ու ասկից շատ աւելի մեծ պարտականութիւն ունին, մանաւանդ թէ բնական ու միանգամայն դրական օրէնքներով կը պարտաւորին, անոնց հոգեկան ու բարոյական կարողութեանց կատարելագործութեան կամ կրթութեան համար իրենց բոլոր ուժովը փոյթ տանիլ:

3. Հողեկան կրթութեան սկսելու ժամանակը :

Չենք կրնար ուրանալ՝ որ տղայութեան առջի տարիներուն մէջ մեր վարմանց կամ բարուց ու մտաւալու կերպը կը սկսի: Բայց որովհետեւ ճիշդ, այսինքն՝ օրովն ու ամսովը, չենք կրնար որոշել թէ երբ յատկապէս արտաքին ազդեցութիւնները մատաղ մանկան մը զգայարանաց ու մտաց վրայ իրենց ուժը բանեցընելու, եւ երբ այն մատաղ հոգւոյն վրայ աղէկ կամ դէշ բողբոջներն իրենց ծաղիկները բանալու եւ պտուղները տալու կը սկսին, անոր համար շատ աղէկ ու օգտակար բան կ'ըլլայ թէ որ ծնողք իրենց զաւկներուն բնական (ֆիզիքական) պիտոյիցը հոգ տանելու սկսած ատեննին՝ նաեւ անոնց հողեկան կրթութեանն ալ միտ դնեն, եւ նային որ անոնք իրենց կենաց սկիզբը՝ չէ թէ միայն մարմնով առողջ, հապա նաեւ վարքով բարի ու խելացի մարդիկներու հետ ապրին: Աս բանս ամենէն առաջ նոյն իսկ ծնողաց համար կ'իմացուի, որովհետեւ իրենք ի բնութեանէ ու իրենց սրտին զգացմանքէն աս պարտքն ունին՝ որ իրենց զաւկներուն ամենէն առջի հոգաբարձուները, ուստի եւ ամենէն առջի ուսուցիչները, կրթիչներն ու դաստիարակներն ըլլան:

Սայր մը պէտք է որ ստոյգ դիտնայ, թէ իր զաւկին բնական կարօտութիւնները հոգալու սկսած առջի վայրկեաններէն՝ սկսելու է անոր բարոյական կրթութիւնն ալ, եւ թէ տղուն մտքին կամ սրտին սկզբնական կազմութիւնը կամ հանգամանքը շատ մեծ ազդեցութիւն ունի անոր բոլոր ապագայ հողեկան կենացը վրայ: Տղաքինչ որ կը տեսնեն՝ որ իրենց ծնողքը կամ աս հասարակ իրենց քովը միշտ կեցող անձինք կ'ընեն, ան բանն աղէկ ու շիտակ կը կարծեն: Ասոր համար ամէն բանէն առաջ աս կտորին միտ դնելու է որ տղաք առջի սկիզբէն՝ երբ որ միտ դնելու, բմբռնելու եւ նմանելու կարող կ'ըլլան, միայն անանկ բաներ տեսնեն ու լսեն, որ իրօք աղէկ, իրաւացի, պարկեշտ ու վայելուչ են. ինչու որ ամենէն առջի տպաւորութիւնները (զաղափարները) ամենէն աւելի խորունկ կ'ըլլան, մտքին ու յիշողութեան

մէջ աւելի երկայն ատեն կը մնան, ու գրեթէ մարդուն
հետ մինչեւ ցմահ կը մնան, որովհետեւ մարդս պզտիկուց
ինչ սովորութիւն որ կը ստանայ՝ անիկայ հասարակօրէն
հաստատ կը պահէ:

4. Ծնողաց տան մէջ ու ծնողքէն պիտ'որ սկսի
կրթութիւնը:

Իրաւանց, պատուոյ, առաքինութեան, օրինաւոր
ազատութեան, Աստուծոյ ապաւինելու եւ անոր զօրու-
թեամբը (շնորհօքը) իր անձին վրայ ապահով ըլլալու,
բարեբարութեան փափագելու, ընտանեաց բարւոյն ու
տան բարեկարգութեան համար աշխատելու զգացմանց
ամէն բողբոջները կամ սկիզբները մարդուս սիրտը կը
ծնանին իր հայրենի տան մէջ. եւ ատանկով տղան կա-
մաց կամաց ազնուարարոյ մարդ մը ու բանաւորապէս
մտածող ու բարի զգացմունքով գործող քաղաքացի մը
ըլլալու ընթացքին մէջ կը մտնէ: Գաստիարակութեան
ուսումն ու կանոնները աւանդող մատենագիրներուն ա-
մէնն ալ աս ըսածնիս միարանութեամբ կը հաստատեն,
նաեւ աս ալ կ'ըսեն որ ծնողաց սորվեցուցած ու բանե-
ցուցած ճշմարիտ մարդավարութիւնը՝ չէ թէ միայն իրենց
զաւկրներուն մտաց ու սրտին մէջ աւելի դիւրութեամբ
կը մտնեն, քան թէ ուրիշներուն խրատներն ու օրինակ-
ները, հապա նաեւ ան մեծարանքն ու սէրը՝ զորն որ ի-
րենց աս կտորիս մէջ քաշած աշխատանքին ու անհան-
գստութիւններուն համար իրենց զաւկրներէն իբրեւ ար-
ժանաւոր վարձ կ'ընդունին, բաւական գրգիռներ են՝
տղոց աղէկ կատարել տալու իրենց ապագայ կեանքին
մէջ ունենալու պարտքերնին:

Հասարակօրէն որդիական սիրոյ պակասութեան
պատճառը՝ ծնողք են, ինչու որ շատ հեղ անոնց ան-
տարբեր կամ պաղ վարմունքովը, կասկածաւորութեամբը,
անիրաւութեամբն ու խստութեամբը կամ անզգայ տկա-
րութեամբը՝ տղոց սրտին մէջ աս որդիական սէրը բոլո-
րովին կը մարի. շատ հեղ ալ չիկրնար անանկ աղէկ բոր-
բոքիլ ու իր բարեբար կրակը տղուն սրտին մէջ վառել:

ինչու որ քիչ մը հարուստ ծնողք իրենց զաւկրներն ուրիշի հոգաբարձութեան յանձնելով՝ զանոնք հաղիւ օրրեւ երբեմն նաեւ շարաթը հեղ մը քովերնին բերել կուտան ու կը տեսնեն: Աս կտորիս վրայ շատ աղէկ կը խօսի Նիւմայէր. «Կնչպէս որ ընդհանրապէս տղուն շորս դին ըլլող ամէն բաները, նաեւ նոյն իսկ բնութեան մէջ գտնուող անոգայ բաները՝ անոր վրայ շատ մեծ ազդեցութիւն կ'ընեն, կ'ըսէ, ինչու որ իր բոլորաիքն եղած բաները իր հոգւոյն վրայ իբր հայլի մը վրայ կը նկարուին, այսպէս առանձինն քովը գտնուող մարդիկն իր ներքին յառաջագիմութեան կամ կատարելութեան կերպին ու աստիճանին շատ դիպց մասնակից կ'ըլլան»:

Քանաւոր պատճառներով ցուցնելն ու որոշելը դիւրին բան մըն է, որ բնութեան ազդեցութեան ու օրինաց նայելով, ծնողք իրենց զաւակացը յատուկ կրթութիչները կամ դաստիարակներն են, ուստի եւ պէտք է որ աս գործքն ու պաշտօնը մեծ սիրով, շքահայեցութեամբ, ճշդութեամբ (խղճմտանքով) ու համբերութեամբ յանձն առնուն: Քայց գործածութեան կամ գործադրութեան մէջ ու իրօք՝ ասիկայ բոլորովին ուրիշ կերպի կը դառնայ. ինչու որ հայրը տան մէջ կամ տնէն դուրս իր օրրստորական զբաղմանց ու վաստակին ետեւէն պիտ'որ իյնայ, իսկ մայրը՝ չէ թէ միայն իր տան հարկաւոր գործքերը պիտ'որ կատարէ, հապա շատ անգամ նաեւ ընտանեաց ապրուստը ձարելու կամ վաստակելու համար գործակից պիտ'որ ըլլայ. կամ թէ ըսենք՝ շատ զաւակներ ունի, ուստի եւ պզտիկ զաւկրներուն խիստ հարկաւոր հոգերը հոգալու զբաղելով, մեծերուն վրայ այնչափ փոյթ տանելու ժամանակ չ'ունենար: Ասոնցմէ զամ' ուրիշ արտաքոյ կարգի պատահարներ կը հանդիպին, որ ծնողաց անկարելի կ'ընեն իրենց զաւկրներուն կրթութիւնն անձամբ տալու, ուստի եւ հարկաւորապէս օտար անձի կամ դաստիարակի կարօտ կ'ըլլան: Աս օտար անձը՝ մեծամեծներն ու հարուստները ուրիշ պատճառի համար կը փնտռեն ու կ'առնուն, ստորին կարգի եւ աղքատ մարդիկ՝ ուրիշ պատճառի համար: Քայց քննելու բանն ան է՝ որ թէ առջիններուն ու թէ ետ-

քիններուն զաւակացը օգտին ու յաջող դաստիարակու-
թեան համար ինչ պէտք է ընել եւ ինչ ճամբայ պէտք
է բռնել: Աս բանիս մէջ որոշում մը տալը շատ մեծ
դժուարութիւններ ունի. որովհետեւ չէ թէ միայն ամէն
մէկ ազգ, հապա նաեւ ամէն մէկ ընտանիք, կրնամ ըսել՝
ամէն մէկ անձ դաստիարակութեան վրայ ընդհանրապէս
եւ մասնաւորապէս զատ ու առանձին կարծիք ու մտա-
ծութիւն ունի: Թէպէտ աս ասանկ է, բայց կրնանք
հաստատ յուսով ու քաջալերութեամբ աս կտորիս մէջ
հասարակարար հաստատուն կարգեր ու կանոններ դնել,
որոնցմով վերը դրուած խնդիրն ըստ կարի բաւականա-
բար կը լուծուի ու դործածութեան համար որոշում
կ'ընդունի:

5. Ո՛վ ու ինչպիսի մարդ պիտ'որ ըլլայ տղոց կրթիչը:

Մարդ մը՝ կ'ուզէ տղու մը մտաւոր կամ հեռաւոր
ազգական ըլլայ, կ'ուզէ անոր ի սկզբանէ բոլորովին ան-
ճանօթ ու օտար ըլլայ, կրնայ անոր շատ ընտիր ու սքան-
չելի դաստիարակ մը ըլլալ, նախ՝ թէ որ ինք աղէկ
կրթուած է. երկրորդ՝ թէ որ աղէկ կը ճանչնայ մարդուն
յարգն որոշակի, եւ իր ժամանակաւոր ու յախտե՛նական
նպատակին նկատմամբ, ու մարդկային բարձր արժանա-
պատուութիւնը՝ տղու մը վրայ ալ կը պատուէ ու կը սի-
րէ. երրորդ՝ թէ որ առանց հարկի եւ բռնութեան՝ մի-
այն սրտին յօժարութեամբն ու իբր ներքին բերմամբ
դաստիարակութեան պաշտօնը յանձն կ'առնու, ան ալ՝
կրթելու տղան բարոյապէս բարի ու իր զօրութեան հա-
մաձայն օգտակար քաղաքացի մը ընելու դիտաւորու-
թեամբ:

Ասանկ՝ մարդը ճշմարտապէս մարդ ընող՝ դաստիա-
րակ մը ո՛չ կրնայ ու ո՛չ ալ պէտք է ինք իրեն բան մը
ընել կամ նոր բան մը հնարել, ինչպէս բրուար բիրտ
հողին զանդուածէն աման մը կը շինէ, կամ վարպետ
ճախարակագործը խորտուբորտ կոճղէ վայելուչ ու ար-
ուեստաշէն կաղնուածք մը կը յօրինէ. հապա պէտք է որ
անսխիզական օգնիչներ ունենայ, թէ որ կ'ուզէ որ աղէկ

գաստիարակութիւն ընելու համար ունեցած յօժարու-
թիւնն ու աղէկ հմտութիւններն անպտուղ ու անօգուտ
չըլլան: Մարդը պէտք է որ ընկերական կապի կամ միա-
բանութեան մէջ հրահանգի ու կրթուի, ինչու որ իրեն
համար յայտնապէս սահմանուած է՝ որ իր ատենին
մարդկային ազգին մեծատարած շղթային օգտակար մէկ
անդամն ըլլայ, ու իր ապրած տէրութեան կամ երկրին
կանոնաւոր կառավարութեան՝ իր կոչման ու վիճակին
համաձայն՝ յառաջացուցիչ ու ձեռնտու ըլլայ: Աւստի
պէտք չէ որ կրթուելու տղան իր գաստիարակին հետ՝
մինակուկ ուրիշ մարդիկներէն զատուած իբր կղզւոյ մը
վրայ՝ կեանքն անցընէ, հապա անոր ձեռքին ու առաջնոր-
դութեան տակ մեծի ու պղտիկի հետ ապրի, եւ իր շորս
դին նայելով՝ աշխարհքը տեսնէ, բայց միշտ բարի վի-
ճակի մէջ: Աս ալ ասանկ եղած ատենը՝ պէտք է զգոյշ
կենալ որ տղոց առջեւ, որչափ ալ պղտիկ ըլլան, ներ-
կայ չըլլող անձանց վրայ արհամարհական ու ծաղրական
խօսքեր, անոնց սխալներուն ու պակասութիւններուն
վրայ շարաշար բամբասանքներ, կրիւք ըսուած յիշոցներ
ու անարգական զրոյցներ չխօսուին, եւս առաւել ըն-
տանեաց մէջ կռիւներ, ատելութեան, կատաղութեան
ու բռնութեան գործքեր չըլլան, կամ թէ օտարասեռից
մէջ իրարու հետ աչքով, խօսքով ու շարժումով
նշաններ չարուին:

Բնութեան ու մարդկային կենաց ամէն հանգա-
մանքներն ու յարաբերութիւնները կը պահանջեն որ
մայրն իր զաւկին վրայ՝ դոնէ անոր առաջին տարիներուն
մէջ՝ վերին կառավարութիւնը կամ վերակացութիւնն
ունենայ: Տղուն քովը պիտ'որ դանուին գլխաւորաբար իր
եղբայրներն ու քոյրերը, իսկ եթէ գեռ առջինէկ է եւ
եղբայր ու քոյր չունի, ուրիշ իրեն հասակակից տղաք՝
իբր անոր հետ մեկտեղ կրթուելէք կրնան իր քովը գրտ-
նուիլ: Ծնողքէն, եղբայրներէն, քոյրերէն ու աղգա-
կաններէն ետքը ստնտուն ու դայեակը եւ տան ծառա-
ները՝ տղուն շորս դին դանուող անձինքներն են: Աս բա-
նիս մէջ պէտք է միշտ յիշել որ շափահաս անձինք թէ-
պէտ շատ ուղելու եւ ջանալու ըլլան որ տղուն վրայ աղէկ

ազդեցութիւն ընեն, կամ թէ բռնեք՝ խօսքով ու օրինակով անոր բարեկիրթ ըլլալուն համար աշխատին, սակայն հասարակօրէն անոր սրտին, մտքին ու կամքին, խօսքին կամ լեզուին ու բարուցը վրայ այնպէս անմիջական ազդեցութիւն չեն կրնար ընել, ինչպէս շափահաս շրջող կամ փոքրահասակ տղաք, որոնք՝ ինչպէս յայտնի է՝ ամենեւին խորհուրդ մը չեն կրնար ունենալ ազդեցութիւն ընելու ան տղուն հոգեւոր կենացը, այսինքն՝ բարուցը վրայ, որուն հետ կը կենակցին, կը խաղան ու կը նստին կ'ելեն: Աւտի շատ հարկաւոր բան է նկատել նայիլը՝ թէ տղուն անմիջապէս քովն ըլլող անձինք ինչպիսի ֆիզիքական, բարոյական ու հոգեկան հանգամանք ունին, այսինքն թէ արդեօք մարմնով, մտքով ու հոգեւոր առողջ են՝ թէ չէ:

6. Ինչ կերպով ու ճամբով տղուն սիրտը շարժելու պէտք է սկսիլ:

Հայտնի բան մըն է՝ որ սէրն ու խաղը առջի միջոցները կամ ճամբաներն են, որոնցմով մարդ մատաղ տղու մը հաճոյ կրնայ ըլլալ, կամ թէ բռնեք՝ սիրտը շահիլ, թէ որ զգայականէն կամաց կամաց հոգեկան հայեցուածքներու (մտմտալու), երեւակայելու եւ բմբռնելու անցնիլ սկսած է, եւ ժպտելովն ու լալովը՝ իր հոգեկան գործունէութեան (հոգւոյն գործելու սկսելուն) յայտնի ապացոյցը անով կը ցուցնէ, որ իր բմբռնումներն ու մտմտութիւնները դրսանց կը յայտնէ՝ սորված բառերն առանց կապակցութեան թօթովելով:

Տղան առաջին զգայական պատկերն արտաքին զգայարանքներով կը ստանայ, բայց զգայարանքները յատկապէս գործածելու կարողութիւնն ու իբր թէ ինք զինքը ճանչնալու զօրութիւնը ան ատեն յայտնի կ'ընէ, երբ որ ազատ գործելու կարողութիւնը կը ստանայ, ու զգացած բանը կամ իր զգացմունքը յօդաւոր ձայներով ծանուցանելու գրգիռը կամ կարօտութիւնը կը զգայ:

Տարակոյս չկայ՝ որ տղուն լեզուով կամ կարգաւորեալ խօսքով իր միտքը յայտնելու սկսիլը՝ իր աշ-

խարհքիս վրայ բնելու ամենէն մեծ ու երեւելի քայլն է: Արդ՝ որովհետեւ ամէն մէկ նոր բացուելու կամ աշխատելու սկսող գորութեան շուտ մը ի սկզբան անդ կարգ ու կանոն մը դնել պէտք է, անոր համար աս զգուշութիւնն բնելու է գործելու նոր սկսող լեզուին վրայ ալ. ինչու որ անիկայ մարդուն կենացը մէջ իր մտածութիւններն ու զգացմունքները յայտնի բնելու գործիքը պիտ'որ բլլայ: Աւստի մարդ տղու մը շիտակ խօսիլ սորվեցրնելու համար, երբ որ գործարանական պակասութիւն մը չունի, գլխաւորաբար պէտք է նայի որ անոր թոթովելու սկսած ատենը՝ քովն բլլող անձանց ամէն խօսքը բացայայտ, մաքուր ու հասկանալի բլլայ, ու աշխատի որ տղան ալ անոնց նման մաքուր արտաբերէ ու խօսի *:

Ալեզուին գործածութեան կամ խօսելու մէջ որչափ որ առաջ կ'երթայ տղան, այնչափ ալ յաջողակ կ'ըլլայ իր զգայարանքը գործածելու մէջ, եւ որչափ որ զգայարանքներուն գործողութիւնը կամ յաջողակութիւնը կ'աւելնայ, այնչափ ալ միտքը կը կրթուի, յիշողութիւնը կը մշակուի ու բարոյական զգացմունքը կ'արթննայ: Շատ մեծ, աղուոր ու կրթական պատկերազարդ դիրքը միշտ նոյն ինքն բնութիւնն էր եւ է. բայց ինչպէս Աիկերոն ալ կ'ըսէ, աշուրնիս միշտ սորված բլլալով ու մենք անմտադիր գտնուելով, բնութեան հրաշալիքը բոլորովին մէկ դի կը ձգենք, ամենեւին չենք դիտեր: Հասարակօրէն սովորութիւն մը կըլած է որ բնութեան մէջ գտնուող այլ եւ այլ առարկաները փայտաշէն ու նկարուած պատկերներով պզտիկ տղոց առջեւը կը

* Հասարակօրէն տներու մէջ աս բանիս ներհակը կը տեսնենք. պզտիկ տղու մը հետ խօսուած ատեն՝ միշտ շողորթութեան էի, — մամնիկներով ու կիսկատար խօսքերով անոր ըսելու բաներնին կը հասկըցընեն, եւ ամէն մէկ բառն անոր շիտակ արտաբերել տալու տեղ՝ իրենց արտաբերութիւնն անոր ծուռ խօսքերուն կը յարմարցընեն. անանկ որ երբ որ տղան քիչ մը մեծնալէն կտքը խելքը հասնելու սկսելով՝ մաքուր խօսիլ կ'ուզէ, պէտք է որ իր մայրենի լեզուն նորէն սորվի: Թող օտար լեզուաց բառերով խառն խօսիլը, որուն անպատշաճութեան ու միատակարարութեան վրայ ուրիշ տեղ խօսած ենք:

դրուին՝ որ անոնց ինչ ըլլալն ու անունը սորվին. ասով տղաք թէպէտ զանանք կանուխկեկ կը ճանչնան, բայց շատ անկատար կերպով. ուր ընդ հակառակն նոյն առարկաները բուն բնութեան մէջ տեսնելով ու դիտելով՝ շատ աւելի կատարեալ կը ճանչնան, ինչու որ մարդու ծննդեանէն մինչեւ գերեզմանը բնութիւնն իր ամենէն աղէկ դպրոցն է: Աւստի պէտք է տղան կանուխկեկ բնութեան տաճարը տանիլ, ու անոր մէջ գանուող անբաւ անհամար սքանչելի առարկաներն անոր հետզհետէ ցուցնելով, մտքին մէջ ամենակարող Արարչին գաղափարն արթնցնել. ինչու որ ամէն բարոյական զգացմունքներն աս գաղափարին մէջ՝ իբրեւ իրենց կենդրոնին մէջ՝ կը ժողվին ու կը միանան. եւ նոյն գաղափարը կամաց կամաց կը զարթուցանէ Արարչին մեծարանքը, սէրը, պաշտօնը, երկիւղն ու որդիական հպատակութիւնը:

Միեւնոյն ատեն պէտք է ջանալ որ ներքին զգայարանքներն ալ բացուելու եւ կատարելագործուելու սկսին, այսինքն՝ պէտք է փոյթ տանիլ որ տղան իր ներքին հանգամանքներն ու զօրութիւնները ճանչնալու սկսի. եւ աս կ'ըլլայ՝ երբ որ ծնողք կամ դաստիարակը պատշաճ առիթներու մէջ տղան ան բաներուն վրայ մտադիր կ'ընեն՝ զօրոնք զգացած է, որոնց պատճառաւ յոյս կամ երկիւղ մը ունեցած է: Աս բրած ատեննին՝ նայելու են նաեւ որ տղուն խղճմտանքն արթննալու սկսի, այսինքն՝ աղէկ գործք մը բրած ատենը՝ բարի համարում եւ ուրախութիւն զգայ, իսկ գէշ գործողութիւն մը բրած ատենը՝ ամօթ, զղջում ու ցաւ զգայ, որով տղան կը սորվի աղէկ ու պատշաճ բանին վրայ հաճութիւն իմանալ, գէշ եւ անպատշաճ բանին վրայ տհաճութիւն ունենալ:

Մասնաւորապէս մտադրութիւն պէտք է ընել տղուն զգացած ուրախակցութեան ու ցաւակցութեան եւ աս զգացմունքներուն աստիճանին վրայ, ինչու որ ասոնք սրտին կարեկցութեան ու բարութեան տրամադրութեան ապացոյցներն են, որոնք նաեւ ընկերական սիրոյ կամ եղբայրսիրութեան առաջին աղբիւրներն են: Բայց սրովհետեւ մատաղ տղայ մը կրնայ շատ դիւրաւ մանկական բաներու վրայ շափէ աւելի զգացում ունե-

նալ, խաղալիկի մը կոտորելուն վրայ աւելի ցաւիլ ու լալ՝
քան թէ հօրը ծանր հիւանդութեան վրայ, անոր համար
պէտք է ջանալ՝ որ կարեկցութեան զգացումն ու սրտին
բնական աղէկութիւնը՝ միշտ անշափ դիւրաթեքութենէ
կամ զգայունութենէ հեռու ըլլայ եւ որչափ որ կարելի
է՝ կանուխկեկ մտայ դատման ազդեցութեան տակը
դրուի:

Արտաքին կամ մարմնաւոր զգացմանց շափէ աւելի
ազդեցութիւն ընելուն դէմ՝ զօրաւոր դեղ ու միջոց է՝
արթնցընել ու զօրացընել ան բարոյական զգացմունքը,
որն որ տղայ մը ի բնութենէ՝ աւելի կամ քիչ ունի, եւ
շատ հեղ կանուխկեկ իր վրայ կը տեսնուի:

Ինչպէս որ ամէն տղոց մարմնական ու հոգեկան
զօրութիւնները միօրինակ չեն, ասանկ ալ աղէկի կամ
դէշի հակում ունենալն ամենուն վրայ ի բնութենէ հաւա-
սար ու միօրինակ չէ: Տարակոյս չկայ որ ինչպէս ամէն
կենդանիները նոյնպէս մարդն ալ ի բնութենէ քանի
մը արամադրութիւններ կամ յարմարութիւններ ունի,
որոնք անոր ներքը զօրաւոր յօժարութիւններ ու
գրգիռներ կը պատճառեն, եւ իրենց աղէկութեան
ու դէշութեան աստիճանին ու գործածուելուն հա-
մաձայն՝ մարդու մը ապագայ անձնական հանգամա-
նաց ու նկարագրին կամ բարուցը վրայ մեծ ազդե-
ցութիւն կ'ունենան: Արդ՝ հանդարտ ու իմաստուն դաս-
տիարակի մը բոլոր ջանքն աս պիտ' որ ըլլայ՝ որ աղէկ տրա-
մադրութիւնները կամ յարմարութիւնները յառաջ տա-
նի, հաստատէ ու բանեցընել տայ, իսկ դէշերը՝ որչափ
որ կարելի է՝ արգելէ, բթացընէ ու որոմը ցորենին մէջէն
արմատախիլ ընէ, ջնջէ:

Շատ բարոյական դէշութեան պատճառն ալ
հիւանդութեանց տրամադրութիւն ունենալէն յառաջ
կու գայ, ինչպէս կը տեսնենք՝ որ հիւանդաս տղաք ա-
ռողջներէն շատ աւելի անկարգութիւններու ետեւէ կ'ըլ-
լան: Գէշութեան տանելու պատճառները որչափ որ ա-
ղէկութեան տանողներէն աւելի են, դաստիարակութեան
պաշտօնն ու գործքն ալ այնչափ աւելի դժուար կ'ըլլայ.
Ինչու որ ասանկ պարագաներու մէջ հարկաւոր կ'ըլլայ

շատ աւելի ազդող կամ ներգործող զօրութիւնները
զսպել, ու բանաւոր զօրութեան կամ մտքին կառավար-
ութեան հնազանդեցընել:

Չ զերուն բովանդակին բնական հանգամանքն ու
տրամադրութիւնը եւ գործարանաց կազմութեան որպի-
սութիւնը շատ մեծ ազդեցութիւն ունի տղուն ներքին
հանգամանաց կամ սրտին որպիսութեան վրայ, ուստի
եւ ի բնութենէ վախկտա ու անվախ տղաք կը գանուին,
թէպէտ եւ ամէն տղոց վրայ առ հասարակ մարդկային
վախի մը կիրքը կամ զգացմունքը կը տեսնուի, եւ շա-
տերը՝ մանաւանդ աղջիկները՝ աս պատճառաւ մինչեւ
ապշութեան մէջ ալ կ'իյնան: Այսպիսի մանկական վախն
ապահովապէս մէկդի բնելու եւ վերցընելու ճամբան է
սիրալիք խրատներով տղան յորդորել ու ժամանակին՝
յարմար օրինակներ իր առջին գնել: Մարդկային վախը
կամ ան ան մարդէն վախնալը փարատելու աղէկ միջոցն
է՝ տղան վարժեցընել կանուխկէկ բարեօրրա ու ազնուա-
բարոյ մարդկան հետ կենսակցելու: Ախտկտութիւնը
միշտ ի բնութենէ չ'ըլլար, շատ հեղ կամաց կամաց ու
առանց իմանալու տղոց սրտին մէջ կրնայ մտնել ու
զօրանալ, անանկ որ ասկից իրենց շատ մեծ ֆիզիքական
ու բարոյական վնասներ կրնան յառաջ գալ*:

7. Ազտիկ տղոց հետ վարուելու կերպն ու հանգամանքը:

Տղան ինք իրեն շատ բանի կարօտութիւն չիզգար
ու չ'ունենար, աս վիճակին մէջ պէտք է թողուլ զինքը,
ինչու որ ասով շատ աղէկ կրնայ կրթուիլ: Տղայ մը իր
մատաղ հասակէն՝ չափաւոր, բարեխառն ու քիչով ա-
պրելու սորվեցընելը շատ օգտակար է ու բարի բարի

* Հարկ չէ հաստեղս մասնաւորապէս յիշել թէ որչափ վնա-
սակար բան է եւ որչափ վնասներ բրած է տղաքը հանգար-
տեցընելու համար անոնց զանազան շինծու վախնալու բաներ
ցուցընել. շատ հեղ փորձով տեսած ենք՝ որ տղայ մը սեւ
մարդ մը տեսնելով (որն որ իր մեծերն իրեն ուղղի-նի-կը
կոչոյ կոչ բսելով՝ զարհուրելի բանի մը պէս նկարած են)
հիւանդութեան մէջ ինկած է, ու վրան յանկարծական գող
մը (հեղ-կ) եկած է:

Տետեւանքներ ունի, եւ ոչ երբեք վնասակար կրնայ ըլլալ :
Եւ որպէս զի տղաք բարի սովորութեամբ իրենք իրենց-
մէ բարեկարգութեամբ ապրելու եւ գործելու վարժին,
պէտք է զիրենք կանուխկեկ չափաւորութեան, կար-
գասիրութեան, ամօթխածութեան, պարկեշտութեան,
Տեղութեան ու համբերութեան վարժեցընել. եւ աս
բանիս մէջ պէտք է նայիլ որ անոնց ներսի դին գէշ յօ-
ժարութիւններ կամ գրգիռներ զարթուցընելու պատ-
ճառները խափանուին. մինչեւ որ կամաց կամաց անանկ
տկարանան կամ թմրին, ինչպէս որ մարմնոյ զօրութիւն-
ները շրանեցուելով կը թմրին :

Ի՞նչ որ մեծերն ու դաստիարակները տղոց Տեա
խոհմութեամբ ու սիրով վարուելու ըլլան, տղաք ալ
աւելի յօժար ու պատրաստ կ'ըլլան հնազանդելու, եւ չէ
թէ միայն իրենց կամքին չկատարուիլը կամ ուզածնուն
չըլլալը հարկաւոր ու անանօրինելի բան մը կը սեպեն,
հապա նաեւ իրենց զգայական բերմունքները, որոնք
միշտ աւելի զօրաւոր են՝ քան թէ իրենց անկիրթ կամ
գեռակիրթ մտքին գործողութիւնները, իրենց ամէն
կերպ յօժարութիւններովն ու կիրքերովը այն սիրոյն պա-
հանջմանցը իբր թէ կը զոհեն. եւ միշտ իրենց հնազան-
դութեան պարտքին տակը կը ձգեն, որն որ պզտիկ տղու
մը վրայ աւելի ազդեցութիւն ունի՝ քան թէ իր անկա-
տար դատումը կամ դատելու զօրութիւնը :

Մնական կամ ֆիզիքական գործքերու մէջ արե-
գակն ինչ զօրութիւն ու ազդեցութիւն որ ունի, տղոց
դաստիարակութեան մէջն ալ բանաւոր սէրը նոյն զօրու-
թիւնն ունի : Աս սէրը սիրաւ կը վառէ ու կը տաքցընէ,
միտքը կը լուսաւորէ, կամքը կ'ազնուացընէ, բնական
կոպտութեան կամ բրտութեան կարծր կեղեւանքը կը
հալեցընէ, եւ կրնամ ըսել որ յատկապէս մարդուս նոր
բաներ հնարելու սքանչելի զօրութիւնն է :

Աս բանաւոր սէրը, որն որ դաստիարակութեան
պաշտօնն ու գործքը՝ հաստատուն ու տղուն մասնաւոր
յարմարութիւններուն համեմատ կարգով մը կը կատարէ,
նոյն կարգին ու օրէնքին հաստատուն սկզբանցը Տետեւե-
լով՝ վարձքն ու պատիժը մեկդի չիձգեր, հապա թէ մէ-

կը եւ թէ մէկալը աղէկ մտածուած չափով ու աստի-
 ճանով կը բանեցընէ: Այսպիսի սէրն աղէկ գիտէ ու կը
 ճանչնայ որ բարոյական հաստատուն բարքը կամ վար-
 մունքը՝ միայն ազատ կամ չբռնադատուած գործողու-
 թեամբ կրնայ ստացուիլ, ուստի եւ տղուն կամքին դո-
 րութեան ու գործելու կերպին պէտք եղած ազատու-
 թիւնը կու տայ: Աս սէրը գիտէ որ կոյր մեղկութիւնն ու
 տկարամիտ ներողամտութիւնը՝ կրթութեւն տղաքը փափ-
 կասէր ու տկարամիտ կ'ընէ, ուստի եւ չէ թէ միայն
 հաստատամիտ արիութեամբ աս կերպ մեծ սխալմուն-
 քէն կը զգուշանայ, հապա նաեւ թող չխտար որ աս
 կտորիս մէջ տղուն վրայ ուրիշ գիաց դէշ ազդեցութիւն
 մը ըլլայ, մանաւանդ երբ որ կը տեսնէ որ տղան յամա-
 ութութեամբ ու շարութեամբ մը իր դաստիարակը կարե-
 կցութեան ու դժութեան կամ շնորհքի ստիպելու
 կ'աշխատի: Արջապէս աս սէրը գիտէ որ անչափ խստու-
 թիւնը, բռնաւորական ստիպումը, խստասրտութեամբ
 ծեծելն ու անօթի պահելը՝ տղաքը շարամիտ ու կեղ-
 ծաւոր կ'ընէ:

Ինչ բան որ տղու մը թոյլ տալը կամ շնորհելը
 անբնական ու անպատշաճ կ'երեւայ՝ ան բանը պէտք է
 միշտ հաստատութեամբ ու խոհական ծանրութեամբ ի-
 րեն զլանալ. մէկ անգամ արգելուած բանն ուրիշ ան-
 գամ չշնորհել. յանդիմանութիւնը յանցանքին համե-
 մատ կամ յանցանքին չափին համաձայն ընել. եւ պա-
 տիժը ոչ երբեք չափէն աւելի տալ * : Թէպէտ եւ մար-
 դուս կեանքին մէջ՝ ինչ բանի մէջ ըլլայ նէ ըլլայ՝ եր-
 կու ծայրը բռնելը կամ կենալը միշտ անշահ ու շատ մնա-
 սակար է, բայց դաստիարակութեան մէջ իր անհնարին
 մեծ մնասները կը ցուցընէ. որովհետեւ աս բանս հա-
 սարակօրէն ամէն տկարութիւններուն, բարոյական պա-

* Անգամ մը Պղատոն փիլիսոփան իր անհնազանդ գերիին դէմ
 շատ բարկացած էր, ուստի եւ գաւազանը ձեռքն առաւ ծե-
 ծելու համար: Նոյն վայրկենին իմաստուն փիլիսոփան մտա-
 ծեց որ ամենէն աւելի դատաւորի մը գլխաւոր պարտքն է
 ամէն կիրքերէ ազատ ըլլալ, ուստի գաւազանը մէկդի թող
 տալով՝ յանցաւորին ըսաւ. «Թէ որ բարկացած չըլլայի՝
 հիմայ գքեզ կը պատժէի»:

կատու թիւններուն կամ մտու թիւններուն ու անկարգու-
թիւններուն սերմը սրտին մէջ կը անկէ, որուն հետեւանքն
ու պտուղները շատ տարիներէ ետքը դուրս կ'ելլեն:

Յաւալի փորձով կը տեսնենք՝ որ շատ հեղ մեծ
մայրերը կամ մօրաքոյրները տղոց վրայ վերակացու թիւն
ընելով, անոնց ամէն ուղածն ու բաղձացածը կատարել
կու տան. որով եւ տղաք ամբարտաւան, ինքնահաւան
ու անձնասէր կ'ըլլան, եւ կ'ուզեն որ ամէն մարդ ի-
րենց կամքին կամակատար ըլլայ, ուրիշին ուղածը կ'ար-
համարհեն, ուրիշներուն իրաւունքն ու բաղձանքները
կուպտութեամբ ոտքի տակ կ'առնեն: Եւ որովհետեւ
երբ որ տղայ մը պղտիկուց հակառակասէր ու իր կամքը
կատարող ըլլալու կը սորվի, հասարակօրէն իբրեւ հաս-
տատամիտ ու տաղանդաւոր կը սեպուի, անոր համար
յայտնի բան մըն է որ ասանկ անկարգ աշակերտները՝ ետ-
քէն ինքնահաճ որդի, խստասիրտ ամուսին, ամբարտաւան
կառավարիչ, գէշ կամ անկիրթ մայր կ'ըլլան: Աւելի
զգուշութիւն պէտք է ընել երբ որ տղաք հիւանդոտ ու
տկար կ'ըլլան. ինչու որ այսպիսիներուն վրայ մարդ բնա-
կանապէս կարեկցութիւն զգալով, իրենց հետ խնայե-
լով կը վարուի, եւ մէյ մը որ տղու մը երես տալու ըլլաս,
անկից ետեւ ալ միշտ աս կերպ վարմունքը կը սիրէ ու
կ'ուզէ, եւ շատ դժուարութեամբ ու ակամայ առջի
բռնուած կանոնաւոր կարգին կը հետեւի:

Պղտիկ տղան փոքր պարգեւ մը առնելու ըլլայ
նէ՛ շատ կ'ուրախանայ, եւ կը կարծէ որ ասիկայ վարձք
մըն է, զորն որ ինք հնազանդութեամբ, առջեւը դրու-
ած կարգին հետեւելովն ու բարեբարութեամբն ար-
դիւնաւորած է: Ասիկց՝ ուրիշ հետեւանք կամ կանոն մը
կ'ելլէ մեծերուն ու դաստիարակներուն համար, այսինքն
տղոց երբեք շատ շատ պարգեւներ չտալ, կամ թէ
զանոնք փոքր հնազանդութեան մը համար անմիջապէս
չվարձատրել, ինչու որ ասանկ եղածին պէս՝ տղուն սրտին
մէջ ինքնահաւանութիւնը կը մեծնայ ու կ'աւելնայ, եւ
ասանկով անձնասիրութիւնը, հպարտութիւնը, ինք զին-
քը մեծ սեպելն ու միշտ բան մը ձեռք ձգելու բաղ-
ձանքը՝ իբրեւ գէշ սերմ սրտին մէջ կը ցանուի:

Ասոր համար շատ հարկաւոր բան է վարձք ու պատիժ տալու մէջ աղէկ ու կանոնաւոր շափ մը պահել, եւ ամէն մէկ քաղաքավարական վարմունքի համար, կամ ամէն անգամ դասն աղէկ սորված ըլլալուն համար՝ անոր թանկագին խաղալիկ մը, նոր հագուստ մը շտալ, կամ պարտելու եւ զբօսանքի շտանիլ: Ասոր հակառակն ալ պէտք չէ տղան բերնէն անզգուշութեամբ անկարգ խօսք մը հանածին, եւ փոքր ծուլութիւն կամ զանցառութիւն մը, անզգուշութիւն մը, կամ իր հասակակիցներուն հետ ընդդիմաբանութիւն կամ կռիւ մը բրածին պէս, անմիջապէս մեծ խտուրտութեամբ պատժել: Բայց երբ որ տղան հեղ մը սուտ կը զրուցէ, դաստիարակը քիչ մը ատեն անոր խօսքերուն շուտ մը չհաւտայ. երբ որ իր հասակակիցներուն հետ խաղաղութեամբ շիվարուի, սիրած ընկերին հետ կենակցիլ կամ խօսիլ շտայ. չափէ աւելի ուտել կամ հանգչիլ ուզողը՝ խաղալիկէ կամ կերակրէ մը, ծուլութիւն ընողը՝ հանգստի ժամէ մը զրկէ. եւ եթէ տղայ մը աս տեսակ պակասութիւնները կամ անկարգութիւնները շատ հեղ ընելու ըլլայ, մարմնաւոր պատիժ մ'ալ տայ: Իսկ արժանաւոր պատժոյն ատենն անյնելէն ետքը՝ նորէն տղուն հետ քաղցրութեամբ վարուի, եւ երբ որ տղան կը խոստանայ որ ինք զինքը կը շտկէ ու մէյ մ'ալ այն յանցանքը չ'ընէր, ինքն ալ յայտնի հասկըցրնէ որ ալ իրեն հետ հաշտուած է: Բայց մեծ սխալմունք կ'ընէ, եթէ տկարամիտ թուլութեամբ մը շողքորթելու կամ երես տալու ըլլայ, կամ թող տայ որ իր առջեւ տղան պատժուելուն վրայ վիճէ:

Վաստիարակութեան մէջ անխոհական ու անզուտ խտուրտութիւն բանեցրնելը՝ չէ թէ միայն հոգին, հապա նաեւ մարմինն ալ տկար ու խեղ կ'ընէ. եւ փորձով տեսնուած բան է որ տղայ մը շատ հեղ ու սաստիկ պատժուելուն համար՝ իր սրտին մէջ ունեցած տխրութեան ու ցաւերուն գէշ հետեւանքն ու արտաճաննները դէմքին վրայ անջնջելի պահած է, ուստի եւ աս կերպ վարմունքն անոր դէմքին աղեղութեան պատճառ ըլլալէն դատ, միանգամայն սիրտը դառնացած ու

վշտացած ըլլալով, պատժոյն վախէն կեղծաւորութիւն
 ընելու եւ սուտորուց ըլլալու վարժելով, հողւոյն վրայ
 ալ թուաւոր սերմեր ցանուած մնացեր են: Շատ բութ
 մտքով տղաք՝ որոնք եթէ բանաւոր ու խելացի ճամբով
 մը կրթուած ըլլային, հասարակ մարդիկներէն աւելի
 խելացի կրնային ըլլալ, կուսիտ ու խիստ մարդկան ձեռքն
 իյնալով ու անոնցմէ կրթուելով, բոլորովին ապուշ ու
 ախմար կը մնան: Ծնողք միշտ յիշելու եւ մտածելու են
 որ այն դառն արտասուքը՝ զորոնք իրենց տղոց աչքէն
 խիստ վարժուցրով կամ չափէ գուրս պատիժներով կը
 թափեն կամ ուրիշներուն թափել կու տան, ետքէն ի-
 բրեւ շարժարիչ պատուհաններ իրենց վրայ կու գան, եւ
 իրենց սրտին մէջ սոսկալի ցաւ ու զղջում կը պատճառեն,
 յիշեցրնելով որ անիրաւ գանուեր են այն անմեղներուն
 դէմ՝ զորոնք հաստատուն համբերութեամբ, սիրով ու
 իրենք զիրենք զսէշելով, կրթութեան դժուարին ճամբուն
 վրայ առաջ տանելու էին: Գոչէն Գաղղիացին աղուոր
 խօսք մը կը զրուցէ, որն որ ծնողաց համար շատ ազդող
 ըլլալուն՝ հոս կը յիշեմ. «Տղաք, կ'ըսէ, ծնողաց ամենէն
 մեծ բարիքն ու դանձերն են, բայց հազարապատիկ աւել-
 ի աղէկ է՝ ամենեւին տղաք չունենալ, քան թէ ունե-
 նալէն ու մեծցրնելէն ետքը՝ անոնց մեռնիլը տեսնել ու
 անոնցմէ ետքը աշխարհքիս վրայ ապրիլ»: Աս խօսքն
 ան տղոց համար ալ կրնանք զրուցել, որոնք խիստ պա-
 տիժներ ընդունած կամ չափազանց խտուրթեամբ մեծ-
 ցած ըլլալով, գէշ կ'ելլեն, խեղ ու դժբախտ կ'ըլլան:

502.

Տ. Պզտիկ տղաքը դաստիարակելու համար դիտուելու
 դիտաւոր հանգամանքները:

Հասարակօրէն սովորութիւն եղած է՝ որ մարդ իր
 զաւկին համար դաստիարակ ընտրած ատենը՝ անոր ար-
 տաքին ձիրքերուն կամ որպիսութեան նայելով, դատում
 կ'ընէ, անոր աղէկ քաղաքավար ու կրթուած ըլլալը՝ ա-
 մենէն մեծ արդիւնքն ու կատարելութիւնը կը սեպէ, եւ
 անոր դրսանց երեւցող վայելութեան միտ դնելով՝ ինչ-
 պիտի մոլի ու ապականած բարք ունեցող մարդ ըլլալը

չիղիաւեր, ուստի եւ իր զաւակը բողորովին անոր ձեռքն
ու խնամքին կը յանձնէ: Ասոր վրայ ետքը երկայն
պիտ'որ խօսինք:

Վաստիարակութեան մէջ գիտելու արժանի դէպք
մըն ալ կայ. երբեմն տղու մը ծնողքը մեռած ըլլալով,
իրեն խնամակալու ըլլող անձ մը կամ ազգական մը ա-
նոր բարիք ընել կարծելով, աւելի կը նայի որ ծնողացմէ
մնացած ստակը կամ ժառանգութիւնը խնայողութեամբ
գործածէ՝ քան թէ այն որք տղուն աղէկ դաստիարա-
կութիւն ընդունել տայ: Այսպիսի տղաք իրաւցընէ կրկին
որբացած պէտք է սեպել, որոնք ասանկ կիսկատար
խնամածութեամբ ու առանց հարկաւոր կրթութեան
մեծնալով, իրենց ապագան շատ աղէտալի ու դժբախտ
կրնայ ըլլալ:

Աւրիշ ասոր ներհակ կտոր մըն ալ կայ գիտելու
արժանի, որն որ զարմանալու բան մը կ'երեւայ. այսինքն՝
թէպէտ եւ տղաք ամէն դիաց մարմնաւոր կամ ֆիզիքա-
կան ու բարոյական վտանգներու մէջ կը գտնուին ու շատ
դիաց իրենց վրայ գէշ ազդեցութիւններ կ'ըլլան, սա-
կայն շատերուն ետքը աղէկ կ'ըլլայ, եւ աղէկ կը մեծ-
նան, բարի կ'ըլլան: Իրաւցընէ ասիկայ աստուածային
նախախնամութեան մէկ սքանչելիքն է, որուն բարերա-
րութեամբը, ի բնէ ալ աղէկ ձիրքեր կամ բնաւորու-
թիւն մը ունենալով, անփորձ ու տկար տղան անհամար
ալէկոծութիւններով խռոված աշխարհքիս ծովուն մէջ
առանց ժայռերու զարնուելու՝ առաջ կ'երթայ ու վերջա-
պէս ապահով նաւահանգիստ մը կը հասնի:

Տղայ մը երբ որ բարերախտ կը գտնուի, այսինքն
(չեմ ըսեր որ հարուստ ու ազնուական ծնողացմէ ծնած
կ'ըլլայ, հապա) բանաւոր ճամբով ու կրթութեամբ իր
առջի տարիները կ'անցընէ, ասկից զատ՝ առողջ բնու-
թիւն ու աղէկ հոգեկան կամ մտաւոր ձիրքեր ու ընդ-
ունակութիւն կ'ունենայ, չէ թէ միայն իր անձին հա-
մար երջանկութեան ճամբան գտած կը սեպուի, հապա
նաեւ իր մերձաւորներուն, մանաւանդ թէ բոլոր իր ազ-
գին ալ բարերախտութեան կամ երջանկութեան միջ-
նորդ ու առաջնորդ ըլլալու յոյս կու տայ: Բայց ինչչափ

որ ի բնութեանէ զանազան ձիրքերով զարգարած ըլլայ, անոնց աղէկ յաջողելուն կամ յաջողակութեամբ ի գործ դրուելուն ու իրենց ազդեցութիւնը ցուցնելուն համար պէտք է որ իր ծնողաց տանը մէջ հարկաւոր եղած առաջին կրթութեան սկզբունքը (զիսաւորաբար բարի օրինակներով ու անմասն առաջնորդութեամբ) ընդունելէն ու սորվելէն ետքը, աւելի եւս դժուարին ու զանազան պատերազմներ առթող գործնական կրթութեան մէջ մտնէ, այսինքն՝ աշխարհքիս ալէկոծութիւններուն մէջ խնամող ձեռքի մը փաթթուելով, անվտանգ ճամբու մը վրայէն քալէ, ուր նոյն իսկ իր ներքին զգացմունքներուն յաղթելով՝ անթերի կատարէ այն ամէն պարտքերը՝ զորոնք աստուածային ու մարդկային օրէնքները, իր վիճակին հանդամանքն ու իր մեծերուն կամ տէրերուն կամքն իր վրայ կը դնեն:

Բարեբախտ տղայութիւնը, ինչպէս որ վերը ստորագրեցինք, նաեւ Հայրենասիրութեան մաքուր աղբիւր մը կ'ըլլայ: Տղայութեան ատեն սիրտը կակուղ ըլլալուն, եւ հոգին իր մաքրութեամբն ամէն զուարճալի եւ ուրախարար ազդեցութիւնները յօժարութեամբ ընդունելուն, բարեբախտ վիճակի մը բարեբար ազդեցութիւններուն տպաւորութիւնները մարդուն իբր անկորուստ ժառանգութիւն ու ստացուած մը կ'ըլլան: Ասոր համար փորձով կը տեսնենք որ մարդ ուր տեղ որ իր կենաց առաջին անխառն ու մաքուր զուարճութիւնները ստացած է նէ՛ ան տեղւոյն քաղցր ու անուշ յիշատակներն իր սրտին մէջ անջնջելի կը պահէ: Աւստի եւ մարդուն բուն ներքին ու ամենէն սիրական զգացմունքները միշտ ան մարդիկներուն ու ան տեղերուն կամ երկրին վրայ հաստատ կը կենան՝ ուր եւ որոնց մէջ իր կենաց սկիզբը դանուած է *:

* Շատ մարդիկներ, մանաւանդ լեռնային մաքուր օդով տեղերուն բնակիչները, երբ որ իրենց հայրենիքէն դուրս ելլելու ըլլան, մասնաւոր տկարութեան կամ ներքին հիւանդութեան մէջ կ'իյնան, որն որ հայրենեաց կսկիծ կամ ցուկըսուի, եւ եթէ ասիկայ արմատ կապելու եւ հիննալու ըլլայ՝ մինչեւ հալեւմաշի կը տանի ու կը մեռցնէ: Ասոր համար կը տեսնենք որ նոյն իսկ զինուորաց մէջ աս հիւանդութիւնը

Ինչպէս որ հմուտ բժիշկ մը իր ձեռքն եղած հիւանդին վրայ մինչեւ ետքի շունչը կ'աշխատի եւ ոչ երբեք բժշկելու յոյսը կը կորսունցընէ, ուստի եւ իր արուեստին ամէն միջոցները մինչեւ վերջին վայրկեանն ի գործ կը դնէ, ասանկ ալ իմաստուն դատախարակ մը պէտք չէ ամենեւին իր ձեռքն ունեցած աշակերտին կամ տղուն կրթութեան յաջողելուն ու բարի վախճան ունենալուն վրայ յուսահատիլ, թէպէտ եւ շատ տարիներ աշխատելէն ու կերպ կերպ նեղութիւններ քաշելէն ետքը մեծ օգուտ մը տեսած չըլլայ: Մենք չենք կրնար ամենեւին իրաւունք տալ ան խօսքին՝ զորն որ ոմանք կ'ըսեն թէ ան կամ ան տղան անանկ արհամարհող, ինքնահաւան, պինդգլուխ, շար, դիւրագրգիռ, գոռոզ, միտքը դրածէն կամ սորվածէն ետ չկեցող, ապուշ, խորամանկ է, որ մարդ չիկրնար անոր մտքին մէջ աղէկ բան մը խոթել, զինքն աղէկի դարձընել եւ կորստեան ճամբէն դուրս հանել: Իմաստուն ու խորագէտ դատախարակն ինչ կ'ընէ չ'ընէր՝ մէկ դիպց ճամբայ մը միջոց մը կը դռնէ՝ իր աշակերտին սրտին մէջ մտնելու եւ յայանապէս տեսնելու որ, ինչպէս իմաստուն բժիշկ մը աղէկ ըսաւ, տղու մը ոչ սիրտը մարած ու ածիւնացած ածուխ է, ոչ ալ իր հոգին՝ Գանայիդեանց անյատակ տակառն է, հապա ինչչափ պակասութիւններ ալ ունենայ, կրնայ ուղղուիլ ու ճամբու դալ: Արնամ ըսել որ ասանկ ի բնութենէ խտաբարոյ ըլլող կամ ետքէն անկրթութեամբ աւրուած ու ճամբէ ելած տղու կամ պատանւոյ մը վիճակը մեծ կամ պզտիկ մեղաւորի մը դարձի գալուն ու շիտակուելուն կը նմանի: Փորձը կը վկայէ որ ամենէն մեծ շարագործներն ալ աղէկի դարձած են: Այսպէս ալ ի սկզբան գէշ ըլլող կամ աւրուած տղաք շատ անգամ խիստ աղէկ ու բնտիր մարդիկ ու քաղաքացիք եղած են, ուր որ խոհեմ մարդ կամ դատախարակ մը

կամ բարոյական տկարութիւնը մտնելու ըլլայ նէ՝ իրենց մեծերը զիրենք զինուորութենէ կը հանեն ու հայրենիքին կը խաւրեն, վասն զի հաստատ կը տեսնեն որ եթէ ասոնք աւելի երկայն ատեն իրենց հայրենիքէն հեռու մնալու ըլլան, ասուգիւ անպիտան պիտ'որ ըլլան ու ետքը պիտ'որ մեռնին:

պատշաճ ատենին ու յարմար ճամբով մը անոնց ձեռքէն
բռնած ու առաջնորդութիւն բրած է* :

9. Տղոց ներքին կամաց ու զգացմանց կրթութիւնը :

Իրաւի ամէն ազդեցութիւններու բնգունակ ու
յարմար բլլող տղաք կանուխկեկ կը սորվին ճշմարիտը,
բարին ու վայելուչը. բայց նաեւ ազէկ ձիրքեր կամ
բնաւորութիւն ունեցողներուն վրայ ալ շատ հեղ յամա-
ռութիւն ու ինքնահաւանութիւն կը գտնուի : Աս բանիս
հասարակօրէն մեծերը պատճառ տուած կ'ըլլան՝ տղան
չափէ աւելի գովելով, անոր մէկ ազէկ գործքը կամ վար-
մունքը չափէ աւելի վեր վերցրնելով, որով եւ տղան ալ
իր անձին ու բրածին վրայ մեծ համարում կը ստանայ,
կը սնտափառի ու ինք զինքը բանի տեղ կը դնէ : Ասկից կը
տեսնուի՝ որ սխալ մը կամ պակասութիւն մը շատ ան-
գամ զանազան ձիւղերու կը բաժնուի, որոնք իրարու իբր
պատճառ ու գործք կ'ըլլան ու միշտ իրարու հետ աւելի
եւս կը կապակցին : Աւստի պէտք է ամէն մէկ շարիքին
կամ գէշ սովորութեան բուն արմատը քննել գտնել,
ու հոն տեղը խոհեմ գաստիարակութեան կանոններն ու
միջոցները բանեցրնելով՝ այն արմատը փրցրնել ու շարը
բարւոյ գարձրնել : Չոր օրինակ ինքնահաւան եւ ուզածը
կատարելու ջանացող տղու մը կամքը կտարելու համար՝
պէտք չէ շատ շատ խօսքերով ժամովաճառ բլլալ, եւ
ոչ անմիջապէս դաւազանն անոր վրայ երկրնցրնել, հա-
պա իսկզբան անգ անոր ուզածը հաստատութեամբ ու
ճանրութեամբ զլանալու է եւ թող տալու չէ որ կամքը

Սշխարհքիս պատմութիւնը կամ երեւելի մարդկան վարքը
կարգալու բլլանք՝ կը տեսնենք որ քանի քանի անուանի
մարդիկ իրենց պզտիկութեան ու երիտասարդութեան ատենը
անանկ գէշ վարմունք ու կեանք ունեցեր են, որ ոչինչ կամ
շատ քիչ յոյս կու տային ազէկ ու օգտակար մարդ բլլալու,
կամ թէ յայտնի ըսեմ՝ ետքէն եղածներնուն եւ ոչ մէկ
չուքն իրենց վրայ կը տեսնուէր. սակայն յաջողակ առթով
մը իմաստուն առաջնորդի կամ գաստիարակի մը ձեռք իյ-
նալով, փոխուեցան ու իրենց անձին, ազգին ու աշխարհքի
օգտակար անձինք եղան, նաեւ իրենցմէ ետքիններուն մեծ
անուն թողուցին :

կատարուի. իսկ ետքը հնազանդութեան ու խոնարհու-
թեան առաքինութիւններն անանկ ազդու խօսքերով՝ իբր
ամէն շար կիրքերու եւ յօժարութիւններու բժշկիչ դեղ՝
անոր առջեւը դնելու է, որ տղան համոզուի ու սիրան ալ
շարժի եւ իբր թէ իր պակասութիւնն ու ան խօսքերուն
ճշմարտութիւնը իր աչքովը տեսնէ: Աս ինքնահաւանու-
թիւնը բժշկելու համար աղէկ կ'ըլլայ նաեւ տղուն յայ-
տնի ցուցրնել՝ թէ ինք իրաւցրնէ պէտք է ամէնալ, ո-
րովհետեւ իր գիտնալու բաներուն մէջ դեռ շատ պա-
կասութիւն ունի. եւ միանգամայն զուրկ կը դանուի այն
առաքինութիւններէն՝ որոնք երջանիկ կեանքի մը ճշմա-
րիտ ու հաստատուն հիմերն են: Արժ ըսեմ, անանկ
ճամբայ մը պէտք է բռնել՝ որ յանցաւոր տղան իր դաս-
տիարակին հանդարտ վարմունքէն ու պատկառելի խօս-
քերէն յայտնի ճանչնայ ու զգայ իր նուաստութիւնն ու
ոչնչութիւնը:

Արչափ կարելի է կանուխկեկ պէտք է սկսիլ տղուն
սորվեցրնելու՝ թէ ինչ բան հարկաւոր ու վայելուչ է, եւ
անոր սրտին մէջ պատուոյ ու ամօթոյ զգացմունքը զար-
թուցանել, եւ ասանկով անոր բոլոր մտադրութիւնն ու
գործելու փոյթը մէկ դիպց հաւատքի վրայ ու մէկ դիպց
օրէ օր ստանալու համոզման վրայ շիտկել ու հիմնել:

Տղուն կամքին զօրութեան վրայ ամենէն աւելի
ազդող բանը՝ բարի հաւատքն է. ասոր վրայ կը հաստա-
տուին ան ամէն առաքինութիւնները՝ որոնք հաստատուն
երջանիկ գոյութեան կամ կենաց հիմերը կ'ըլլան, եթէ
դաստիարակը ջանայ որ կրթութեան ատենը միայն տղուն
յիշողութիւնն առաքինութեանց վրայ զըցուած առա-
կաւոր խօսքերով շճանրարեռնէ, հապա անոր միտքն ալ
աս կտորիս մէջ գործել տայ, եւ անոր հասկըցրնէ ու ի-
մանալի ընէ այն առաքինութիւնները՝ որոնք ճշմարիտ
հաւատոյ պտուղներն են: Երբ որ աս հաւատքը տղուն
զգայութիւնն իրաւանց ու պարտուց վրայ կը զարթուցա-
նէ, անկից ետքը պէտք է կամաց կամաց զանազան օրի-
նակներով մեկնել ու ցուցրնել որ առանց իրաւանց ու
պարտուց, ուստի եւ առանց որոշ օրէնքի, ամենեւին
ընդհանուր ուղիղ կարգ կանոն, եւ ընդհանուր ու մաս-

նաւոր երջանկութիւն չիկրնար յաջողիլ ու հաստատ
մնալ: Ասով տղան՝ բարի հաւատքին ուժովը կամ ազ-
գուութեամբը ճանչցած ու գործադրած բանը՝ իր բա-
նաւորութիւնն աւելի յառաջ երթալով ու կրթուելով,
հաստատուն կը տեսնէ ու կամաց կամաց իր կենաց
անփոփոխելի կանոն կ'ընէ: Ասանկով զգացումը համազ-
ման կը դառնայ, որով եւ կրկին աղբիւր կ'ըլլայ Աստու-
ծոյ սիրոյն ու երկխղին, ինքնաճանաչութեան, ընկերա-
կան սիրոյ, արդարասիրութեան, մեծանձնութեան, եւ
այլն, միանգամայն բարկութեան, նախանձու, ազահու-
թեան ու վրէժխնդրութեան կիրքերուն դէմ անխոր-
տակելի ամբարտակ մը:

Երաւունքը հաստատութեամբ ու աղէկ գիտնալը՝
որն որ տղու մը իմ ու քոն խօսքերուն բուն միտքը ծա-
նօթ կ'ընէ ու յարգել կու տայ, զանիկայ գողութիւն
ընելու փափագ կամ հակում ունենալէն ապահովապէս
կը պահպանէ: Ար տեսնենք որ աս հակումը երբեմն
պղտիկ տղոց վրայ շատ սաստիկ ու զօրաւոր է, որն որ մեր
ապականեալ բնութեան յատուկ պակասութիւնն ու
տկարացեալ կամքին սխալմունքը սեպելով, կանուխկեկ
պէտք է ամէն հնարք բանեցրնել ու իբրեւ թիւնաւոր
որոմ մը տղուն սրտին մէջէն արմատախիլ ընել:

Երաւանց զգացումն ու ծանօթութիւնը՝ թէ բա-
րի հաւատքին ուժովը եւ թէ օրէ օր աւելցող մտաց կրթ-
թութեամբը՝ տղուն սրտին մէջ հաստատութեամբ հիմ-
նուելէն, եւ որչափ կարելի է գործադրուելու սկսելէն
ետքը, ալ տղուն վրայ շատ խստութիւն բանեցրնել
հարկ չկայ՝ որ հետզհետէ փութով ու հաստատու-
թեամբ ան ամէն բաները սորվի, զորոնք պարտական է
գիտնալ՝ իր հասակին, վիճակին, ընդունակութեան ու
պարտուցը համաձայն. ինչու որ ինքն ալ անկից ետքը
անփոյթ չ'ըլլար իր ընդունած ու վայելած բարերարու-
թիւններուն գիմացը պարտուպատշաճ ու իրաւացի շնոր-
հակալութիւնը ցուցրնելու եւ հատուցանելու:

Երախտագիտութեան սքանչելի զգացումը, որն որ
շատ մարդկան սրտին մէջ չիգանուիր, տղոց փափուկ ու
դիւրազգաց սրտին մէջ շատ դիւրաւ կրնայ զարթուցուիլ,

երբ որ իր մեծերը՝ իրեն ամէն կերպ սիրով հարկաւոր
օգնութիւնը, գութն ու բարերարութիւնները ցուցնե-
լով, իր բոլորովին անկարող ու օգնութեան կարօտ բը-
լալը կը հասկըցընեն, եւ միանգամայն մտքին մէջ կը խո-
թեն որ պղտիկ տղայ մը՝ անբան կենդանիներէն շատ
աւելի ու շատ երկայն ատեն՝ անկարող եւ ուրիշներուն
օգնութեան կարօտ է, նաեւ իր մարմնոյն ու հոգւոյն
կողմանէ անթիւ անհամար կարօտութիւններ ու հար-
կաւորութիւններ ունի: Աւտի եւ բոլոր իր կենաց մէջ
անկեղծ ու ջերմագին երախտագիտութիւն ու շնորհա-
կալութիւն ցուցընելու պարտական է անոնց՝ որոնք իր
ժամանակաւոր ու յաւիտենական երջանկութիւնը վաս-
տըկելու հարկաւոր բլլող միջոցներն ու ճամբաներն ի-
րեն կը ցուցընեն * : Երախտագէտ սիրտ մը չէ թէ միայն
խոնարհ համեստ ու բարերարելու փափաղող կ'ըլլայ,
հապա նաեւ մեծ ուրախութիւն ու զուարճութիւն կը
զգայ երբ որ առիթ ու միջոց գտնելու ըլլայ՝ իր բարե-
րարաց ու բարեկամաց փոխանակաւ ծառայութիւն ու
օգնութիւն ընելու, զանոնք շատ հեղ իր մասնաւոր
երախտագիտութեան ու անմտաց յիշատակին նշաննե-
րովն ուրախացընելու, եւ գրեթէ իրեն մասնաւոր սովո-
րութիւն կամ բնաւորութիւն մը կ'ընէ առ հասարակ ամէն
մարդուն սիրտը շահելու եւ իրեն բարեկամ ընելու:

Տղոց համար շատ օգտակար բան կ'ըլլայ, եթէ
մեծերը կամ ծնողք ու գաստիարակները անոնց սրտին
մէջ փոյթ ու ջանք մը զարթուցանեն՝ պարապութեան
կամ հանգստի ժամանակը փոքր փոքր արուեստական
զբաղմունքով մը անցընելու. ինչպէս, խաւաքարտէ
զանազան ձեւեր կտրել, թղթի վրայ այլ եւ այլ բաներ
նկարել, փայտէ բան փորել, եւ այլն, ասանկ բաներով

* Հին Պարսիկները երբ որ կը տեսնէին որ տղայ մը իր ծնո-
ղացը, գաստիարակներուն ու վարպետներուն ապերախտու-
թիւն կ'ընէ, առանց ներողութեան՝ մահուամբ կը պատ-
ժէին. ինչու որ կ'ըսէին թէ ապերախտ մարդ մը ոչ աս-
տուածներէն կը վախնայ, եւ ոչ մարդիկն ու իր հայրենիքը
կը սիրէ: — Մեծն Աղեքսանդր Մակեդոնացին իր վարպե-
տին՝ Արխաոտէլ փիլիսոփային՝ գաստիարակութեան կամ
կրթութեան ատենը ընդնալէն կտրը՝ հազար տաղանդ
(10.000.000 գահէկան) պարգեւեց:

քիչ մը ստակ վաստրկելու փոյթ ունենալ, եւ ան վաստրկած փոքր շահուն յարգը ճանչնալ: Բայց աս բաներուն մէջ աղէկ առիթ մը գտնելով՝ իրենց հասկըցընել պէտք է որ ստակն ու ստացուածը որչափ յարգ ունի, եւ երբ կրնայ օգտակար ըլլալ, եւ թէ ասոնք մինակ իրենք իրենցմէ մարդը երջանիկ չեն կրնար ընել: Աս առիթով կրնայ դաստիարակն իր աշակերտին՝ ազահաւթեան մալութեան վրայ, ինչպէս նաեւ մսխողութեան վրայ օգտակար խրատներ տալ, եւ մասնաւոր յարմար օրինակներով ասոնց երկուքին ալ մնաստակար ըլլալն աղէկ մը հասկըցընել*:

Եւ որ աղաք իրենց պարգեւուած կամ իրենց աշխատութեամբ վաստրկած ստակը քովերնին պահելու ըլլան, շատ դիւրաւ կրնայ պատահիլ որ բնականապէս խաղի, զբօսանքի եւ սա նա ուտելու հակում ունենալնուն՝ ադ ստակը կամաց կամաց մսխեն ու լմըցընեն: Ասոր մէջ ստակի կորուստէն շատ աւելի մնաստակար ու ցաւալի բան սեպելու է իրենց բարոյական մնասը, այսինքն՝ չար սովորութիւններ ստանալնին: Եթէ աղաք խնայողութեան օգուտները, ինչպէս նաեւ բարերարութիւն ընելուն օգուտները հեղ մը սորվին, պզտիկուց կը վարժին՝ ստակն աղէկ ու պէտք եղած տեղը գործածել, որն որ ետքէն դժուարաւ կրնային սորվիլ: Իսկ եթէ ասոր մէջ իրենց հետ թուլութեամբ ու անզգուշութեամբ ճամբայ բռնուելու ըլլայ, իրենք ալ բանի մը յարգը ճանչնալ չեն սորվիր, եւ ձեռուրնին եկածն անհոգութեամբ ու թեթեւամտութեամբ կը փճացընեն, ինչպէս զգեստները, կարասիքը, գիրքերը, խաղալիկները, ամանները, եւ այլն: Եւ աս բանս կամաց կամաց իրենց վրայ չար սովորութիւն մը ըլլալով, իրենց ծնողաց տունը ձեռուրնին անցած բաներն ապականելէն զատ, կը սկսին օտարաց տներուն մէջ եւ ուրիշներուն ստացուածքին վրայ ձեռք երկընցընել եւ զանոնք անգթութեամբ, չարութեամբ ու մասնաւոր ուրախութեամբ մը ապականել ու աւրչարկել:

* Աս բանիս վրայ սուրբ աւետարանին մէջ պատմուած անասակ որդւոյն առակը շատ ազդու եւ ընտիր է:

Թէ որ տղաք պղտիկուց մէյ մը կը սորվին ու կը հասկընան՝ որ ամենէն պղտիկ անասնիկն ալ ցաւ կը զգայ եւ իր կենաց կամ գոյութեան վրայ կ'ուրախանայ, ան ատեն ալ շատ դիւրին է կենդանիները շարշարելը խափանել, որուն տղաք մեր կարծածէն աւելի մեծ յօժարութիւն ունին, ինչպէս հազար ու մէկ օրինակներ տեսած ենք ու կը տեսնենք: Ան շատ տղաք ալ՝ որ քանի մը տեսակ կենդանիներու վրայ մասնաւոր սէր ու համակրութիւն կը ցուցնեն, որն որ շատ դիւրութեամբ կրնայ կանայցի դիւրագոյացութեան կամ շափաղանց ցաւակցութեան դառնալ: Աս կենդանիներն են հասարակօրէն՝ շուն, կատու, ծագար, գառն ու թռչուններ, զորոնք էթէ մէկը շարշարելու կամ ծեծելու բլլայ, կը տեսնենք որ զանոնք սիրող տղան անոնց վրայ աւելի ցաւ կը ցուցնէ ու կու լայ, քան թէ մարդու մը շարշարուիլը տեսած ատենը: Երկու ծայրերէն կամ աս երկու իրարու հակառակ մտլութիւններէն ալ պէտք է տղաք խոհեմութեամբ զգուշացնել ու պահել, եւ աս բանս առաւելապէս անոր համար պէտք է ընել, որ երկուքն ալ բարեկրթութեան ու բարուց վրայ շատ մեծ մնասակար ազդեցութիւն կ'ընեն:

Թէպէտ երբեմն տղոց պատմելու է թէ չարագործներն ինչպիսի մեծ պատիժներ կ'ընդունին, մարդասպաններն ինչպէս կը սպաննուին, բայց երբեք պէտք չէ կատուած կամ գլուխը կտրուած մարդ մը ցուցնել անոնց, կամ աս գործողութիւնն եղած ատենը՝ զիրենք հոն տեղը տանիլ, ինչու որ ասոնց տեսութիւնը զիրենք սուկացրնելով՝ մնասակար հետեւութիւններու պատճառ կրնայ տալ: Ասոր տեղը պէտք է անոնց երբեմն երբեմն յիշեցնել՝ թէ մարդ մը ան աստիճանի շարութեան հասնելու համար՝ որ իրեն նման մարդը զարնէ մեռցրնէ, յառաջագոյն ամէն առաքինութիւնները սրտին մէջէն կամաց կամաց կը հեռացնէ, անոր համար մարդ երբ որ հնազանդ, աշխատասէր, բարեբարոյ, ստակը գործածելու մէջ շափաւոր, բարեսիրտ ու խոնարհ չ'ըլլար, ունեցած մէկ մտլութիւնը սաստկանալով եւ հետզհետէ ուրիշ մտլութիւններու ճահբայ բանալով, զինքը ժամանա-

կաւոր ու յաւիտենական դժբախտութեան ու կորստեան մէջ կը գլորէ:

Արբ որ աղայ մը՝ սուտ զրուցելուն, գողութիւն ընելուն, ուրիշներուն ձեռք վերցընելուն եւ ուրիշ ասանց նման անկարգ գործքեր ընելուն համար պատժոյ արժանի գտնուելու ըլլայ, զանիկայ յանցանքին մեծութեան եւ իր հասակին համեմատ կերպով պատժելու է, այնպիսի կերպով մը որ թէ յանցաւոր աղուն եւ թէ իր ընկերներուն ու աշակերտակիցներուն վրայ ազդեցութիւն ընէ: Բայց զգոյշ կենալու է՝ որ չըլլայ թէ հոգւոյն ընդունելու պատիժը մարմնոյն տրուի, հապա նայելու է որ հոգին ազդողական խօսքերու կրակովը մաքրուի, եւ ասանկով աղան կորստեան անդնդին բերնէն շիտակ ճամբու վրայ հանուի: Շատ անգամ խոհեմ ու ծանր ազդարարութեան խօսքերով ու խրատներով աւելի ապահովապէս կ'ուղղուի աղան, քան թէ ծեծով եւ ուրիշ պատիժներով: Բայց աս կերպ յանդիմանողական խրատը կամ յանդիմանութիւնը՝ միայն շատ ստիպող դիպուածներու մէջ ուրիշներու առջին պէտք է տալ. ինչու որ եթէ աղան միշտ ուրիշներուն առջին յանդիմանուելու ըլլայ, իր պատուոյն կամ անուան արհամարհուիլը՝ սրտին վրայ գէշ ազդեցութիւններ կ'ընէ: Ար հանդիպին անանկ դիպուածներ ալ, որ վարպետ ու խոհեմ դաստիարակին սրատեսութեան կարօտ են որոշելու համար թէ արդեօք մոլութիւն մը, ինչպէս՝ ծուլութիւնը, աւելի մարմնաւոր պակասութիւն է՝ թէ հոգեւոր, եւ անոր արմատը փրնտուելով ու գտնելով՝ պատշաճ դեղը կամ խրատը եւ ուղղութիւնը տալու:

Ազտիկ ազոց սրտին մէջ բարեբարութեան ու կրօնական սուրբ զգացմանց առաջին սկզբունքը զարթուցանելն ու արժարժելը անոր մօրը մայրական գթոյն ու խնամքին յանձնուած պիտ'որ ըլլայ: Թէ որ մայր մը աղէկ կրթուած ու հաստատուն կրօնական սկզբունքներով սիրտն ամրացուցած է, իր ջանքովը կրնայ իր զաւկին սրտին մէջ սիրոյ, երախտագիտութեան, Աստուծոյ վախին ու հնազանդութեան զգացմունքն արթնցընել: Մայրենի սէրը երբ որ մտաց ուղիղ ու բանաւոր մտածու-

Թիւններովն ու կամքին հաստատութեամբն ամրացած չ'ըլլար, միայն հասարակ գրգիռ կամ բնական բերում մը կը սեպուի. ասանկ սէրը կամ բերումը պատճառ կ'ըլլայ՝ որ շատ հեղ տղան իր մօրն անկարգ կամ անխոհական սիրոյն պատճառաւ առանց կրթութեան կը մեծնայ ու անկիրթ կը մնայ, մանաւանդ եթէ հայրը՝ կամ իր զբաղմանց շատութեան համար եւ կամ հոգեկան հեղգութեան պատճառաւ՝ իր զաւկին կրթութեան ամենեւին միտ չգնելու ըլլայ:

10. Տղոց մտաց կարողութիւններուն կրթութիւնը:

Վաստիարակութեան արուեստին ամենէն մեծ ու երեւելի ճարտարութիւնը՝ ստուգիւ ան է որ ճամբայ մը կը գտնէ, որով կրթուելու տղան՝ իր հոգեկան գործունէութեան ու մտաց բացուելուն սկիզբէն՝ օրուան ամէն ատենն ու ժամերը յարմար զբաղմունքներով անցընէ, այսինքն մէկ դիպաց կը նայի որ ամէն բանէն օգուտ հանէ, ամէն բանն ու ժամանակը օգտիւ գործածէ, եւ մէկալ դիպաց կը ջանայ որ ամէն մնասակար բաները, որոնց մէջն են նաեւ պարապ կենալն ու ժամանակն աղէկ գործածել չգիտնալը, հեռացընէ ու շիտկէ: Աս բանս նոյն իսկ շատ պզտիկ տղոց վրայ ալ կրնայ իմացուիլ. ինչու որ ասանկ տղոց մէջ զուարթ խառնուածք կամ բնաւորութիւն ունեցողներ կը գտնուին, որոնց առջեւն անուշ ձայն հանող ու շողացող բաներ բռնուելու, կամ զանազան զուարճացուցիչ խօսքեր զրուցուելու, նաեւ հասարակ փայտէ շինուած փոքր խաղալիկներ տրուելու, զիրենք յակուրջի (*սալընճ-ի*) վրայ շարժելու կամ առջեւնին բան մը երգուելու ըլլայ, շատ աղէկ կը զբաղին ու շեն ձանձրանար: Երբ որ տղաք քալելու կը սկսին, պէտք է նայիլ որ գնդակ մը, սոյլիկ մը կամ ուրիշ խաղալիկ մը ունենան խաղալու: Տղաք կը սկսին աս բաները շօշափել, հոտուրտալ, ձեռքերնէն վար ձգել ու ծռիլ առնել, կարճ բտեմ՝ ասոնցմով կը ստիպին իրենց զգայարանքը, անդամներն ու միտքը կրթել ու միշտ նոր նոր բաներ սորվիլ: Ասանկ բանե-

բով քիչ մը ատեն անցնելէն ետքը, յակուրջի մէջ շար-
ժելով, փայտէ ձիու վրայ հեծնելով, քանի մը քար կամ
ուրիշ բան իրարու վրայ դնելով, եւ ուրիշ մարմնոյ կրթ-
թութեան կամ շարժման համար սահմանած անվնաս ու
դիւրին խաղեր խաղալով, մարմիննին ու հոգինին կամ
մտքերնին ըստ բաւականին կը զբաղեցընեն: Քայց միշտ
զգուշանալ պէտք է որ շատ խաղալիկներ ու խաղալու
առիթներ ունենալով, զուարճութենէ ձանձրութիւն
չզգան, ինչպէս շատ հեղ փորձով տեսնուած է: Տղան
մինչեւ որ երեք տարին լմնցուցած չ'ըլլար, ձեռքը պատ-
կերազարդ տետրակներ տալու չէ, ինչու որ աչուրնին
կատարեալ նայեցուածքով չեն կրնար կրթել. եւ միշտ
աւելի աղէկ է՝ բնական եղանակաւ ու ճամբով իրենց դի-
տողական զօրութիւնը զբաղեցընել, քան թէ կիսկատար
արուեստական նկարներով կամ շինուածքներով երեւա-
կայութիւննին պատաղեցընել:

Մարդ կրնայ տղուն խաղալու կամ խաղալիկներ-
բով զբօսնլու ատենը՝ ամէն մէկ տեսած կամ ձեռքն
առած բանին վրայ անոր բան մը սորվեցընելու ճամբայ
գտնել. եւ ասիկայ շատ օգտակար կրնայ ըլլալ՝ եթէ
ճնոզք կամ դաստիարակներն աս բանս ըրած ատեննին՝
առանձին միտ դնելու ըլլան բնական իրաց, մարդուն
պատմութեան, մարդկային բարուց ու բարոյական կրթ-
թութեան. միայն թէ պէտք է նայիլ՝ որ միտքը գործ-
նականապէս կրթելու համար աշխատած ատեննին՝ բռնի
ու ծառայաբար կամ ստիպողական կերպով գործք չտես-
նուի: Սորվեցընելով կամ կրթելով զուարճացընելու
մէջ մասնաւոր եղանակ մը կայ, որն որ Սոկրատեան կերպ
կ'ըսուի, այսինքն՝ զանազան հարցումներ ընելով, որն որ
շատ աղէկ բան է, որովհետեւ չէ թէ միայն տղուն ինք
իրեն մտածելը կամ միտքը գործածելը չ'արգելեր, հա-
պա նաեւ անոր կ'օգնէ, որով եւ զուարճութեամբ ու
խաղալով՝ աւելի բան կը սորվի, իր ազնուական ու բա-
րոյական զգացմունքը, ինչպէս նաեւ իր ծանօթութիւն-
ները կամ հմտութիւնը կ'աւելնայ:

Աս միջոցով նաեւ դիւրաւ կը յաջողի տղուն զա-
նազան բաներ չափել, համբել, բաղդատել, զանազանել

կամ որոշել, տեսածը կամ լսածը պատմել ու դատա-
զութիւն ընել տալ, եւ ասանկով անոր միտքը բանալու
աշխատուած ատենը՝ քիչ մ'ալ յիշողութիւնը կրթե-
լու դիւրութիւն կ'ըլլայ, որովհետեւ միշտ ջանալ պէտք
է՝ որ ամէն հոգեկան զօրութիւնները երբեմն զատ զատ,
երբեմն ալ մէկ քանին մէկտեղ փոփոխակի արթընցուին,
բացուին ու բանելով կրթուին:

Տղուն մտադրութիւնն արթընցընելէն ու հաստա-
տելու կերպը գտնելէն ետքը՝ գլխաւորաբար երեք բանի
աւելի միտ դնել պէտք է. մէյ մը տղուն աս կամ ան
բանին վրայ ըստ կարի շխտակ ըմբռնող՝ ընել տալ. եր-
կրորդ՝ աս բանին վրայ այնչափ ատեն անիկայ պատաղե-
ցընել, մինչեւ որ ան ըմբռնումը մտայ մէջ աղէկ մը
մտնէ ու հաստատուի ու անկից ալ յիշողութեան մեջն
կրթայ պահուի. եւ երրորդ՝ ադ ըմբռնուած ու աղէկ
հասկըցուած կամ ճանչցուած բանը՝ աղէկ ու շխտակ
կարգով տղուն մեկնուի ու առջեւը դրուի, որով մտայ
ցրուիլը կամ ըմբռնածը մոռնալը շատ աղէկ կ'արգելուի:
Ինչու որ աս ցրուիլը կամ մոռնալը՝ տղոց վրայ շատ դիւ-
րաւ կը պատահի. որովհետեւ ամէն բան իրենց նոր է,
շատ բան ալ զուարճալի ու հաճոյական է, բայց այն ամե-
նայն այլ եւ այլ ու իրարմէ տարբեր ըլլալուն՝ յիշողա-
կան զօրութեան մէջ միշտ շխտակ կարգով պահելը կա-
րելի չէ: Ասկից կրնայ յայանի տեսնուիլ, որ տղու մը
կանուխկեկ քանի մը լեզու մէկտեղ սորվիլը՝ բառերն ու
խօսքերը դիւրաւ իրարու հետ խառնակելու պատճառ-
կրնայ ըլլալ:

Այրք որ տղաք քանի մը բաներու կամ առարկա-
ներու ձեւին, համբանքին, համեմատութեան, տեսակին
ու յատկութեան վրայ ըստ պատշաճի մտադիր կ'ըլլան,
եւ միանգամայն կը սորվին թէ՛ որ զգայարանքով աս
կամ ան ծանօթութիւնն ու տեղեկութիւնը ստացան,
եւ անով որ կարօտութիւննին անցուցին ու կատարեցին,
ան բաներն ինչպէս ճանչցան ու ինչպէս ըստ պատշաճ
կարգի պիտ'որ գործածեն, անկից ետքը ալ շուտով հետ-
զհետէ կը սորվին միտ դնել, ճանչնալ, բաղդատել, զա-
նաղանել, զատել, բաժանել, կարգի դնել ու կերպով

մը նաեւ դատողութիւն ու որոշում ընել: Չոր օրինակ
ասանկ պղտիկ տղաք, սիսեռի հատերով, ընկուզով,
խերեւէշով, եւ այլն խաղալու ատեննին, անոնց վրայ մէկ
երկու հատ մը աւելցընելով, կամ քանի մը հատ մէկ դի
առնելով՝ կրթիչը դիւրաւ կրնայ ղերենք թուարանու-
թեան սկզբանց կամ տարրներուն, առանձինն գումարի
ու հանումի տեղեակ ընել:

Աշխոյժ ու հետաքրքիր տղայ մը գրեթէ միշտ հա-
ղար ու մէկ հարցմունքներ կը գտնէ. խոհական ծնողք
ու դաստիարակները պէտք է որ շատ բանին պատասխան
չտան, շատերուն ալ դարձուածքով ու խոհեմ եւ յար-
մար կերպով մը պատասխանեն. իսկ անանկ հարցումնե-
րուն՝ որոնք մտադրութեան արժանի են, անանկ դիմաւ-
որեն՝ որ իրենց պատասխանովը չէ թէ տղուն հետա-
քրքրութիւնը հաճութիւն գտնէ, հապա ինք օգտակար
տեղեկութիւն մը ստանայ, փրկաւէտ խրատ մ'ընդունի,
միտքն ուղիղ կերպով լուսաւորուի, եւ իբր թէ ապագայ
օգտի պատու ու սերմ մը առնէ:

Տղոց կեանքին աս միջոցին մէջ նախ զանազան բա-
ներ պատմելն ու ետքը կարգալ սորվեցընելը՝ ստուգիւ
կրնայ շատ մեծ օգուտներու պատճառ ըլլալ: Պղտիկ բա-
րոյական պատմութիւններ, որոնց կարգը կը դրուին ա-
ռակներն ալ, նաեւ աղէկ ընտրութիւն ընելով՝ քանի մը
բարոյական առասպելներ ալ, շատ անգամ իբրեւ կրթու-
թեան միջոցներ շատ աղէկ ազդեցութիւն կ'ընեն, անոնց
մտքին, սրտին ու երեւակայութեան վրայ, իրենց բարոյ-
ական զգացմունքը կ'ազնուացընեն, բնութեաննքնին ու
ճանօթութիւննին կ'ընդարձակեն, ճաշակնին ու լեզու-
նին կը բարակցընեն: Հարկ չկայ հոս տեղս մասնաւորա-
պէս ծանուցանել՝ որ ասանկ տղոց կարգալ տալու մէջ
կարգ մը պէտք է պահել ու ժամանակին միտ դնել. եւ
ոչ երբեք երեւակայութիւնը շփոթելու կամ վախ-
ցընելու պատմութիւններ պատմել ու կարգալ տալ:
Ասոր հակառակը պղտիկ հանելուկներ կամ երկասյրի
խօսքեր գրուցելը՝ օգտակար է, որովհետեւ ասոնք տղոց
դատողական զօրութիւնը սրելու շատ կ'օգնեն: Նաեւ
յիշողութիւնը կրթելու համար կարճ առակաւոր խօս-

քեր, բարոյական վճիռներ, եւ մանաւանդ անուան կամ
նոր տարւան օրը՝ ոտանաւորներ կամ քանի մը տող ա-
ղուոր խօսքեր սորվեցրնել ու զրուցել տալը՝ որդիական
սէրը զարթուցանելու, ծնողաց ունեցած մեծարանքն ու
երախտագիտութիւնը յայտնի ընելու շատ աղէկ կը ծա-
ռայեն : Ամէն ատեն դատողութեան զօրութիւնը հաս-
տատելու համար ամէն կերպ ու անդադար կրթութիւն
հարկաւոր է, որ տղաք ատենին խոհական անձ ըլլան ու
իրենց ժամանակին մարդիկներուն մէջ իմաստութեան
անուն ստանան . բայց հիմակուան ատենը յիշողութիւնը
կանուխկեկ բանեցրնել տալու եւ կրթելու սկսիլը՝ ամէն
ժամանակէն աւելի հարկաւոր կ'երեւայ, որովհետեւ հի-
մակուան ատենիս կարօտութիւնները կամ թէ ըսենք
աշխարհքիս կարգն ու սովորութիւնները՝ աւելի յիշ-
ողութիւնը աշխատեցրնելու բաներ են :

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

վեց միևնույն տասնո՞րհից տարեկան տղոց կրթութիւնը :

ԱՆՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ ու անհասկառակելի բան մըն է, որ ամէն մէկ տղու ունեցած տրամագրութիւններովը, յօժարութիւններովը, խառնուածքովն ու առողջութեան վիճակովը բնութիւնն ըստ բաւականին յայտնապէս կ'ազդէ ու կը ցուցնէ թէ ամէն մէկ անձն ինչպէս պէտք է կառավարել, կարգաւորել ու կրթել: Աւ աս ասանկ մտածելով՝ բարոյական կրթութեան կամ դաստիարակութեան դորձքը գրեթէ այնպէս պարզ ու դիւրին կըրնայ ըլլալ, ինչպէս արտի մը բանուիլն ու ծառի մը խնամուիլը, որոնք եթէ աղէկ աղբով դոցուելու, ջրուելու, որովմներէն, ճճիներէն ու մնասակար խոտերէն մաքրուելու ըլլան, գրեթէ իրենք իրենցմէ յաջողութեամբ պրտղաբեր կ'ըլլան:

Իսկ եթէ մէկալ կողմանէ մտածելու ըլլանք՝ որ մարդուս գերագոյն ճարտարութեամբ յօրինած, եւ շատ հանդարտութեամբ ու կամայ կամայ արթնցող ու բացուող կազմուածքը՝ բոլոր աշխարհքիս նկատմամբ կերպ կերպ մարմնական ու հոգեկան կարօտութիւններ ունի, անթիւ փոփոխութիւններու եւ վտանգներու տակ ինչ կած է՝ երբեմն իր կամօքը եւ երբեմն ակամայ, եւ շատ բարձր վախճանի համար սահմանած է, աս ամէն բան մտածելով, կ'ըսեմ, կրթութիւնը կամ դաստիարակութիւնը ո՞չ անանկ պարզ կըրնայ ըլլայ, ինչպէս է տնկի մը խնամուիլը, եւ ո՞չ այնպէս միակողմանի, ինչպէս է կենդանուոյ մը արուեստական դորձք կամ շարժում մը սորվեցընելը: Աս կտորիս մէջ բուն իսկ ճշմարտութիւնը կամ հաստատուն դորձքը՝ երկու ծայրին մէջտեղն է, այսինքն՝ չափէ քիչ ու չափէ աւելի կրթելուն, որուն վրայ ծանրագլուխ ծնողք ու խոհեմ դաստիարակները միշտ ամէն պարագաները կընելով՝ որոշում պիտ'որ բնեն:

11. Աս 7—15 տարեկան տղոց դաստիարակութեան
հանգամանքն ու պայմանները :

Տղաք կամ պատանիք բարոյականին եւ գիտնալու
հարկաւոր ու արժանի բաներուն միտ դնելէն ի դատ, աս
ժամանակին մէջ, այսինքն՝ եօթը տարիքէն մինչեւ տասն-
ուհինգ տարին, իրենց մեծերուն կամ կրթիչներուն ա-
ռաջնորդութեան ներքեւը նաեւ այն ամէն տեղեկու-
թիւնները ստանալու պիտ'որ աշխատին, որոնք ստորին
ղգայականութեան կարգէն վեր կամ ազնուական զգաց-
մանց յարմար ու պատշաճական կ'երեւան : Աս պատշա-
ճականութիւնը կամ վայելչութիւնը պատանւոյն բոլոր
վարմանց, գործողութեանց ու կենաց վրայ կը տարածի,
եւ պէտք է որ միշտ ի գործ դրուելով՝ գիւրութեամբ
կատարուի, մանաւանդ թէ իրենց վրայ վայելչութիւն մը
տայ : Աս կտորիս մէջ քաղաքավարութեան նկատմամբ
զանազան ազգային կարգերն ու սովորութիւնները խիստ
պղտիկ քաղաքացի կամ պատանի մը իր վրայ վայելչա-
պէս գործադրելու միջոց ու առիթ կը գտնէ :

Մտղաց, այսինքն՝ երկան ու կնոջ մէջ բլլող
խաղաղական ու սիրալիբ վարմունքը կամ միաբանու-
թիւնը, զաւկրներուն մէջ մտերիմ, բարերար ու օրհնու-
թիւն բերող եղբայրական սէր մը կը հաստատէ. ասոր
հակառակը ասն մէջ բլլող տարածայնութիւնն ու հա-
կառակութիւնը, մէկը մէկալը կտորելը կամ վար զար-
նելը, ամբչցրնելն ու դառնացրնելը տղոց սրտին մէջ
գէշ սերմեր ցանելով՝ անոնց ապագան վտանգի մէջ
կը ձգէ :

Յատկապէս խօսելով բարոյականի կամ բարերա-
րութեան, իրաւանց, առաքինութեան, ճշմարտութեան
ու գեղեցկութեան զգացումը, այսինքն՝ ասանց համար
սրտին մէջ զգացում ունենալը, մարդ չիկրնար ուս-
մունքով ստանալ, արտաքին երեւութով մը անոնց պա-
կասութիւնը լեցրնել, ճարտարութեամբ ձեւացրնել : Աս
զգացումը պէտք է որ, ինչպէս լոյսը, ջերմութեան նիւ-
թը, ելեքարական ու մագնիսական նիւթերը, բնութեան
մէջ իրրեւ ինքնագոյ ու ամէն բանի մէջ իրենցմէ մտնող

տարերք են, այնպէս բոլոր մարդուն սրտին ու անձին մէջ
մտնէ, անիկա վառէ, կենդանացնէ, բոլոր իր մտածելու
գործողութիւնը, իր զգածմանց ու գործելուն եղանակն
որոշէ ու իրրեւ թէ հոգւոյն հոգին ըլլայ:

Արպէս զի պատանի մը անանկ անձ մ'ըլլայ, ինչ-
պէս որ իր ժամանակաւոր ու յաւիտենական վախճանին
հասնելու համար պէտք է որ ըլլայ, հարկ է որ իր
բոլորաիքն աղէկ ու անվնաս ըլլայ, այս ինքն՝ միշտ ա-
նանկ անձիքներու հետ ապրի, որոնք իր հոգեկան կե-
նացը ամէն ժամանակ օգտակար սնունդ կարենան տալ:
Ծնողաց, մանաւանդ անանկ ծնողաց՝ որոնք իրենց ա-
պրուստը ձարելու համար անդադար ու ծանր աշխատու-
թիւններով օրերնին անցընելու հարկադրած չեն, սրբա-
զան պարտքն է՝ իրենց պարապութեան ժամերը զաւկը-
ներնուն բարւոյն ու օգտին նուիրել: Ասոնք իրենց ազա-
տութեան ժամանակը չեն կրնար աւելի աղէկ ու մեծա-
զոյն օգտիւ անցընել, բայց եթէ իրենց ամուսնական
սիրոյն պատուհները, որ են իրենց զաւկրները, կատարեալ
մարդիկ (ըստ բուն ազնուական նշանակութիւն բառին
խօսելով,) եւ բարեկիրթ քաղաքացի ընելու աշխատե-
լով: Յաւով կը յիշենք որ կան շատ ծնողք՝ որոնք կը
կարծեն թէ խիստ մեծ զոհ կ'ընեն, եթէ իրենց զաւա-
կացը սիրոյն համար քանի մը զուարճութիւններէն ու
արտաքին զբօսանքներէն իրենք զիրենք զրկելու ըլլան:

12. Աս ատենուան դաստիարակութեան այլ եւ այլ
նիւթերը:

Մ. ա. ջին ժամանակուան (սկզբնական դաստիարա-
կութեան) մէջ սկսուած կրօնական կրթութիւնը կամ
կրօնի ու հաւատքի ըմբռնմանց սկզբունքն ու բացա-
տրութիւնը ասկից ետքը պէտք է մասնաւոր օրինաւոր
կարգով յառաջ տանիլ ու հաստատուն կանոնի մը
տակ դնելով ընդարձակել: Արթութեան աս մասն աւել-
ի յաջողութեամբ առաջ տանելու համար՝ պէտք է որ
ծնողք ու դաստիարակները չէ թէ միայն խօսքով
բանը լմնցընելու նային, հապա բաժնին իրենց շար-

ժիշ օրինակովը հաստատեն ու յաջողցնեն: Աս բանիս համար Աստուած իր նախախնամութեամբն անոնց երկու կերպ մասնաւոր օգնութիւններ պատրաստած է, որոնցմով նոյն իսկ աշխարհքիս մէջ ապրելու սկսող անփորձ մարդուն համար հմուտ առաջնորդաց կամ կրթութիւններու ձեռքին տակ միտքն ու սիրտը կրթելու եւ ազնուացնելու միջոցները կը գտնուին: Ինչու որ նոյն իսկ աստուածային Առաքելոյն վկայութեան նայելով, բնութիւնն ու արարածոց սքանչելի յօրինուածը՝ ամէն մէկ մարդը Արարչին Աստուծոյ եւ անոր մեծութեան ու կատարելութեանց ծանօթ կ'ընէ, ուստի եւ ապացոյցներով հաստատել հարկ չկայ թէ բնութեան ու անոր երեւոյթներուն ու սքանչելեաց դիտողութիւնը եւ ուսումը ինչ մեծ օգուտ կ'ընէ աստուածդիտութեան, հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ առ Աստուած: Աս է առաջին օգնութիւնը, այսինքն՝ բնութեան օգնութիւնը, որն որ Աստուած ծնողաց ու դաստիարակներու համար պատրաստած է, որով իրենց ձեռքին տակ ըլլող տղոց կրթութեան ղիւրաւ կրնան յաջողցնել: Ինչպէս, թէ որ ծնողք կամ դաստիարակները իրենց տղաքը զբօսանքի կամ պտրտելու հանած ատեննին՝ բնութեան մէջ ըլլող երեւոյթներուն մտադիր ընելու ըլլան, զոր օրինակ, մեղուներու եւ մրջիւններու ժրութեան ու աշխատասիրութեան, թռչնոց մը բոյնին շինուածքին, ծաղկի մը աղուոր դոյնին ու հաճոյական հոտին, օգոց խառնակութեան կամ մրրկի մը ատենն՝ տարերաց ուժին ու բռնութեան, աստեղազարդ երկինքին ընդարձակութեան ու աղուորութեան, եւ այլն. կը տեսնեն թէ անոնց միտքն ինչպէս կը դիտէ ու կը զբաղի, անոնց սիրտը որչափ կը շարժի, եւ ինչպիսի ուժօգնութեամբ բոլոր հոգինին զարմացմամբ լեցուելով՝ կը յորդորի ամենակարող, ամէնիմաստ ու ամենարարի Արարիչը պաշտելու, սիրելու եւ անոր երկրպագութիւն ընելու: Անկից ետքը ալ յայտնի կը տեսնուի թէ տղաք պատշաճական կերպով մը ասանկ դիտողութիւններու առաջնորդուելով ու վարժելով, այսպիսի բնական զուարճութիւնները կամ բնութեան երեւոյթներով զբօսուելը, որ միշտ ու ամէն տեղ կրնայ

ի գործ դրուիլ, ուրիշ ամէն զբօսանքներէն վեր կը սե-
պեն, ու անոնց վրայ հանդարտ սրտով ու խաղաղական
հոգւով գոհ ըլլալով, ուրիշ ամէն բաներու վրայ բնա-
կան շիտկութեամբ ուղիղ դատաստան ընել կը սորվին:

Ուրիշ տեսակ զգացմունք մըն ալ, բայց միշտ աշ-
խարհքիս ու մարդուն վրայ եկող ամէն կերպ պատա-
հարները կարգի դնող կամ կառավարող արարիչը յի-
շելով կամ ամէն բանն անոր վերաբերելով, կրնայ տղուն
սրտին մէջ զարթուցուիլ, երբ որ տան մէջ կամ անէն
դուրս դժբախտութիւն մը, ինչպէս հրդեհ մը, ջուր կո-
խել մը, հիւանդութիւն կամ մահ մը պատահելու ըլ-
լայ: Տղան առ կերպ շարեաց կամ դժբախտութեան ազ-
դեցութիւնը բաւականապէս շիմանալու կամ չհասկը-
նալու ալ ըլլայ, իր սրտին մէջ միայն անկեղծ ցաւա-
կցութեան զգացում մը զարթուցանելն ալ հերիք է,
որն որ անշուշտ անոր սրտին մէջ կը զարթնու, թէ որ
ուրիշ անկարգ զգացումներէն ազատ մնացած է ու չէ
աւրուած: Երբեմն սրտի զգացումը յայտնի կ'ընէ որ այն
զգացումն ունեցող տղան անշուշտ մտադրութիւն կամ
սուր իմացում ու յիշողութիւն ունի, որոնք իրենց ներ-
գործութիւնը երբեմն տղուն տարիքին կրցածէն աւե-
լի կը ցուցնեն: Ինչու որ կը տեսնենք թէ այսպիսի ի-
մացում ու յիշողութիւն ունեցող տղան առ կամ ան
բանն անանկ սրամտութեամբ կ'ընդունի կամ կը մերժէ,
որ չենք կրնար որոշակի սահմանել ու ըսել թէ ար-
դեօք ադ ներգործութիւնը բնական գրգիռ կամ ազդե-
ցութիւն է, թէ դատողական զօրութեան գործք*:

* Ար պատմուի թէ պատերազմի մը ատեն Գիբրոլտոց քաջ գիւ-
ցազնը Յովս. Շրէքպախէր՝ որ լերան վրայ կեցած՝ առջևի
ձորին մէջ ըլլող թշնամիներուն դէմ անհնարին վարպետու-
թեամբ նշան առնելով կը պատերազմէր, իրեններուն
ըսաւ՝ որ թէպէտ եւ դեռ բաւական վառօդ ունի, բայց կա-
պարէ գնդակները լմընցած են, ուստի եւ սկսաւ հրացանն
ուրիշ մետաղի կտորներով ու քարի մանրութով լեցընել:
Մէյ մ'ալ իր տասը տարեկան որդին իր ետեւէն վազեց ե-
կաւ, երբ որ թշնամիները ձորերու մէջէն անոր վրայ անդա-
դար հրացան կը պարպէին, եւ ամենեւին վտանգէ մը չվախ-
նալով՝ թշնամեաց հրացաններէն ինկող գնդակները՝ որոնք
լերան ժայռերէն ետ ցատքելով կու գային կ'իյնային, կը
ժողվէր, եւ երբ որ մեծ կ'ըլլային՝ կը կտորտէր, եւ կը բե-
րէր հօրը կու տար, որ հրացանին մէջ դնէ նետէ:

Հաւատոյ ուսմունքներէն ու սկզբունքներէն, որն
որ թէ յիշողութեան ու թէ սրտին մէջ պէտք է որ
մտնեն, մասնաւոր գործողութեան կամ ապրելու կանոն-
ներ ու կարգեր պէտք է յարմարցընել: Աս բանիս մէջ
հարկաւորապէս յիշողութիւնը քիչ մը կը ծանրաբեռնի,
եւ աս բանս աղուն միտքը դեռ չիկրնար տանիլ, նա եւ
սիրտն ալ իբր օգտակար զօրութիւն մը չիկրնար ընդու-
նիլ, ուստի եւ կրթութեան ու վարմունքին աս կտորին
մէջ քիչ մը բռնութիւն կամ աւելի պնդութիւն ընել
հարկ կ'ըլլայ: Բայց աս բռնութիւնն ամենեւին վնաս մը
չ'ըներ, թէ որ նոյն ատեն աղուն պատշաճական ազատու-
թիւն մ'ալ տրուելու ըլլայ. ինչու որ իր միտքն օրէ օր
հասուննալով՝ ինքն ալ կը սկսի կամաց կամաց ան ամէն
բաներուն նշանակութիւնը, ուժը կամ միտքը հասկը-
նալ, որոնք յառաջունէ իր յիշողութեան գանձին մէջ
առանց հասկընալու ժողված էր, եւ ան ճամբան՝ որուն
վրայ յառաջ իբր ակամաց ու բռնութեամբ կը քալէր,
իբրեւ շիտակ ճամբայ կը ճանչնայ, ու սովորութիւն ըրած
կերպով՝ բայց միշտ իր ազատ կամօքը հանդարտաբար
գէպ իր նպատակը առաջ կ'երթայ:

Արօնական ու բարոյական կրթութեան հետ մտա-
ւոր կամ մտաց կրթութիւնն ալ հաւասարապէս ու մէկ
քայլով պէտք է յառաջ երթալ, մանաւանդ աս եր-
կուքը պէտք է որ իրարու փոփոխակի օգնեն, ուստի եւ
շատ կերպով իրարու խառնուին, երկուքն ալ մէկ փու-
թով հոգացուին: Աւր որ բանը կամ միտքը սուրբ կրօն-
քի հետ փոփոխակի ու միաբանութեամբ կը գործէ, հոն
կը հաստատուի հարազատ բարեպաշտութիւն, ճշմարիտ
գիտութիւն, աղնուական բարք, եւ միանդամայն բա-
րոյական զօրութիւն՝ որ մարդուս ուժ կու տայ ամէն
մարդկային դժբախտութիւններն ու շարաշար պատա-
հարները հաստատուն մտօք ու ամուր հաւատքով ու Աս-
տուծոյ կամաց անձնատուր ըլլալով քաշելու: Ան մար-
դիկ, որոնք պզտիկուց ի վեր սորված ու վարժած են՝ սուրբ
հաւատոյ գլխաւոր հիմանց եւ ուղիղ բանաւորութեան
ազդեցութեանց վրայ ամրանալով կամ յենլով, իրենց
գործելու կերպը՝ իրենց բարուց ու սրտին զգածմանց մէջ

Հաստատուն հիմնելու, կրնան՝ իմաստնոյ մը ըսածին պէս՝ աշխարհքին իրենց աշքին առջեւը տակն ու վրայ ըլլալը տեսնել, եւ ամենեւին չեն սոսկար, չեն սասանիր, չեն լքանիր: Աշխարհքիս տակն ու վրայ ըլլալն ըսելով, կ'իմացուի այն գէշ ազդեցութիւնները՝ որոնք ուշ կամ կանուխ աշխարհքիս մէջ զանազան մարդիկներու հետ ապրելով, գէշ օրինակներ տեսնելով, վտանգաւոր գրքեր կարդալով ու մոլորեցուցիչ խօսքեր լսելով՝ պատանոց կամ օրիորդի մը երեւակայութեան ու սրտին վրայ կրնան ներգործել: Աւտի եւ ան իմաստնոյն խօսքէն աս հետեւութիւնը կ'ելլէ, որ եթէ պատանի մը կամ օրիորդ մը իր ծնողաց ու դաստիարակներուն իմաստուն ու զգուշաւոր խնամքովը սուրբ հաւատոյ ուսմանց եւ ուղիղ բանաւորութեան կանոններուն համաձայն հաստատապէս կրթուած կ'ըլլայ, այն ամենայն արտաքին վտանգները կամ թէ ըսենք փորձութիւնները իր մտքին ու սրտին, որով եւ իր վարմանց ու կենցաղավարութեան, վնաս չեն կրնար ընել:

13. Արթութիւնն աղէկ գլուխ հանելու համար ծնողք ու դաստիարակք իրենց վարմանց մէջ ինչ ընթացք պիտի բռնեն:

Աս բանս աւելի աղէկ յաջողցրնելու համար ծնողք ամէն փոյթն ու խնամքը բանեցրնելու պարտական են՝ որ բարեպաշտութեան ու բարի վարուց կողմանէ իրենց զուկրներուն բարի օրինակով առաջնորդ եւ ուղեցոյց ըլլան: Եւ եթէ աս կտորիս մէջ քիչ մը աղէկ մտադիր ըլլան, յայտնապէս կը տեսնեն որ աս բանիս մէջ (բարի օրինակ տալու մէջ) փոքր պակասութիւն մը ընելու ըլլան, իրենց ամէն խրատները, ազդեցութիւնները, յորդորանքն ու սպառնալիքն անպտուղ միջոցներ ու անօգուտ խօսքեր կ'ըլլան: Սոյնպէս եւ դաստիարակները՝ առաւելապէս կրօնական կրթութիւն տուած կամ սուրբ հաւատոյ ուսմանց ու կարգերուն վրայ խօսած ու համար տուած ատեննին, մասնաւոր հեզութեան ու սիրոյ հոգի մը կամ եռանդ մը զգալով՝ ամէն մէկ խօսքերնին ու մեկնու-

Թիւննին չէ թէ իբրեւ վարժութեամբ ստացած հմտու-
թիւն կամ գիտութիւն մը խօսքերով ու բառերով բա-
ցատրելու պիտ'որ նային, հապա ըսածներնուն ամէն մէկ
մասն ու անոնց իմաստը իբր հաստատութեամբ զգալով
ու սրտերնուն խորունկ զգացմամբը համոզուած, չէ թէ
վեր ի վերոյ՝ այլ այրական ծանրութեամբ մը աշակերտ-
ներնուն առջին գնելու պիտ'որ աշխատին, եւ անով ա-
նոնց միտքը կրթելէն աւելի՝ սրտերնին շարժելու, յա-
փրշտակելու եւ ան մեկնած ու սորվեցուցած ուսմանց
սիրովը բորբոքելու ետեւէ պիտ'որ ըլլան: Ասով տղաք
կը սկսին աս սրբազան բաներուն յարգն անանկ ճանչնալ,
ու անոնց ճշմարտութեան վրայ հաստատուն հաւատքով
անանկ համոզուիլ, որ ալ անկից ետքը իրենց բոլոր կե-
նաց մէջ աղ համոզումն իբր անկորուստ ժառանգութիւն
մը կ'ըլլայ, որով եւ ետքէն ամէն արտաքին վնասակար
ազդեցութիւններէն ու մտորեցուցիչ ուսմունքներու եւ
խօսքերու պատերազմներէն ազատ ալ շմեան նէ, վնաս
չեն կրեր:

Աս ատենները դաստիարակութեան մէջ նկատելու
երկու բան ալ կայ. մէյ մը ծնողք ու դաստիարակները
մասնաւոր ջանք մը պիտ'որ ունենան իրենց զաւկրներուն
ու աշակերտաց միտքն անանկ կարգաւորելու եւ սրտեր-
նուն զգացումներն անանկ ազնուացրնելու, որ պզտիկուց
սկսած՝ ամէն մարդու յարգը ճանչնալը սորվին, ամէն
մարդու՝ ինչ ազդէ ու աստիճանէ ըլլայ նէ ըլլայ՝ սէր ու
քաղաքավար վարմունք մը ցուցրնելու, ազնուականու-
թիւնը, հարստութիւնը, պատիւը, աղուորութիւնն ու
ասոնց նման առտելութիւնները իբր պատահական ու
արտաքին բարիք սեպելու, եւ անոնք միայն իբր աս կամ
ան մարդու մասնաւոր արդիւնքն ու ստացուածքը յար-
գելու վարժին: Արկրորդ՝ պէտք է ջանալ որ տղաք
պզտիկ հասակէն սկսին ծերերը մասնաւոր կերպով մը
պատուել, անոնց պատկառելի ծերութեան վրայ մեծ
համարում ունենալ. մտածելով որ անոնք մինչեւ ան
հասակը հասած ատեննին՝ շատ վտանգներու յաղթած
են, շատ բարիք ըրած են, շատ բաներու վրայ հմտու-
թիւն ստացեր, եւ շատ մարդու եւ առանձինն իրենց

ազգին օգուտներ բրած են: Երբորդ՝ կրթութեան ա-
տենը աշխատելու է տղոց սրտին մէջ մասնաւոր կարե-
կցութիւն ու անկեղծ գութ մը անկել աղքատաց ու
դժբախտ մարդկանց վրայ. եւ երբեմն երբեմն իրենց
ձեռքովն անոնց ողորմութիւն տալ տալու է: Մասնաւոր
զգուշութեամբ կրնան զանոնք նաեւ աղքատաց ու վշտա-
ցելոց բնակարանները տանիլ կամ խաւրել: Բայց շատ
աղէկ նայելու եւ զգուշանալու է՝ որ տղաք մարդկանց
վրայ առ հասարակ անվտաճութիւն մը չստանան,
վտանգաւոր մարդիկներէն զգուշանալ սորվելով՝ բոլորո-
վին մարդատեաց ու խրտչող չըլլան. ու մարդկային
թշուառութիւնը եւ մարդկան վրայ եկող շարիքը տխուր
ու անկարգ սրտցաւութեամբ նկատելով ու մտածելով՝
սեւամաղձոտ ըլլալու վտանգի մէջ չիյնան: Աս ամէն
զգացմունքները խեղճ պատանեկաց ապագայ կեանքին
համար վնասակար սկզբնաւորութիւններ ըլլալ կրնալուն,
խոհական դաստիարակներն ասոնց հեռաւոր վտանգնե-
րէն ալ զերենք ազատ պահելու փոյթ պիտ'որ ունենան:
Գաստիարակին գլխաւոր վարպետութիւնն ու ճարպկու-
թիւնը առ կտորիս մէջ ան է՝ որ տղաք առանց նախա-
պաշարման եւ առանց խիստ դատաւոր ըլլալու՝ մարդիկ-
ներն աղէկ ճանչնալու ճամբան ու կերպը սորվին. եւ առ
կ'ըլլայ, երբ որ հմուտ դաստիարակն իր աշակերտին անանկ
վարպետութեամբ մը մարդկային սրտին ամէն խորշերը,
այսինքն՝ պէսպէս զգածմունքները կը բանայ ու կը մե-
կնէ, որ տղան ամենեւին անոր բարութիւններէն անծա-
նօթ չիմնար, ու բարեսիրտ մարդկան հաւատարմութիւն,
ընկերական սէր ու շափաւոր բարի համարում մը ցուցը-
նելուն հարկաւորութիւնը կը ճանչնայ: Աս վախճանիս
համար հարկաւոր է որ դաստիարակը ջանայ՝ մարդկան
ընկերութեան մէջ գովելի վարմունք ունենալու համար
ու բոլոր աշխարհքիս մէջ օգտակար եւ անպարսաւելի
կեանք անցընելու համար հարկաւոր ըլլող առաքինու-
թիւններուն հաստատուն սերմերը կամաց կամաց ու
յարմար առիթ գտած ատենը՝ իր աշակերտին փափուկ
սրտին մէջ ցանել:

Տան մէջ հարկաւոր ըլլող կրթութեան պակա-

սութիւնը, մանաւանդ ստորին կարգի ընտանեաց մէջ, որոնց գլխաւորները, այսինքն տանուտէրները կամ ծնողքը, իրենց շահուն համար հասարակօրէն բոլոր օրը անէն դուրս անցընելու պարտաւորած են, տղոց խել մը չար ու անկարգ սովորութիւններ վաստակելու առիթ ու պատճառ կ'ըլլայ, որով թէ իրենց եւ թէ ուրիշներուն շատ վնասներ կրնան հասցընել: Մարդուն սիրտը կը ցաւի երբ որ կը մտածէ ու աչօք ալ կը տեսնէ՝ որ շատ անգամ տղաք իրենք իրենց մինակ կը թողուին, կամ անանկ անձանց պահպանութեան ու խնամոց կը յանձնուին, որոնք կամ անհոգութեամբ ու անկիրթ մեծցած են, եւ կամ դեռ պղտիկ են ու իրենց յանձնուած տղոց վերակացութիւն ընելու յարմարութիւն չունին: Աս վիճակին մէջ ըլլող ծնողք ամէն հոգէն ազատ ըլլալու համար՝ պղտիկ տղաքնին կանուխկեկ դպրատուն խաւրելէն ուրիշ բան չեն դիտեր ու չեն կրնար գտնել, ուր տղաք բոլոր օրը կամ օրուան մեծ մասը կը նստին, իսկ մնացած ատենը ճամբաներու վրայ ու փողոցները կ'անցընեն, կամ անկիրթ ծառաներու եւ աղախիններու ընկերութեան մէջ կ'ապրին: Ասանկ կեանք անցընող տղոց ծնողքն ամենեւին չեն հոգար ու խմանալու փոյթ չեն ըներ՝ թէ ան կերպ դպրատուն երթալով ու ասանկ հասակակից տղոց ու ծառաներու հետ ատեն անցընելով՝ իրենց զաւկրներն ինչ օգուտ կրնան ունենալ ու ինչ պտուղ կրնան բերել:

Յիրաւի խիստ քիչ ծնողք իրենց այսչափ անհոգութիւնը բարեքելու կամ արդարացընելու համար բաւական պատճառ կրնան յառաջ բերել. ինչու որ եթէ աղէկ մտածելու եւ քննելու ըլլանք, զբաղմունքներուն շատութիւնն ու սուներ եւ ընտանիքը խնամելու հոգը չէ, հասկա շիտակն ըսելով՝ հանգիստ ապրելու յօժարութիւնը, զգայական զուարճութեանց սէրը, մարմնական ու հոգեկան ծուլութիւնը, բարոյական անպղայութիւնը, դատարկաշրջութիւնն ու պարսաւելի կամ կամաւոր անձրկածութիւնը (տկարամտութիւնն) է, որ զաւկրներուն ճշմարիտ բարիքն ու օգուտը ամենայն կերպիւ հոգալու սրբազան պարտքին կատարման արդելք

կըլլայ. եւ աս ասանկ ըլլալով, խեղճ տղոց ուրիշ հոգ տանող ու խնամող չիմնար՝ բայց միայն իրենց ամենախնամ Արարիչն ու անոր սուրբ հրեշտակները:

Սան անանկ ծնողք ալ, որ իրենց զաւկրներուն կրթութիւնը շափազանց ներողամտութեամբ կը հոգան, եւ ասոնց սխալմունքն ալ առջիններուն սխալմունքէն ու յանցանքէն շատ վար չիմնար: Ասոնք իրենց զաւկրներուն պակասութիւններն ու անկարգութիւնները չէ թէ միայն կ'արդարացրնեն կամ անմեղադիր կ'ընեն, հապա նաեւ անոնց կերպով մը դովեաս ալ տալու կը համարձակին: Ինչպէս, կոպտութիւնը՝ բնական անվնաս վարմունք կ'անուանեն, շարութիւնը՝ ուժգնութիւն մտաց ու սրտի, անխելք ու անխոհեմ յանդգնութիւնը՝ արիական համարձակութիւն, ծուլութիւնն ու անհոգութիւնը՝ հիւանդոտութիւն կամ մարմնաւոր տկարութիւն: Աս ասանկ ըրած ատեննին՝ չեն մտածեր որ տղան տեսնելով որ իր պակասութիւնը չէ թէ միայն կը ջատագովուի, հապա նաեւ կերպիւ իւր կը դովուի, ինքն ալ նոյն պակասութիւնը կը շարունակէ ու կը կրկնէ: Եւ շատ անգամ կը տեսնենք որ աս կտորիս մէջ ինչ որ հայրը կամ աւելի եւս անխոհեմ սիրով կոյրցած մայրը իր ազգակիցներուն (իր զաւակացը համար) կ'ըսէ ու կը ծանուցանէ, հասարակօրէն տան դաստիարակն ալ նոյնն իր խօսքերովը կը հաստատէ, եւ աս կերպով ու ճամբով պաշտօնին մէջ հաստատ կը մնայ (հացը չիկորսընցըններ), ըսել է թէ աւելի մեծ խոհեմութեամբ քան թէ իր պաշտօնին ու պարտքին վայլած հաւատարմութեամբ կը շարժի, որով չէ թէ միայն օտարականները, հապա նաեւ իր աշակերտներուն ծնողքն ալ այնպիսի վնասակար քաղաքավարութեամբ կը խաբէ: Ասանկով մարդահաճոյ կամ կեղծաւոր դաստիարակ մը իր խնամոցը յանձնուած տղուն ծնողաց ծուռ կարծիքին համաձայնելով, երկու կողման ալ, այսինքն՝ զաւակաց ու ծնողաց ալ, բարեկամութիւն ու բարերարութիւն ըրած չ'ըլլար, հապա թշնամութիւն ըրած կ'ըլլայ. եւ դաստիարակութիւնն ալ անօգուտ ու անպտուղ կը մնայ:

Թէ որ ծնողք ու դաստիարակները կ'ուզեն որ ի-

բենց անսիրձ զաւկըններուն ու աշակերտներուն միտքն ու սիրտը օգտիւ ու պաղով կրթեն, պէտք է որ անոնց հետ մասնաւոր ու զգուշաւոր լեզու մը բանեցընեն: Սիրալիր քաղցրաբանութիւնն ու անուշ եւ հեղ վարմունքը միայն ապահով ճամբաներ են՝ որոնցմով մարդ տղոց սրտին խորունկ կողմերը կրնայ հասնիլ: Արթութիւնը պէտք է որ այրական ծանրութիւնը՝ յափշտակիչ կամ զովացուցիչ զուարթութեան հետ մէկտեղ միաւորէ, ասկից ի զատ՝ խնայութիւնն ու ներողութիւնն ալ անանկ բանեցընել տայ, որ անով մանկական տգիտութեան պատճառաւ սխալողին սիրտը շարժելէն զատ՝ նաեւ անոր սիրտիանք տայ, եւ իր դաստիարակն ու վարպետը իբրեւ իր ճշմարիտ ու հաւատարիմ բարեկամը յարգելու ստիպէ:

14. Աս (7—15 տարեկան) տղոց հետ ինչպէս պէտք է վարուիլ:

Բայց պէտք է աղէկ նայիլ որ երբ որ տղուն վրայ մեծամտութիւն կամ ինքնահաւանութիւն ու ինք զինք բանի տեղ դնելու սկիզբները կ'երեւան, քաղցրութեան ու ներողութեան շուտով շափ դրուի: Հիմակուան աստե՛նիս փորձուած դիպուածներուն նայելով՝ կրնանք ըսել որ աս կտորիս վրայ կրթիչներն այնչափ աղէկ մտադրութիւն չեն ըներ, ինչու որ կը տեսնենք թէ հիմակուան նորահաս երիտասարդներն իրենք զիրենք շատ բան դիտցողի ու խոհական մարդու տեղ կը դնեն: Ար տեսնենք որ յիրաւի իրենց երեւակայութիւնն այլ եւ այլ դաղափարներով զարդարուած կ'երեւայ, բայց դատողական զօրութիւննին ըստ կարգի կանոնաւորեալ չէ, նաեւ փոյթերնին պակաս ըլլալուն՝ յիշողութիւններնուն մէջ ըստ բաւականին դիտնական հմտութիւն ու կարեւոր ծանօթութիւններ չեն գտնուիր: Աւստի կրնայ ըլլալ որ ասոնց մէջ խել մը սրամիտ ու երբեմն նա եւ հանճարեղ կտրիճներ գտնուին, բայց իրենց մէջէն քիչերը կրնան ուղիղ կարգով դատողութիւն ընել ու հաստատուն խորհրդով որոշում մը հանել: Աթէ առջեւնին գիտնա-

կան խնդիր կամ մասնաւոր նիւթ մը դրուելու ըլլայ, չեն կրնար տրամաբանօրէն ապացոյցներով անոր վրայ խօսիլ, կարծիք մը կամ դրութիւն մը համազօչ օրինակներով ու պատճառներով հաստատել, եւ մէկ նիւթի վրայ անշփոթ մնալ:

Աս ըսածներնէս ծնողք, դաստիարակներն ու վարպետները յայտնապէս կը հասկընան, որ իրենց զաւկրներուն ու աշակերտներուն մտլութեանց ու անկարգ բարուց բուն պատճառն ու հիմք՝ իրենց վրայ պէտք է որ փնտռեն, եւ թէ դաստիարակութեան սխալներէն իրենք զիրենք ազատ պահելն ու անոր դէմ ըլլող արգելքները մէկդի վերցընելը՝ այնչափ արտաքին պատճառներէն կախում չունի, որչափ իրենց կամքէն:

Մինչեւ հիմայ տեսնուած ու եղած փորձերը կը փկայեն որ բուն ժամանակէն առաջ կամ կանուխ միտքը բանեցընելը, կրթելն ու գործունեաց ընելը, հասարակօրէն օգտակար եղած չէ, մանաւանդ թէ աս կտորիս մէջ բնութեան դրած օրինաւոր կարգին ու ժամանակին դէմ եղած յանդգնութիւնը՝ պատիժը գտած է. որովհետեւ որչափ որ տղու մը միտքը բուն ժամանակէն առաջ կրթութելու եւ գործել տալու ետեւէ կ'ըլլուի, կամ թէ բունք՝ որչափ աւելի ջղերը կը գործածուին ու կը գրգռուին, այնչափ ալ մարմինը կը տկարանայ ու խեղ կ'ըլլայ: Եւ շատ հեղ տեսնուած է որ այսպիսի անկարգութեան վերջն ուրիշ բան եղած չէ՝ բայց եթէ տղուն մարմինը բոլորովին տկարանալով եւ ուժէ իյնալով, կանուխ մահուամբ աշխարհքէ ելլել: Հոս նաեւ աս ալ ծանուցանելը պատշաճ կը համարիմ, որ շատ պարսաւելի բան է՝ տղաքը զբօսանքի գործիք կամ նիւթ մը ընելով՝ բոլոր օրն անոնցմով զբաղիլն ու ատեն անցընելը: Տղոց վրայ այնչափ բան դնելու է, որչափ որ կրնան տանիլ, այսինքն որչափ որ իրենց մտաւոր զօրութիւնը՝ առանց փնաս մը կրելու՝ կրնայ ընդունիլ: Աւստի թէ պատանեաց ու թէ օրիորդաց՝ ութը կամ ինը տարեկան չեղած՝ պէտք չէ ծանրակշիռ նիւթեր ու գիտնական ուսմունքներ սորվեցընել, գծուար բաներ միտք առնել ու շարագրել տալու ետեւէ ըլլալ. ինչու որ ասանկ ուսմունք-

ներն ու մտաւոր աշխատութիւնները կանուխակեկ սկսելը՝
ի հարկէ կը պահանջէ որ տղաք երկայն ատեն հանդարտ
նստին, որն որ կենաց աս ժամանակին (մինչեւ ութերորդ
տարւոյն) համար մնասակար է :

15. Ի՞նչ կերպով եւ ո՞ր հասակի մէջ բարձրագոյն
կրթութիւնը պէտք է հոգալ :

Թէպէտ բարեկարգ դպրոցներու մէջ ըստ բաւա-
կանին կարգաւորուած է՝ թէ տղան մինչեւ ինը տարե-
կան եղած ժամանակ՝ ինչ բաներ պիտ'որ սորվի, բայց
աս միայն կրնայ ըսուիլ որ յիշողութիւնը քիչ մը աւելի
ցամաք նիւթերով կը ծանրաբեռնուի, եւ մտաց դատո-
ղութեան զօրութիւնը՝ Սոկրատեան ոճին կամ կարգին
համաձայն ուղիղ կամ տրամաբանական կարգով բա-
ցուելու եւ աւելի բնական կարգով ու գործնական կեր-
պով կրթուելու եւ կատարելագործուելու շինացուիր :
Արժեւ որ Սոկրատեան կրթութեան կերպը յայտնա-
պէս կը ցուցնէ՝ որ մեր սորվիչն ու դիտնալն ուրիշ բան
չէ, բայց եթէ՝ յիշել, որպէս թէ մտքերնուս մէջ ի բնէ
գտնուած գաղափարները նորոգել ու արթնցընել : Ինչ-
չու որ կը տեսնենք թէ երբեմն հանձարեղ տղաք անանկ
հարցումներ կ'ընեն ու անանկ պատասխաններ կու տան
ու դիտողութիւններ կ'ընեն, որ նոյն իսկ հմուտ մարդիկ-
ները կը զարմացընեն, շատ հեղ ալ կ'ամբշջընեն * :

* Ար պատմութի՝ որ որ մը եօթը տարեկան աղջիկ մը իր գրա-
ցոյցն եկաւ, որն որ սպիտակահէր կարգացող կամ իմաս-
տուն մըն էր, եւ աղաչեց որ հրաման տայ իր կրակարանէն
կտոր մը կրակ առնելու, որով երթայ տունը կրակ վառէ :
Խիստ բարի, աղջիկս, ըսաւ կարգացողը. բայց քիչ մը կեցիր,
երթամ կտոր մը կղմնաօր բերեմ, կրակը վրան դնեմ, որ
ձեռքդ չայրի : Աս ըսելէն ետքը չորս դին նայեցաւ փնտուեց,
բայց չկրցաւ յարմար բան մը գտնել : — Աէյ մ'ալ աշ-
քը դարձուց նայեցաւ որ աղջիկը ձեռքին վրայ քիչ մը պաղ
մոխիր առեր ու անոր վրայ ալ կրակը դրեր, եւ շնորհակալ
ըլլալով՝ կ'երթայ : Իմաստունն աղջկան ճարտարմտութեան
վրայ զարմանալով ու իր անձրկածութեան վրայ սաստիկ
նեղանալով, դրասեղանին վրայի քանի մը դրքերը գեաինը
զարկաւ ըսելով. Ա թառն տարի է՝ որ գրքերու եւ թղթերու
մէջ օրերս կ'անցընեմ, ինչպէս խլուրդը գեանի տակ հողերը
վեր վար ընելով կ'ապրի, եւ գործնականապէս հասարակ
կենաց հարկաւոր ըլլող բաներու համար այնչափ կոյր եմ,
որ պզտիկ աղջիկ մը դիս ասանկ կ'ամբշջընէ :

Ինչպէս որ կրթութեան համար առ հասարակ, նոյնպէս սորվելու բաներու համար ալ առանձինն պէտք է որ ծնողք ու դաստիարակները տարւէ տարի՝ տղոց հոգեկան ընդունակութեան աւելնալուն ու բացուելուն համեմատ՝ աղէկ պատշաճողութեամբ կարգ մը հաստատանն, եւ ամէն դիպց աղէկ զգուշութիւն ընելէն ետքը՝ ան կարգը բռնեն ու ամէն բանի մէջ անշիտի գործածեն: Աս բանիս մէջ ծնողք ու մերձաւոր ազգականները միշտ աղէկ յիշեն ու մտադիր ըլլան՝ որ շատ անգամ իրենց սիրելի զաւկներուն ու տղոց վրայ անանկ ընդունակութիւն մը ու տրամադրութիւններ կը կարծեն տեսնել, որոնք անոնց վրայ ամենեւին չեն դանուիր, ուստի եւ իրենց կուրութեամբը, ինքնահաւանութեամբն ու սնապարծութեամբը նոյն կարծիքին վրայ հաստատ յամառեալ կենալով՝ խեղճ տղոց հետ անանկ ճամբայ մը կը բռնեն, որով ոչ երբեք յուսացուած նպատակին կրնայ հասնուիլ:

Շատ մեծ մնաս կ'ըլլայ տղոց, երբ որ բարձրագոյն հոգեկան կրթութեան համար ամենեւին յարմարութիւն կամ ինչպէս հասարակօրէն կ'ըսուի՝ կոչում, տաղանդ ու ընդունակութիւն չունենալով, ուսում սորվելու կը ստիպուին ու կը հարկադրուին: Անտարակոյս կը դանուին անանկ գլուխներ, որոնց մէջ գիտութեան ու արուեստի աղնիւ ծաղկին համար ամենեւին յարմար տեղ ու գետին չի գտնուիր. եւ սակայն աս անընդունակութիւնն ու անյարմարութիւնը միշտ ի սկզբան կամ կենաց առջի տարիները յայտնի չի կրնար ճանչցուիլ: Ինչու որ, ինչպէս բնագնիներն ու բժիշկները կը վկայեն, գլխուն վրայ յատուկ ու մասնաւոր ձեւ կամ կազմակերպութիւն մը չի գտնուիր, ուսկից կարենայ իմացուիլ թէ բոլորովին ապուշ եւ ուսմանց անընդունակ է. մասնաւոր թէ շատ հեղ գլուխն ամէն կերպ վայելչութիւնն ու կանոնաւոր կազմութիւնն ունենալով, կրնայ ապուշ ու դժուարընդել ըլլալ: Պատանուոյ մը սորվելու կամ ուսմամբ կրթուելու յարմարութեան վրայ դատողութիւն ընելու ատեն՝ ազգատոհմը, աստիճանն ու հարստութիւնը երկրորդական, կամ աւելի աղէկ բռն՝ պատա-

հական պարագաներ սեպելու է. եւ եթէ տղու մը վրայ ճիշդ ու անաչառ կամ անկողմնակալ քննութիւն ընելէն ետքը՝ կը տեսնուի որ միջակ կամ չափաւոր ընդունակութիւն ունի, ան ատեն պէտք է զինքը բարձրագոյն ուսմունքներ սորվելէն ազատ ընել, զինքն անանկ բաներու մէջ կրթելու եւ յառաջ տանելու է, որոնց յարմարութիւն ու կոչում ունի, չէ թէ՛ որոնց ինք կը բաղձայ կամ կը յօժարի. ինչու որ յայտնի բան մըն է որ տղաք շատ անգամ անանկ վիճակի մը բաղձանք կը ձգեն, որ իրենց ընդունակութեան ու առողջութեան վիճակին յարմար չէ:

Ար դանուին շատ ծնողք՝ որոնք պատուաւոր ու իրենց պարտքը ճանչցող դաստիարակներէն ու հաւատարիմ բարեկամներէն իրենց զաւկրներուն յարմարութեան, ընդունակութեան ու յաջողակութեան վրայ անհաճոյ բայց անաչառ կարծիք մը լսած ատեննին, կը վշտանան ու կը խռովին, եւ անոնց ճշմարիտ ու շիտակ դատաստանք թող տալով, շողքորթներու եւ կեղծաորներու բարի համարման ու ծուռ կարծիքին կը հետեւին, որով իրենց զաւկրներուն շատ մեծ վնաս կու տան: Բայց շատ տարիներ պարապ տեղ անցրնելէն ու շատ ստակ կորսրնցրնելէն ետքը, զաւկրներնուն վրայ ամենեւին յառաջադիմութիւն մը շտեմնելով, կը սկսին զղջալ, ցաւիլ ու հոգալ անանկ ծուռ ճամբայ բռնելնուն համար, եւ անկից ետքն ալ տարակուսեալ կը մնան՝ խեղճ զաւկրներնուն օգտակար միջոց մը չկրնալով գտնել: Ասանկ տղաք, ինչպէս հին առակը կ'ըսէ, ամէն տեսակ բանէն՝ կտոր մը, իսկ բոլորէն ոչինչ սորված ու օգուտ գտած ըլլալով, իրենց անանկ կիսկատար կրթութեամբը՝ իրենց անձանց, տան, ազգին ու բոլոր աշխարհքին օգուտ մը չընող մարդկան կարգը կը սեպուին:

Տղոց աս հասակին մէջ (վեց տարիէն մինչեւ տասնուհինգ տարին) ուրիշ դժուարին բան մ'ալ մեծ մտադրութեան արժանի է, այսինքն՝ արդեօք զանոնք տան մէջ պէտք է կրթել, թէ հասարակաց կամ հրապարակական գպրոցի մը մէջ: Հարուստները հասարակօրէն տան մէջ

առանձին վարպետներու եւ դաստիարակներու ձեռքին տակ իրենց զաւկրները կրթել տալն աւելի աղէկ ու օգտակար կը սեպեն. ինչու որ կը վախնան թէ անոնք բազմութեան ու այլ եւ այլ բնաւորութիւն ունեցող տղոց մէջ ֆիզիքապէս ու բարոյապէս կը մնասուին, եւ միանգամայն կը բաղձան որ զաւկրնին՝ դպրոցը սորվելու ուսման ժէն զամ՝ ուրիշ բաներու մէջ ալ կրթուին: Աս կարծիքն ու բաղձանքը միայն ան ատեն շիտակ ու գովելի կրնայ ըլլալ, երբ որ տղաք իրենց հասակակիցներուն ու հաւասարներուն ընկերակցութենէն բոլորովին չեն զատուիր, եւ միանգամայն անանկ դաստիարակներու ձեռքն ու խնամոցը կը յանձնուին, որոնք ամէն հարկաւոր պահանջմանքները կատարելու կարողութիւն ունին: — Իսկ եթէ ծնողք իրենց զաւկրները հրապարակական դպրոցներու մէջ կրթելու կու տան, պէտք է որ առաջաբնէ աղէկ մտածեն ու անանկ դպրոց տան, որուն կարգաց, կրթութեան եւ ուսմանց վրայ ապահովութիւն ունին, եւ անկից ետքը ալ պէտք չէ որ տղոց ան դպրոցին մէջ սորվելու եւ սորված բաներուն վրայ քննիչ ու դատաւոր ըլլան. որովհետեւ աս բանս շատ շար հետեւանքներ ունի, որոնց մէկն ալ աս է՝ որ տղաքն ալ առջեւնին դրուած ուսման վրայ քննիչ ըլլալու կը համարձակին, որով իրենց յառաջագիմութեան շատ մեծ արգելք կ'ըլլայ:

16. Գաստիարակն ինչ հանդամանքներ պիտ'որ ունենայ, ինչ ընթացք պիտ'որ քոնէ իր ամէն մէկ աշակերտին հանդամանոց համեմատ:

Հիմակուան մարդիկներուն մէջ տեսնուած ընթացքն ու պտուղները բաւականապէս կը ցուցնեն որ դաստիարակութիւնն ու կրթութիւնը հասարակօրէն այնպէս ի գործ չի դրուիր, ինչպէս որ հարկաւոր ու բաղձալի է: Թէ որ աղէկ ու խորունկ քննութիւն ընելու ըլլանք, աս բանիս մէջ գլխաւոր պակասութիւնը կամ յանցանքը վարպետներու եւ դաստիարակներու վրայ կը գտնենք. ինչու որ ասոնք հասարակօրէն առանձնական շահու համար աս պաշտօնին մէջ կը մտնեն, ուստի միայն անուամբ՝ դաստիարակ ու կրթիչ մանկանց կ'ըլլան: Ար տեսնենք

որ աս պաշտօնին մէջ մանողները հասարակօրէն անանկ-
ներ են, որոնք դեռ կրթչի կարօտ են, ու միայն հան-
գիստ ապրելու եւ ուսմունքնին առաջ տանելու համար
վարպետ ու դաստիարակ ըլլալու կը յօժարին: Ասոր մաս-
նաւոր պատճառ մ'ալ կայ, որ շատ ծնողք կ'աշխատին
որ որչափ կարելի է՝ քիչ ստակով բանը լինցընեն. եւ
զաւկըններնուն վարպետ ու դաստիարակ ընտրած անձին՝
միայն դրսի ձեւին, զգեստին ու քաղաքավարական վար-
մունքին կը նային, միայն կը պահանջեն որ իրենց զաւ-
կըններուն վրայ իրենց ամբաստանութիւն չընեն ու տժգո-
հութիւն չցուցընեն: Քայց աղէկ դիտնալու է որ ծնողք
միայն ան ատեն իրենց զաւակաց կրթութեան շիտակ ու
յաջողակ ըլլալուն վրայ կրնան հաստատ յոյս ունենալ,
երբ որ վարպետներն ու դաստիարակները իրենց պաշտօնը
բարի խղճմտանքով, այսինքն ամէն ճշդութեամբ իբրեւ
իրենց յատուկ պաշտօնը կամ կոչման դորձքը, կատարե-
լու յանձնառու կ'ըլլան ու կ'աշխատին, եւ աս բանս ա-
ղէկ կատարելու Ֆիզիքական, բարոյական ու մտաւոր
յարմարութիւն ու կարողութիւն կ'ունենան, մտած գեր-
դաստաններնուն բուն մէկ անդամին կամ բարեկամին
պէս՝ խոհեմ ծնողաց հետ դաստիարակութեան մէջ բռնե-
լու կարգերնուն վրայ աղէկ ու կանոնաւոր ճամբով հաս-
տատ որոշում կ'ընեն, եւ կրթելու տղաքն իբրեւ իրենց
յատուկ զաւկընները կամ եղբարքը կը սեպեն:

Վաստիարակին կամ վարպետին առջի ու գլխաւոր
մտադրութիւնն աս պիտ'որ ըլլայ՝ որ իր խնամոց ու վե-
րակացութեան յանձնուած տղան ինչ բանի մէջ որ պի-
տի կրթէ ու մարդէ, ան բանին վրայ անոր սրտին մէջ
փափագ ու յօժարութիւն զարթուցանելու աշխատի. եւ
անկից ետքն ալ ամէն կերպով ջանայ՝ որ այն փափագն
ու յօժարութիւնը ամենեւեին չպաղի ու չմարի: Աս բանս
կրնայ դաստիարակ մը շատ աղէկ յաջողցընել, եթէ իր
խնամոցը յանձնուած տղան կարող կ'ըլլայ համոզել՝ որ
ուսում սորվիլն ինչչափ հարկաւոր ու պատուական բան
է, անկից զատ ան բանին իրեն մեծ պատիւ բերելիքն ու
միանդամայն դիտութենէն առաջ եկած օգտին ինչչափ
մեծ ու պատուական ըլլալը միտքը կը խոթէ: Երբեմն

երբեմն զանազան պարագաներէն առիթ առնելով, ազի-
տութեան վնասներն ու մարդն արհամարհելի ընելը տղուն
հասկըցընելու որ ըլլայ, անոր սրտին մէջ ուսման փա-
փազն ու սորվելու մէջ յարատեւելը աւելի կը հաստատէ:

Արովհետեւ գիտութեան մէջ կտոր կտոր կամ ա-
ռանց կապակցութեան ու հետեւութեան եղած ուսումն
ամենեւին օգուտ չ'ըներ ու հաստատուն բան մը չի կրնար
ըլլալ, անոր համար պէտք է որ ուսման նիւթի մը մէջ
պակասութիւն ու անկատարութիւն մը տեսնուած ատեն
անիկայ շիտկելու եւ կատարելագործելու աշխատուի,
եւ անիկայ կատարուելէն ետքը՝ ուրիշ ուսման կամ սոր-
վելու նիւթի անցնուի, որ յառաջագիմութիւնը հաս-
տատուն ու կատարեալ ըլլայ: Միայն հիմնական գիտու-
թիւնը, այսինքն սորվուած բանը հաստատ ու հիմամբ
գիտնալն օգտակար կրնայ ըլլալ, իսկ վեր ի վերոյ կամ
հարեւանցի սորվիլն ու միայն կիսկատար հմտութիւն ու-
նենալը՝ միայն առ երես օգուտ ու արտաքին պարծանք
մը կը բերէ: Օրինակի համար ըսենք. մայրենի լեզուին
ուսման մէջ եթէ կանոնները հիմամբ չսորվուելու ըլլան,
բառերուն բուն բնական (նկարագրական) միտքն ու ետ-
քը երկրորդական կամ բարոյական միտքը չսորվուելու
ըլլայ, քերականութիւնը վեր ի վերոյ սորվուած կ'ըլլայ,
եւ նոյն իսկ մայրենի լեզուին վրայ կատարեալ հմտու-
թիւն չ'ունեցուիր, եւ աղէկ պատրաստութիւն մը չի-
ստացուիր օտար լեզու մ'ալ հիմամբ սորվելու:

Վնենէն աւելի ցաւելու բան կ'ըլլայ, երբ որ վար-
պետը կամ դաստիարակը գիտութեան մէջ խորունկ
գացած չ'ըլլար, եւ իր աշակերտէն միայն քանի մը դաս
աւելի սորված կ'ըլլայ: Անն անանկ վարպետներ ալ՝ որ
իրենց կրթելու աշակերտէն շատ աւելի բան գիտեն, բայց
կամ հարեւանցի ու գաղջութեամբ կը սորվեցընեն եւ
կամ հազար ու մէկ դժուարին ճամբաներէ կ'երթան ու
անցարմար կարգ մը կը բռնեն: Շատերն ալ թէպէտ
գիտցածնին աղէկ սորվեցընելու կամք ու փափագ ունին,
բայց չեն կրնար աշակերտներուն սրտին մէջ սորվեցընե-
լու ուսման վրայ սէր զարթուցանել, իրենց անձին ու
պաշտօնին վայելուչ յարգանքն ու պատիւը անոնց մտքին

մէջ հաստատել, եւ տղան ան աստիճանի հմտու-
թեան ու կատարելութեան հասցրնել, որուն հասնելու
էր՝ իր բնական կարողութեան ու յաջողակութեան ու
անցուցած ժամանակին նայելով: Անն ուրիշ վարպետներ
ալ, որոնք կրթութեան ու դասատուութեան ատեն ա-
նանկ վարմունք մը կը ցուցրնեն ու անանկ կը շարժին, որ
աշակերտը յայտնի կը տեսնէ՝ թէ իր վարպետն իր կրթ-
թութեան մէջ ինչչափ ակամայ ու ձանձրութեամբ կը
շարժի, եւ ինչպէս կրթութեան ու դասին լմրննալուն կը
փափագի ու կը սպասէ: Աւրիշ անկարգութիւն մ'ալ
կայ՝ որ շատ անգամ բոլոր դասատուութեան ատենը մի-
այն վարպետը կը խօսի, կը մեկնէ ու շատխօսութիւն
կ'ընէ, որն որ՝ թէպէտ եւ կրթութեան կամ սորվեցու-
ած բանին մէջ պակասութիւն մ'ալ չըլլայ, շատ անյար-
մար ու անպիտան ձամբայ է. մանաւանդ եթէ ան երկայն
խօսքերուն մէջ պատշաճ կարգ ու կանոն մը չ'ըլլար, եւ
խառնաշփոթութիւն ու նաեւ անհմտութիւն ալ դըտ-
նուելու ըլլայ, ալ անկից ետքը աշակերտը չէ թէ միայն
բան մը շխտովիր, հազա քաշած բռնութեան համար
ձանձրութիւն ալ զգալով՝ սորվելու նիւթէն եւ ուսու-
մէն կը զգուի: Արդ ճնողք իրենց ընտրած վարպետին
կամ դաստիարակին վրայ աս կերպ պակասութիւններ ու
սխալներ տեսածնուն պէս՝ պէտք է որ ուրիշ աւելի յար-
մար ու հմուտ դաստիարակ մը փնտռեն, բայց ոչ երբեք
աշակերտին առջեւը վարպետն արհամարհեն, ինչու որ
ասով ընդհանրապէս ամէն վարպետներուն յարգն ու
պատիւը կ'արհամարհուի ու կը կորսուի:

Առհասկան վարպետն իր աշակերտը միշտ իր խոր-
հուրդներուն խորհրդակից կ'ընէ, կամ թէ ըսենք, իր
աշակերտին հետ միշտ մտաւոր հաղորդակցութեան մէջ
կը գտնուի, եւ անանկ կը վարուի որ աշակերտն անոր
բաժներէն կամ տուած նշաններէն՝ անոր միտքը կ'իմա-
նայ, ըսելիքը չըսած՝ կը հասկընայ, եւ յառաջուրնէ
բաժներէն՝ շիտակ հետեւութիւններ կը հանէ: Աս կեր-
պով միայն կարգաւորեալ ու կանոնաւոր ձամբով մտա-
ծող մարդիկ ու արամբաններ կրնան շատնալ, որոնց
մէկն աւելի կ'արժէ, կ'ըսէ իմաստուն մը, քան թէ հա-

զար ու բիւր ինք իրեն շարժող մեքենայի պէս վարպե-
տական ճամբաներ սորվողներ ու բանեցրնողներ :

Յայտնի բան մըն է, որ տղոց ընդունակութիւնը
միօրինակ ու միակերպ չէ, անոր համար շատ անգամ
խիստ դիւրին բաներն ալ երկայն խօսքերով ու մեկնու-
թիւններով տասը հեղ բացադրելու է ոմանց: Ընդհան-
րապէս խօսելով՝ ճշմարտապէս վարպետ դաստիարակը
շուտով կրնայ բուն միջոցն ու ճամբան գտնել՝ շատ պինդ
գլուխներն ու գուլ միտքերն ալ բանալու, եւ առանց
շատխօսութեան՝ գիտութեանց լոյսն անոնց մէջ խոթե-
լու: Պէտք չէ որ ամէն անգամ միայն ականջը՝ տղուն
միտքը մտնելու բանին կամ ուսման միակ ճամբան ըլլայ.
պատկերաձեւ նկարներ, գաղափարներ, զանազան առար-
կաներ ցուցրնող ու աչքին առջեւ դնող ձեւեր ու օ-
րինակներ, ինչպէս նաեւ աղիւսակներ ու այլ եւ այլ
ստուերագիրներ, չէ թէ միայն մտաց զօրութեան՝ հապա
նաեւ յիշողութեան ալ կ'օգնեն, ու շատ անգամ կրթու-
թիւնը զարմանալի կերպով մը կը դիւրինցրնեն:

Վարպետին ըրած ամէն մէկ հարցումը պէտք է
որ բացայայտ, կարճ ու ամփոփ ըլլայ, որով հոգեկան զօ-
րութիւնները շատ աղէկ կ'արթննան ու կը բանին, մտա-
դրութիւնն աւելի կը սաստկանայ ու խորհրդածու-
թիւնը, այսինքն եղած հարցման կամ առջեւը դրուած
նիւթին վրայ մտածութիւնն աւելի կը զբաղի: Պէտք է
որ աշակերտը առած պատասխանը քանի մը հեղ կրկնէ,
եւ եթէ սխալ մ'ընելու ըլլայ, նոյն սխալմունքին բուն
պատճառը փնտռելու, գտնելու եւ բացատրելու է:

Թէ որ տղայ մը հասկըցածը կամ ըմբռնածը խօս-
քով չիկրնար բացատրել, հասարակօրէն իբր յայտնի ա-
պացոյց մը կրնայ սեպուիլ՝ որ վարպետին աւանդելու
կամ սորվեցրնելու կերպին մէջ պակասութիւն կայ, եւ
թէ աւելի վարպետը խօսեր է՝ քան թէ աշակերտը, այս
ինքն տղան ինք զինքը չէ կրթեր ու վարժութիւն չէ
ստացեր հասկըցածը խօսքերով զգալի ընելու եւ ուրիշ-
ներուն հաղորդելու: Թէ որ տղան առջեւը դրուած
հարցման ամենեւին պատասխան տալու չըլլայ, պէտք է
աղէկ մը քննել ու հասկընալ որ աս բանիս պատճառն

արդեօք անգիտութիւնը կամ անկարգ վախկոտութիւնն է, թէ մտքին ցրուած բլլալը կամ անմտադրութիւնը: Աս պակասութիւններուն թէ մէկին ու թէ մէկալին ապահով դեղն ու ճարը կրնայ խոհական վարպետը ամէն մէկ տղուն բնական հանգամանայ ու բնաւորութեան համեմատ գտնել ու բանեցընել: Անգիտութիւնն ու անկարգ կամ անպիտան վախկոտութիւնը շիտկելու համար աւելի յարմար դեղ ու միջոց է քաղցր ներողամտութիւնը, համբերութիւնն ու բարեկամական կամ սիրալիք վարմունքը, քան թէ բարկութեամբ տղուն վրայ փրփրութիլը, մարմնաւոր պատիժ տալը, տխուր եւ տժգոհ կերպարանք ու վարմունք ցուցընելը: Իսկ մտաց ցրումը կամ անմտադրութիւնը շիտկելու ամենէն ապահով միջոցն ու ճամբան աս է՝ որ տղան իր ամէն գործքերուն ու վարմունքին մէջ հաստատուն ու միակերպ կարգ մը բռնելու եւ պահելու վարժի*:

Տղոց դատողական զօրութեան շատ մեծ օգուտներ կ'ընէ՝ ըմբռնմունքները կամ բանի մը բուն ինչ բլլալն որոշելու մէջ վարժութիւն ստանալը: Աս բանս աղէկ ու յաջողակի կատարելու համար պէտք է որ միշտ իրեն ներկայ կամ մօտ ու աւելի զգալի բլլող առարկաներէն սկսուի. ինչպէս, տղուն քիչ խօսքով բայց կատարեալ բացատրութեամբ պէտք է ըսել տալ թէ ինչ է ծառ մը, խոտ մը, ծաղիկ մը, ինչ է սեղան մը, կառք մը, տուն մը. ինչ է ազահութիւնը, ծուլութիւնը, ինչ է գետ մը, մրրիկ մը, եւ այլն:

* Եւեթանուն Գանդ փիլիսոփային համար կը պատմուի՝ որ իր երիտասարդութենէն վեր միտքը շուտ մը ցրուելու պակասութիւնն ունէր. անանկ որ եթէ մէկ գաղափարի կամ մտածութեան մէջ խորունկ ընկղմած ու բոլոր իր մտաց ուժն անոր վրայ հաստատած կեցած ատենը՝ ականջը փոքր ձայն մը հասնէր, կամ ճանճ մը իր մօտը կամ վրան գար, կը շփոթէր, միտքը կը ցրուէր, ու շատ աշխատելու էր որ իր առջի խորունկ մտածութեան գառնար ու մէջը մտնէր: Արդ՝ շատ հաւանական է որ աս պակասութիւնը կամ մոլութիւնը իր վրայ եկեր ու մնացեր է պղտիկութեան ատեն առած կրթութեան բարեկարգ եւ կատարեալ շրջալէն:

17. Արթուրեան եւ ուսմանց մէջ դաստիարակին բռնելու
ընդհանուր կարգերը:

Շոտ տեղս պատշաճ ու հարկաւոր կը սեպեմ գրու-
խաւոր նիւթերու վրայ ընդհանուր կարգ մը յօրինել, ու-
րոնք խոհեմ դաստիարակը՝ պայծառ, հանդարտ ու ա-
ռողջ օգով սենեակի մէջ իր աշակերտներուն տարիքին
ու ընդունակութեան առանձին հանդամանքներուն հա-
մեմատ, եւ օրուան ամէն ժամերուն վրայ պատշաճապէս
բաժնելով՝ կրնայ աւանդել ու սորվեցընել:

Ա եց տարիքէն մինչեւ եօթը տարիքի մէջ ըլլող
տղոց համար բաւական է բարոյական զգացմունքներ դար-
թուցանել, աղէկ ու շիտակ արտաբերութիւն ստանալու
հիմ գնել, կարդալու նախակրթութիւնը, մտածելու եւ
բերնուց սորվելու կրթութեան սկզբունքը, բերնուց համ-
բելու, գրելու, նաեւ գծագրելու սկզբնական կրթու-
թիւնը, քրիստոնէական վարդապետութեան առջի ու
դիւսաւոր մասերէն մէկ քանին բերնուց սորվելը: Աս բա-
ներուն մէջ ասանկ տղաք օրը միայն երեք ժամ զբաղե-
ցընելու է, կանոնաւոր կարգով մը մէջ ընդ մէջ խաղ
խաղալ ու տան մէջ կամ տնէն դուրս ազատ օդի մէջ
շարժում ընել տալով: — Եօթը տարւրնէ մինչեւ տասը
տարեկան տղոց համար բաւական է քրիստոնէական կրօ-
նին ուսմանց սկզբնական կրթութիւնը, որուն մէջ հարց-
մամբ ու պատասխանով աւելի յիշողութեան մէջ ան
սկզբունքները պէտք է հաստատելու նայիլ, քան թէ
անոնց բարձրագոյն ըմբռնմանց համար միտքը յոգնեցը-
նել. դարձեալ՝ կարդալու կամ գրավարժութեան, գրե-
լու կամ վայելչագրութեան, գծագրութեան ու համարու-
ղութեան շարունակութիւնը. հայերէն լեզուի քերական-
նութիւնը՝ հիմնական սկզբունքներովը, համառօտ շարա-
դրութիւններով ու առանձինն ուղղագրութեան միտ
գնելով. բնական պատմութեան՝ առանձինն մարդուն
պատմութեան կամ մարդակազմութեան քանի մը դիւ-
րին սկզբունքը: Աս տարիներուն մէջ օրըստօրական կրթ-
թութիւնը կամ դասառութիւնը չորս ժամէն աւելի
պէտք չէ տեւել, եւ իւրաքանչիւր կրթութեան ժամուն

մէջի ատենը տղուն Ֆիզիքական, բարոյական, մտաւորա-
կան ու մարմնաւոր զբաղմունքը, նաեւ հարկաւոր շար-
ժումն ընելը աղէկ պէտք է կարգի դնել, եւ աս բանիս
մէջ ամէն մէկ տղուն առողջութեան հանգամանքին մտա-
դիր պէտք է ըլլալ, առողջութիւնը ակար ըլլողին ուս-
մունքն ու մտաւոր զբաղմունքը աւելի դիւրինցընելու եւ
կարճեցընելու նայիլ: — Տասը տարւոնէ մինչեւ տաս-
ուիրէք տարեկան տղոց սորվելու բաներն են, սուրբ
գրոց պատմութիւնը բարոյական խրատներով կամ պատ-
մութեան մէջի օրինակներէն պտուղ քաղելու գործնա-
կան միջոցները սորվելով, ուսողութեան դիւրին հրա-
հանգք, բնական դիտութեան սկզբունքը, ծանօթութիւն
այլեւայլ ազգերու, հայերէն քերականութեան մէջ աւ-
ելի կրթութիւն՝ երկայն շարադրութիւններով, տեղւոյն
ու ժամանակին համեմատ օտար լեզու մը, աշխարհա-
գրութիւն, պատմութիւն, մանաւանդ հին ազգաց պատ-
մութիւնը, նաեւ հոգեբանութեան դիւրին մասերը: Այս
ամենայն սորվելու համար օրը հինգ ժամ դասառու-
թեան սահմանելը բաւական է:

Սորվելու նիւթերուն եւ ուսմանց մէջ անանկ կարգ
դնելու է, որ մէյ մը հոգւոյն մէկ զօրութիւնը կամ կա-
րողութիւնը գործէ ու կրթութի, մէյ մը՝ մէկալը, բայց
զգուշանալու է որ փոփոխութիւնը շատ յաճախ չըլլայ,
ինչու որ ասով տղոց միտքը կը ցրուի ու սորվելու սկսածը՝
շուտով կը մոռնայ, որուն տղոց դիւրափոփոխ բնաւորու-
թիւնն ու թեթեւամտութիւնը արդէն միտեալ է:

Նամիջապէս կերակրէն ետքը՝ ինչպէս նաեւ ի-
րիկուան ուշ ատեն՝ դասառութիւն ու դասատուութիւն
ընելը, վարպետներու ալ աշակերտներու ալ շափէ աւելի
աշխատեցուցիչ ու յոգնեցուցիչ է, եւ իրենց առողջու-
թեան վնաս կու տայ: Աւտու՛մ սորվելու համար ամենէն
աղէկ ու պատշաճ ատենը՝ կէսօրէն առաջ է: — Իսկզբան
անդ կէսօրէն առաջ ժամ մը ու կէսօրէն ետքն ալ ժամ
մը դասառութեան համար բաւական է, բայց քանի որ
ուսմանց մէջ յառաջ կ'երթըցուի, մինչեւ վեց ժամ
դասառութեան ու սորվելու կրնայ որոշուիլ. սակայն աս
վեց ժամին ալ աւելին կէսօրէն առաջ պէտք է դնել.

իսկ օրուան մնացած ժամերը թող տալու է որ ուսանող-
ներն իրենց առանձնական ջանքովն ուսման ու քիչ մ'ալ
հանգստի ու դրօսանքի մէջ անցընեն :

Ինչ որու մ կամ սորվելու նիւթ ու առարկայ որ
կը սկսուի, պէտք է կանոնաւոր կարգով յառաջ տանիլ .
տեսականը կամ խօսքով ու կանոններով աւանդուած
ու սորվեցուած բանը՝ գործնականի դարձընել, իբր թէ
փորձով ուսանողին մտքին մէջ հաստատել, բան մը ա-
ղէկ հասկընալէն ու սորվելէն ետքը՝ ուրիշ նոր բան մը
անոր ետեւէն բերել, եւ ամէն մէկ սորվելու բանն ուսա-
նողին անձնական կամ մասնաւոր հանգամանաց ու ետ-
քէն մտնելու միջակին կարօտութեան ու հարկաւորու-
թեան մտադիր ըլլալով սկսիլ : Աս կտորիս մէջ ծնողաց
պարտքն ան է՝ որ դաստիարակութեան կամ ուսմանց
միջոցները (գիրք, եւ այլն.) ինչպէս ու որչափ որ հար-
կաւոր է՝ կրցածնուն չափ հոգան. ինչու որ եթէ կարո-
ղութիւն ունենալով՝ ասանկ բաներու մէջ անհոգութիւն
կամ չափազանց ճշգրութիւն՝ չըսեմ ազահութիւն՝ ընե-
լու ըլլան, ետքը իրենց զաւկըներէն պարտապատշաճ
չնորհակալութիւն ու երախտագիտութիւն չեն տեսներ .
որովհետեւ սորվելու ատենն անցնելէն ետքը, գլուխնին
պարսպ ըլլալով՝ իրենց ծնողաց սնտուկները լեցուն
գտածնուն պէս, անոնք ինչպէս գործածելիքնին ամե-
նուն յայտնի ու փորձով ճանչցուած բան մըն է * :

* Յիրաւի մտքը սրտին ցաւը չիկրնար ծածկել ու հանգարա
մտքով կենալ, երբ որ անանկ ծնողքներ ու գերդաստաններ
կը տեսնէ, որոնք ուրիշ ամէն բանի մէջ չէ թէ միայն շա-
փաւորն ու հարկաւորը, հապա տեւորդն ալ դնելու եւ գոր-
ծածելու ստակ ու միջոցներ կը գտնեն. տան պահարաններն
ու սնտուկները արծաթեղէններով, զարդարանքներով, տե-
սակ տեսակ զգեստներով ու գահարներով լեցուն կ'ըլլան :
Իսկ իրենց տղոց կարգաւորեալ կրթութեան ու դաստիարա-
կութեան հարկաւոր եղող միջոցները հոգալու համար քիչ
մը ծախք ընելու ատեն, կարծեա թէ յետին կարօտութեան
մէջ գտնուողի պէս ամէն կերպ ճշգրութիւնը կը ցուցընեն . աս
մախճանին համար քիչ մը ծախք ընելն իրենց չէ թէ մի-
այն ծանր, հապա տեւորդ կ'երեւայ : Բայց ասանկ ծնողաց
կամ տղոց աէր մարդկան այսպիսի չափազանց ճշգրութիւնը
ամենէն աւելի ու ամենէն առաջ իրենց մնաս կը հասցընէ,
որովհետեւ անկատար կրթութեամբ մեծցած տղան՝ անանկ
ճշգրութեամբ սնտուկներու մէջ պահուած ստակը քիչ ատե-
նուան մէջ նոյն իսկ պահուներուն աչքին առջեւը կը մտիւտ
կը ցրուէ :

Վաստիարակին վարպետութիւնը մէկ բանի մէջ ալ աղէկ պիտ'որ երեւայ, այսինքն՝ քանի որ ուսանողին միտքն աւելի կը բացուի, անոր եռանդը բորբոքելու է՝ ամէն տեսակ ճշմարիտ ու բարի ու գեղեցիկ բաներու վրայ ծանօթութիւն ու յարգ ունենալու: Անոր ազնուական զգացմունքը, մտաց փափուկ ախորժակն ու բանաստեղծական տաղանդն արթնցնել՝ բարձրագոյն ճարտարութեամբ յօրինուած հին ու նոր առարկաներ սորվեցրնելով, նկարներ ու շէնքեր ցուցրնելով, ընտիր մատենագիրներու աղուոր ու վարպետական հատուածներ կարգացրնելով, անոնց նմանելու ճամբան ու միջոցները ցուցրնել, վերջապէս յորդորէ ու կրթէ որ ինքն ալ իր մտքէն անոնց նման հատուածներ յօրինելու փութայ: Բայց եթէ տղան աս կտորին մէջ շատ վարպետական փորձեր ընելու եւ յաջողակութիւն ցուցրնելու ալ ըլլայ, պէտք չէ որ ծնողք իրենց զգացած ուրախութենէն շարժելով՝ դանհիկայ չափէ աւելի գովեն. որովհետեւ անով այդ յաջողակութիւնը ցուցրնող տղուն սրտին մէջ գտնուած պարկեշտութեան կամ երկչոտութեան կորսուելուն պատճառ կ'ըլլան, եւ անոր տեղը սրտին մէջ ինքնահաւանութեան եւ ուրիշները չհաւնելու մտլութեան սերմը կը ցանեն, որով անոր բարեբարութիւնը կ'աւրեն, որն որ ամէն գիտութենէ ու ճարտարութենէ վեր սեպելու է *:

Շատ զգուշութիւն ընելու է՝ նոյն իսկ արտաքոյ կարգի ու բարձր տաղանդի տէր ըլլող տղաքն ալ՝ իրենց ուժէն ու կարողութենէն աւելի շաշխատցրնելու, ինչու որ շափազանց մտաւոր գործունէութիւնը՝ մարմինը կը փճացրնէ, եւ կամ մարդը ցնորական, ինքնահաւան, պարծեցող, շոգմոզ, շողակրատ ու անհաւատ կ'ընէ. մանաւանդ եթէ մտածելու ըլլանք՝ որ այսպիսի դիպուածներու մէջ մտաւոր կրթութիւնը ոչ երբեք բարոյական կրթութեան հետ հաւասար կ'ըլլայ, եւ ասանկով տղուն

* Թէ որ Ներոն կայսրն իր խոհական վարժապետին Սենեկային խրատներուն ու սորվեցուցած սկզբունքներուն մէջ հաստատ մնար ու անարդ շողոքորթներու ձեռքը չկնար, որոնք զինքը սուտակասպասութեամբ համոզեցին՝ թէ ինք աշխարհքիս ամենէն կատարեալ մարդն է, յայտնի է՝ որ անանկ անօրէն եւ մարդկային ազգի թշնամի չէր ըլլար:

միտքը շատ ուսմունքով ու ծանօթութիւններով լե-
ցուելով՝ սիրտն ու բարքն անկիրթ կը մնայ * :

18. Գաստիարակութեան մէջ աս (8—15) տարւան տղոց
սորվելու գլխաւոր ուսմունքը :

Յարմար կերպով ու պատշաճ ժամանակով պա-
տանեկաց սրտին մէջ օրինաւոր պատուասիրութեան կայ-
ծը զարթուցանելն իմաստուն գաստիարակի մը առաջնոր-
դութեան տակ կրնայ ատենին աղէկ պտուղներ բերել ու
օգտակար ըլլալ . ինչու որ պատշաճաւոր պատուասիրու-
թիւնը կամ արժանաւոր պատուոյ բաղձալը զօրաւոր
գրգիռ մըն է մեծամեծ ու անուական եւ գովելի գործ-
քեր ընելու, միայն թէ օրինաւորին ու պատշաճականին
սահմանէն գուրս չելլէ : Աս վերջին կտորին աղէկ մտա-
դիր պէտք է ըլլալ խոհեմ գաստիարակը, եւ ուսում մը
սորվեցուցած ատենը՝ երիտասարդներուն փառասիրու-
թիւնը շափէ աւելի չգրգռելու համար՝ պէտք է որ աւելի
հեղ ու հանդարտ քան թէ զօրաւոր ու սաստիկ զգաց-
մունքներ զարթուցանելու նայի, հոգին շարժէ՝ քան թէ
բորբոքէ, ուստի եւ անանկ աղդեցութիւններ կամ տպա-
ւորութիւններ պատճառէ՝ որոնք կիրքերը չգրգռեն :

Մտքերնին աւելի ու օրէ օր արթնցող ու զար-
գացող պատանիներու համար շատ հարկաւոր ու ստի-
պողական բան է՝ աշխարհքիս պատմութեան հոգին ի-
րենց ծանօթ ընել . այսինքն՝ չէ թէ միայն աս կամ ան

° Աս խօսքերով չենք ուզեր ըսել, որ ծնողք իրենց սրամիտ
զաւկրներուն գաստիարակութեան ատենը՝ խնայելով ուս-
մունք սորվեցընել տան, կամ մէկ քանի բան սորվեցընել տա-
լով գոհ ըլլան, հապա աս կ'ուզենք ըսել՝ որ տղոց միտքը
շատ շատ սորվելու նիւթերով քիչ ատենուան մէջ չճանրա-
րեանին. ինչպէս կը տեսնենք հիմակուան ատենս՝ որ շատ
ծնողք իրենց հինգ վեց տարւան զաւկրներուն շատ սրամիտ
ու ընդունակ են ըսելով՝ քանի մը լեզու մեկանց եւ ուրիշ
բաներ ալ (երաժշտութիւն, գծագրութիւն) սորվեցընելու
ետեւէ կ'ըլլան, խեղճ տղան օրը տասը ժամի շափ աշխատ-
ցընելով, որպէս զի կարող ըլլան ըսել թէ իրենց եօթը
տարեկան տղան լեզուսպէտ ու սորված է : Չենք կրնար ու-
րանալ՝ որ երբեմն աս կերպով իմաստուն երիտասարդներ
կրնան ելլել, որ տեսնողներուն զարմացում կը պատճառեն.
բայց մէկ երկու յաջող դիպուածները՝ հարիւրաւոր փնասնե-
րուն ու անյաջող դիպուածներուն դէմ չէ թէ միայն օրինակ
չեն ըլլար ու բան մը չեն արժեր, հապա նաեւ եպերելի են :

գիպուածքն ու անցքը կամ պատահմունքն իրենց պատ-
մել, հապա նաեւ իւրաքանչիւր գիպուածին ատենին ու
անոր մէջ գործող անձինքներուն նկարագիրը, որ է՝
ներքին հանգամանքն ու որպիսութիւնը բացայայտել,
եւ ցուցնել թէ աշխարհքիս մէջ հանդիպող աս կամ
ան գիպուածքէն կամ անցքէն, մի միայն երեւելի ու ա-
նուանի հզօր մարդու մը աս կամ ան գործելու կերպէն
ինչ հետեւութիւններ հարկաւորապէս դուրս ելան: Անդ-
հանուր պատմութենէ ետքը միայն հայրենի կամ տոհ-
մային պատմութիւնը իբրեւ ամենէն աւելի հմտացուցիչ
ու յորդորիչ ուսում պէտք է սեպել ու սորվեցնել:

Հաս հարկաւոր եւ պիտանացու ուսում մըն է,
նաեւ տիեզերաբանութիւնը, այսինքն երկրի ու երկնից
կազմութեան ծանօթութիւնը, երկիրը իբրեւ երկնային
մարմին կամ մոլորակ ու մարդուս յատուկ բնակարանը,
եւ մարդուն անոր վրայ իր ամենակարող Արարչին ու ա-
մէն ստեղծուած բնուար ու անբան, գործարանար
կամ կենդանի ու անգործարանար կամ անկենդան ա-
րարածներու հետ ունեցած յարաբերութիւններն ուսա-
նողաց ծանօթ ընելով, անոնց միտքն ասոնց մէջ գործ-
նականապէս կրթել: Աս կտորիս մէջ նկարներով հրա-
հանգելը, զոր օրինակ գրքին մէջ սորված ուսումնին՝ աշ-
խարհագրական տախտակներով, կենդանեաց, տնկոց,
հանքերու, մեքենաներու եւ ուրիշ ասոնց նման պատ-
կերներով աւելի բացատրելը, պատանեաց ըմբռնումը
գիւրինցընելու եւ իրենց յիշողութեան օգնելու շատ
յարմար ու հարկաւոր է: Ինչպէս նաեւ ընդհանուր պատ-
մութիւն աւանդուած ատենը՝ ժամանակագրական աղիւ-
սակներով աշխարհքիս երեւելի գիպուածները շիտակ
կարգով առջեւնին դրուելու ըլլայ, պատմութեան ամէն
մէկ մասը մտքերնին աղէկ կը տպաւորուի: Այն իսկ
բնութեան առարկաները դիտելով՝ գիտութեան մէջ
յառաջ երթալու կրնայ վարժեցընել իմաստուն դաս-
տիարակն իր աշակերտները. ինչպէս, պայծառ ու անամպ
գիշերուան ատեն՝ աստեղազարդ երկինքին վայելու-
թիւնն ու փառաւորութիւնը դիտելը՝ սրտին մէջ ա-
նանկ զուարճութիւն ու փափագներ կը զարթուցանէ, որ

մարդ խօսքով չի կրնար բացատրել: Աս ասանկ բլլալով,
դիւրրմբռնելի ու հասարակ ժողովրդեան համար դրուած
աստղաբաշխութեան գիրք մը ուսանողաց շատ մեծ օգուտ
կ'ընէ, միտքը կրթելէն ու զուարճացընելէն զատ, զինքը
ճշմարիտ աստուած պաշտութեան ու աստուած սիրութեան
մէջ կը հաստատէ: Ասանկ օգտի պատճառ կ'ըլլայ նաեւ
աղէկ բնական պատմութեան գիրք մը, որն որ տղան ի-
բրեւ դիւրին ուսում սորվելու կը յօժարի, ու սորված
բաներուն օրինակները նկարներու վրայ տեսնելէն զատ,
խմաստուն ու ժիր դաստիարակին առաջնորդութեամբը
բնութեան առարկաները դիտելով, զանազան կենդանի-
ները, տունկերն ու հանքերը, նաեւ պղտիկ կենդանի մը
պահելով, պարտեզի մէջ քանի մը տեսակ ծաղիկներ,
մէկ երկու ծառ խնամելով, աղուոր ճճիներ, թիթեռներ,
եւ այլն, ժողովելով ու կարգի դնելով, շէ թէ միայն
կը զուարճանայ, հասցա կարեւոր ու օգտակար հմտու-
թիւններով միտքը կը կրթի, մանաւանդ երբ որ մտադիր
կ'ըլլայ թէ որ խոտի կամ ծառի վրայ աս կամ ան որդը
կը կենայ ու կը սնանի, եւ ինչպէս որդ մը զանազան տե-
սակ կեանք կ'ունենայ՝ մինչեւ որ թիթեռ կ'ըլլայ:

Մեծ յառաջագիմութեան պատճառ է եւ շատ
օգուտ ու դիւրութիւն կ'ըլլայ դաստիարակութեան ու
դաստիարակներու եթէ տեղ տեղ՝ երեւելի դպրոցներու
մէջ՝ բնական դիտութեան կամ ֆիզիքական գործիքներ
զանուին: Բայց թէ եւ չզանուին, քաջակիրթ դաստիա-
րակը կրնայ բնութեան գլխաւոր ու հասարակ երեւոյթ-
ներուն վրայ, ելեքարական, մազնիսական ու կալուանեան
երեւոյթներուն, շոգւոյ գործածութեան ու մեքենանե-
րու մէջ բրած ազդեցութեան վրայ, նաեւ շարժման,
ծանրութեան, ձգողութեան ու մերժելու պարզ ու դիւ-
րին օրէնքներուն վրայ մեկնութիւններ տալով իր աշա-
կերաններուն, եւ կարելի եղածին շափ՝ փոքր ֆիզիքական
փորձերով իրենց դիւրրմբռնելի ընելով, նաեւ ջրոյ, լու-
սոյ, օդին, ջերմութեան, եւ այլն, բնութեան վրայ դիւ-
րին խօսակցութիւններ ընելով, զանոնք հմտացընել եւ
ուսման օգուտն ու զուարճութիւնը յայտնի ցուցընել:
Աս կերպ հրահանգներուն մէջ դաստիարակը կրնայ նաեւ

խոշորացուցով փոքր կենդանիներու, ճճիներու, անկերու եւ ծաղիկներու վրայ զննութիւններ ընելով, իր աշակերտներուն մտքին ու սրտին վրայ անանկ տպաւորութիւններ ու աղղեցութիւններ ընել, որ արարածոց սքանչելի կազմուածքին վրայ գրուած ամենէն ընտիր դրքերէն աւելի կը հմտացընեն ու կը կրթեն:

Վաստիարակութեան մէջ սորվուելու գլխաւոր բաներուն մէկն ալ զանազան ուսմունքներէն զատ՝ այլեւ այլ լեզուներ են: Հոստեղս ամէն բանէն առաջ ծանուցանել հարկաւոր կ'երեւայ, որ լեզուաց ուսումը միայն իբրեւ պարապ զուարճութիւն կամ պարծանք մը, եւ կամ վերին ու ստորին կարգի մարդիկն ու քաղաքացիքն իրարմէ որոշող հմտութիւն մը պէտք չէ սեպել. ապա թէ ոչ՝ սնտոի աշխատութիւն ու պարապ ժամաւաճառութիւն կ'ըլլայ: Հասկա ամէն մէկ լեզուին օգուտը ճանչնալով ու դիտելով՝ աւելի օգտակարն ու օգտակարէն առաջ աւելի հարկաւորը սորվեցընելու փոյթ ունենալ: Եւ սա բանս ըստ կարգի ու աւելի օգտի կատարելու համար առաջին ու գլխաւոր դիտելու բանն է՝ իւրաքանչիւր ազգի ու իւրաքանչիւր տեղւոյ մասնաւոր պարագաներն ու հարկաւորութիւնը: Ասոնցմէ զատ մեր ազգին քանի մը Եւրոպական տէրութեանց (Ռուսիայի, Աւստրիայի, Ալպերիայի ու Մոլտաւիայի) մէջ դանուած մասերուն համար նախ առաջին հարկ կը համարիմ ծանուցանել, որ սա տէրութեանց դպրոցական կարգերուն համաձայն՝ հին յունարէն ու լատիներէն լեզուները սորվեցընելը սովորութիւն եղած է: Ասոնց հետ հարկաւորապէս կը կապակցի հնագիտութեան ուսումը, որուն մէջ կ'իմացուի դիցաբանութիւն, իւրաքանչիւր հին ազգին սկսելուն տեղեկութիւնը, մատենագրաց ծանօթութիւնը, որ է գրականութեան պատմութիւնը: Եւ ասոնց ամէն մէկը կատարեալ հմտութեամբ սորվելու համար աշխարհքիս երկու ազգերուն՝ Յունաց ու Հռոմայեցւոց կամ Վատիններուն լեզուաց ուսումը հարկաւոր կը սեպուի, անոնց հեղինակներուն վայելելութիւնը, ոճը, ոգին, որն որ թարգմանութիւններէն այնչափ ճիշդ չե՛ն ճանչցուիր, ազէկ ու հիմնովին սորվելու համար: Ասոնցմէ

զատ նաեւ զանազան բարձր դիտութիւններ, բժշկական
 նութիւն, աստուածաբանութիւն, իրաւագիտութիւն,
 եւ այլն, սորվողներուն մասնաւորապէս հարկաւոր են աս
 լեզուները, շէ թէ միայն հին հեղինակներէն նոյն ուս-
 մանց վրայ հմտութիւններ ժողվելու, հապա անոնց վճիռ-
 ներն ու կարծիքները աւելի հաստատութեամբ ճանչնա-
 լու, քննելու եւ որոշելու համար * :

Իսկ Օսմանեան տէրութեան հպատակ բլլոյ ազգայ-
 իններնուս համար ուրիշ կարեւոր լեզու մը կը տեսնենք,
 որ է տաճկերէնը. որուն վրայ խօսիլն աւելորդ է, մէյ
 մը՝ որ տէրութեան առջեւը աւելի համարում ունենալու
 եւ անոր գործոց մէջ աւելի հաստատութեամբ յառաջ
 երթալու համար աս լեզուին կարեւոր բլլալուն վրայ ոչ
 ոք կը տարակուսի, եւ նոյն իսկ մայրենի լեզուէն ետքը
 կամ մայրենի լեզուին հետ խօսուիլն ու գործածուիլը՝
 անոր հարկաւորութեան վկայութիւն մըն է : Բայց մենք
 հոսաեղս մասնաւորապէս խօսիլ պատշաճ կը սեպենք ա-
 սոր համար որ ծնողաց ու դաստիարակներուն յայտնի
 ընենք թէ ազգային հայերէն լեզուին ուսումէն եւ անի-
 կայ հիմամբ սորվեցրնելէն ետքը, տաճկերէն լեզուն ալ
 հիմամբ ու քերականական ուսումով սորվեցրնելու փոյթ
 տանելու է : Կնչու որ եթէ աս լեզուն անփոյթ ընելով՝
 ուրիշ արտաքին լեզուներու առաւել փոյթ տարուելու
 բլլայ, ազգիս երիտասարդները տէրութեան առջին ու
 անոր գործքերուն մէջ այնչափ յառաջագէճ չեն բլլար,
 մասնաւանդ որ հպատակի մը իր տէրութեան վրայ աւելի
 սէր ու հաւատարմութիւն ունենալն աւելի յայտնի կ'ըլ-
 լայ, երբ որ իր մայրենի լեզուէն ետքը նոյն տէրութեան
 լեզուն ուրիշ ամէն լեզուներէն վեր ու կարեւոր դատե-
 լով՝ հիմամբ սորված կ'ըլլայ :

Մեր կարծիքը, որն որ կարծենք թէ ուղիղ կարգի

Ս երկու լեզուաց ուսման համար գրածնիս՝ միայն յոյն ու
 լատին լեզուաց կարեւորութիւնն ու պատուականութիւնը
 ծանօթ ընելու համար գրեցինք. ապա թէ ոչ՝ ծնողք եւ
 դաստիարակները իւրաքանչիւր տեղւոյ ու տէրութեան օրի-
 նաց եւ ուսմանց կարգին պիտ'որ հետեւին աս կտորիս մէջ,
 եւ միայն աս լեզուաց ուսումն ազատ եղած ատեն՝ իրենց ու-
 սանողաց զանոնք սորվեցրնելը կամ շտրվեցրնելը՝ իրենք
 ուրիշ պարագաներէն մտածելով պիտ'որ որոշեն :

ալ համաձայն է, եւ ամէն խորունկ մտածող ծնողաց ու դաստիարակներու ալ ընդունելի կ'ըլլայ, աս է՝ որ ազգային մայրենի լեզուն ու տերութեան լեզուն հիմամբ սորվելէն ետքը, արտաքին լեզուաց մէջ դաղղիւրէն լեզուն, որն որ հիմայ գրեթէ ընդհանուր լեզու մը եղած է, ըստ կարգի սորվեցրնելը կարեւոր է: Քայց ասոր մէջ ընդհանուր կարգ կամ կանոն մը չիկրնար դրուիլ, հապա խրաքանչիւր տեղւոյ կամ դաւանի ու ամէն մէկ աղուն ընդունակութեան եւ առողջութեան հանգամանքին մասնաւորապէս մտադիր ըլլալով, աս լեզուն ալ դպրոցներու եւ անանձին կրթութեան մէջ սորվեցրնելու է: Ասոնք ծանուցանելէն ետքը, լեզուներն ու ամենէն աւելի ազգային լեզուն հիմամբ սորվելու վրայ խօսինք:

Աւանդուաց մտքին պատշաճաւոր կրթութեան համար շատ յարմար ու հարկաւոր է մայրենի լեզուին կանոններն ու քերականութիւնը կամ դպրութիւնը կանոնաւոր ու հաստատուն կարգով եւ աւելի գործնականապէս աւանդել: Ալեզուները ամէն մտաց բնութեանը ներքինն ու ամէն մտածութեան կերպերուն շտեմարաններն ըլլալէն ի դատ, նաեւ մարդկան մտածութիւններն իրարու հաղորդելու գործիք, եւ աշխարհքիս ընկերական կարգին ու կցորդութեան սերտ կապերն են: Քայց աս ասանկ ըլլալու եւ յաջողակի յառաջ երթալու համար՝ հարկաւոր է որ առաջ մայրենի լեզուն հիմամբ սորվուի, եւ անոր կերպ կերպ սճերը հասկընալով եւ անոնց մէջ աղէկ վարժելով, ազգային գրականութեան որպիսութիւնը պատշաճ հմտութեամբ ճանչցուի, որպէս զի արտաքին լեզուաց ուսումն ալ հաստատ ու օգտիւ ըլլայ: Հարկ չէ մասնաւորապէս դրել որ աս կտորիս մէջ ամենէն աւելի դիտուելու բանը՝ վարպետին կամ ուսուցչին եւ ուսման գրքին որպիսութիւնն ու կատարելութիւնն է: Սորվելու բաները շափէ աւելի ու բուն ժամանակէն առաջ դժուարցրնելը, ինչպէս ասոր դէմ՝ վեր ի վերոյ կամ դիւրութեամբ անցնիլը, այն երկու մեծ սխալներն են՝ որոնց մէջ անհմուտ կամ կէս կրթեալ ուսուցիչները կ'իյնան: Արաւի գործնականապէս աշակերտները առաջ տանիլն աւելի յարմար ու օգտակար ճանչցուած է, բայց

Տիմամբ սորվեցրնելու ճամբան արէկ ճանչցող վարպետը
չէ թէ միայն հաստատուն տեսական կամ վարդապետա-
կան ուսումն անպիտան շիտեպեր, հապա մեծ ջանքով
բանին մասանց սկզբունքին ու լուծմունքի ու քննութեան
մտադիր կ'ըլլայ, ու իր աշակերտներուն միտքն ու յիշու-
ղութիւնը, լեզուն ու գրիչը միակերպ կը զբաղեցրնէ :
Մարդ երբ որ միտքը կը բերէ՝ թէ մեր հայերէն գրաբար
լեզուն աշխարհքիս կատարեալ լեզուներուն մէկն է, ու-
րուն բառերն ու ոճերը մարդկային մտաց ամէն խորհուրդ-
ները բացատրելու բառական են, ան ատեն կրնայ հաս-
կրնալ թէ յիշողութիւնն ինչչափ աշխատութիւն պիտ'որ
կրէ որ այն բառերուն ու ոճերուն պարունակած ըմբռն-
մունքներուն հարկաւորներն իրեն սեպհականէ, այս ինքն
իր մէջը ժողովէ. եւ թէ միտքը որչափ պիտ'որ յողնի ու
հրահանգի ան բառերուն յատուկ փոփոխմունքները,
համաձայնութիւնն ու դարձուածները եւ ոճերն ըմբռ-
նելու եւ ի գործ դնելու կամ գործածելու :

Համարողութիւնը կամ Թուարանութիւնը, Աւ-
տղութիւնը (մաթեմատիգա) ու Երկրաչափութիւնը յա-
տուկ գիտութիւններ են, եւ որովհետեւ մտաց զօրու-
թիւնները մէկտեղ կը բերեն ու միտքը (բանը) կը կրը-
թեն, անոր համար պէտք է անոնք պատշաճ կարգով
բանեցրնել ու գործածել : Բայց մեծ ուսող (մաթեմա-
տիգոս) ըլլալու համար հարկ չկայ շատ զօրաւոր խելք
ունենալ, ինչու որ շատ տկարամիտ մարդիկ տեսնուած
են, որոնք վարպետ թուարան կամ համարող էին : Եւ
թէ պէտ կարգաւորեալ ու կանոնաւոր համարողութիւնը
մարդուն միտքը շիտեր, սակայն հիմակուան ատենս ասիկայ
եւ բնագիտութիւնն ու մեքենարանութիւնը՝ աշխարհ-
քիս վրայ կարգաւորեալ գործ տեսնելու կամ յաջողակ
ապրելու հիմերն են, ինչու որ հիմայ վաճառականութեան
ու արուեստներուն ասանկ արտաքոյ կարգի ծաղկած ա-
տենը համարողութիւնն ամէն բանէն վեր կը սեպուի :

19. Զղայական կարողութեան կամ զգացմանց
կրթութիւնը:

Մտաց կրթութեան հետ մէկտեղ ազնուական զգացմանց մշակութիւնը կամ փոյթը աղէկ կրթութեան երկու անիւներն են: Աւստի որչափ որ կարելի է՝ պէտք է ջանալ որ զգացմունքը կամ զղայական համարումը մտաց ու սրտին վրայ բարերար ու ախորժ ազդեցութիւն ընող, եւ մեր հայեցումաճքին ու մտքուր փափագներուն զուարճալի ու չափակցեալ եւ պատշաճական ըլլող բաներուն, միանգամայն դեղեցիկ կամ վայելուչ եղած բանին վրայ կանուխակեկ արթըննայ, կարգի դրուի, եւ մասնաւոր կանոններով կատարելագործի, որոնք սորվելու համար յատուկ գիտութիւն մը կայ:

Պէտք չէ նոր յառաջ եկող պատանիներուն ձեռքն ամէն կերպ բանաստեղծից գրքերը կարդալու տալ, որոնք աւելի երեւակայութեան՝ քան թէ սրտին ու մտքին վրայ ազդեցութիւն կ'ընեն, որովհետեւ ասոնք իրական աշխարհքէն մարդը գաղափարական աշխարհքը կը դարձնեն, այսինքն՝ մարդուն երեւակայութիւնը դրդուելով, իրական բաները թող տալով՝ ցնորքներու կը զբաղեցընեն, որոնցմէ ետ դառնալն ու իրական հաստատուն մտածութիւններ ունենալը՝ շատ դժուար է: Բայց աս ըսելով՝ չենք ուզեր խստիւ արդելուլ որ անոնց ձեռքն անվնաս քերթումներ կամ իմաստալից յօրինումներ չտրուին, մանաւանդ թէ օգտակար խորհուրդ կը սեպենք ազնիւ բանաստեղծութեան քիչ մը ատեն որոշելը: Նաեւ աղէկ կ'ըլլայ յարմար առթի մը համար բանաստեղծական յօրինում մը բերան առնել ու պատշաճ ձայնիւ արտասանել տալ, որովհետեւ Արտասանութիւնը չէ թէ միայն իր բնական, հասկա մտաւորական օգուան ունի. ինչու որ երկայն խօսք կամ յօրինում մը կանոնաւոր ճամբով կամ ըստ կանոնաց արտասանելն ու ըսելը չէ թէ միայն Ֆիզիքական, հասկա նաեւ մտաւորական օգուաններ ունի:

Ի՞նչ որ տղայ մը ազատական արուեստի մը յարմարութիւն ու միանգամայն հակում ունի, պէտք է ջա-

նալ որ անոր վրայ հարկաւոր եղած կանոնաւոր հրահանգն
ընդունի: Տղու մը յաջողակութեամբ ու աղէկ ճարտարու-
թեամբ աղուոր գիր գրելը՝ անոր գծագրութեան կամ
նկարչութեան յարմարութիւն ունենալը կը յայտնէ. եւ
երբ որ տղայ մը խաղալու ատեն կամ զբօսանքի մէջ
գրչով, կապարեաց գրչով, կաւիճով, եւ այլն, զանազան
ձեւեր ու նկարներ վայելուչ ու բնութեան համաձայն կը
գծէ, նաեւ աչաց սրութիւն կամ առողջութիւն ու մի-
անգամայն ձեռաց արագութիւն ունի, պէտք չէ անփոյթ
ըլլալ ու այդ յարմարութիւնն ու յաջողակութիւնն ան-
գործ թողուլ կամ արգելել, հասկա իրեն սիրտ տալով՝
աս բանս յառաջ տանելու յորդորիչ ըլլալ: Գծագրու-
թիւնն ու նկարչութիւնը ազնուական զգացմունքը կըր-
թելու մէջ շատ մեծ ազդեցութիւն ունին. վասն զի երբ
որ տղաք քիչ մը հրահանգէն ետքը երկիր մը կամ վայ-
ելուչ տեղ մը գծելու կամ նկարելու կը վարժին, անով
իրենց պարապութեան կամ հանգստեան ժամերը զուար-
ճութեամբ ու օգտիւ կ'անցընեն, նաեւ ապագային հա-
մար յիշողութիւններնուն մէջ զանազան օգտակար տե-
ղեկութիւններ կը ժողվեն: Աս կտորիս մէջ ալ երկու
գիտելու բան կայ ծնողաց ու դաստիարակներու համար.
մէյ մը աս արուեստին յարմարութիւն ունեցող ու սկիզբ
ընող յաջողակ տղոց երբեմն երբեմն՝ ուր որ կրնայ գրա-
նուիլ՝ վարպետ նկարչաց ու անգրիագործներու վարպե-
տական աշխատութիւններն ու նկարները տեսնելու ճամ-
բայ ու միջոց գտնել, որ զանոնք տեսնելով ու գիտելով՝
ճաշակնին կարգով աւելնայ ու հաստատուի: Արկրորդ՝
պէտք է զգոյշ կենան որ չըլլայ թէ տղայ մը փոքր բան
գծագրածին ու նկարածին պէս՝ անոր գործքը չափա-
զանց գովութեամբ բարձրացընեն, ինչու որ ասով տղան
յառաջ երթալու ջանք չ'ունենար. իր արտագրած ան-
կատար գործքին վրայ պատշաճէն աւելի համարում
կ'ունենայ, եւ սխալները գիտելու, շիտկելու եւ զինքը
կատարելագործելու ջանք չ'ունենար. որով պղտիկուց աս
կտորիս մէջ տուած յոյսը պարապի կ'ելլէ:

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Գ

Տասնո՞ւնիկ տարուէ վեր շրջող տղոց կրթութիւնը :

Շ Ա Տ հարկաւոր բան է՝ որ պատանի մը երիտա-
տարդութեան մօտեցած ատենը՝ կամաց կամաց ազատու-
թեան ճամբան մանելու սկսի. բայց ոչ երբեք մեծերուն
դիտողութիւնը, զգուշութիւնը, հսկողութիւնը, կամ թէ
ըսենք՝ պահպանութիւնը անոր վրայէն վերցուի ու պա-
կաս ըլլայ: Մանաւանդ թէ բուն իսկ կենաց աս տարի-
ներուն մէջ՝ որ պատանեաց երեւակայութիւնն ու արիւնք
դիւրաւ կը տաքնայ, կիրքերը շուտութեամբ կը յարձա-
կին կամ կը գրգռին, եւ զգայական հեշտութիւններուն
խաւարին ու երկիւղալի լարիւրինութոսներուն մէջ կը տա-
նին, ուրիշ ատեններէն շատ աւելի հարկաւոր ու անտնօ-
րինելի բան մըն է, որ դիւրազրգիւ ու կրակոտ պատա-
նւոյն հայրը, եւ կամ անոր տեղը՝ կենցաղագէտ մարդ մը,
իսկ օրիորդին մայրը կամ անոր պակասած ատեն՝ խոհեմ
տիկին մը վերակացութիւն ու հսկող խնամակալութիւն
ընէ: Աս կտորիս մէջ հօր ու մօր տեղը բռնող անձինք
կամ գաստիարակները եւ կառավարիչները՝ իրենց ձեռ-
քին տակ ըլլող պատանիներուն եւ օրիորդներուն ճշմա-
րիտ, անկեղծ ու գործունեաց բարեկամներն ըլլալու պար-
տական են. եւ որչափ որ աս տարիքն ըլլող պատանի-
ները, տարիքնին մեծնալով՝ դպրոցներու կապերէն եւ
ուսուցչաց պահպանութենէն դուրս ելլելու վրայ կ'ըլլան,
անոնց աւելի հաստատուն խնամքով՝ իբրեւ հասարակաց
գործքերու մէջ մանելու սկսող ընկերութեան անդամ-
ներու պէս՝ պէտք է որ նային ու հոգ տանին:

20. Աս հասակի անձանց դաստիարակութեան հան-
դամանքը:

Եթէ նորահաս երիտասարդ մը մինչեւ կարգուե-
լու ատեն անանկ ճիշդ կապանքի ու պահպանութեան
տակ մնալու եւ դորձելու ըլլայ, ինչպէս տղայութեան
կամ պատանեկութեան ատենն էր, իրեն մեծ ամօթ
ու պղտիկութիւն կը սեպէ, սիրտը դառնութեամբ կը
լեցուի, եւ առջեւ դրուած զբօսանքներէն ամենեւին
համ ու զուարճութիւն չիղգար: Ար սկսի իր հասակա-
կիցներուն վիճակին վրայ կարօտնալ, եւ կամ ինք իրեն
ու կամ անոնց հետ խորհրդի կը մտնէ՝ թէ զինքն ա-
նանկ կաշկանդած բռնող կապերն ինչպէս կրնայ կտրել
ու ազատութեան անուշ պտուղները լիուլի վայելել:
Աս պատճառիս համար շատերն իրենց ծնողաց հետ բա-
լորովին ու յայտնապէս կը թշնամանան, ու ազատու-
թեան պատրուակով՝ տան ու ընտանեաց բախան ու խա-
ղաղութիւնը տակն ու վրայ ընելու պատճառ կը գտնեն:
Հասարակօրէն շատ երիտասարդներ ասանկ վիճակի մէջ
իրենք զիրենք կեղծաւորութեան ու խաբէութեան կու
տան, իրենց ծնողքը, խնամակալուներն ու դաստիա-
րակները կը խաբեն, որպէս զի անոնցմէ աս կերպով ընդ-
ունին ան բաները՝ որոնք շիտակ ձամբով չեն կրնար ընդ-
ունիլ: Երիտասարդ մը թէ որ շատ խիստ բռնուելու ըլ-
լայ, կեղծաւոր ձեւերով ծնողքը կը համոզէ թէ շատ
հարկաւոր բանի մը համար ստակի կարօտ է, եւ ան ստակն
առնելով՝ կ'երթայ դպրոցի կամ ուսման մէջ անցընելու
ատենը սրճանոցները եւ ուրիշ զբօսանքի տեղերը կը
վատնէ, կամ անանկ բաներու կը դորձածէ՝ որոնց վրայ
ծնողքն ու դաստիարակները ամենեւին կասկած չունին:

Չենք կրնար դիւրաւ որոշել՝ թէ արդեօք շարի-
զանց խստութիւնն ու կապանքը, թէ անշարի ազատու-
թիւնը մարդուն առջի կամ երիտասարդութեան տարի-
ներուն մէջ ապագայ տոհմերու, երկրի մը, ազգի մը, եւ
անով բոլոր աշխարհքիս աւելի մնասակար է. որովհետեւ
աս բանը՝ միայն ամէն մէկ անձին ու ամէն մէկ դերդաս-
տանին առանձին ու մասնաւոր հանգամանքներէն կա-

խում ունի, եւ անոնց համեմատ պէտք է որ որոշուի: Ամենէն աղէկն ու ապահովն աս է՝ որ երիտասարդներն անանկ կրթուին, որ իրենք իրենցմէ համոզուին ու հաստատ մտքերնին դնեն՝ թէ պէտք է որ իրենք իրենց շափ ու կապանք մը դնեն, իրենց փափագներն ու կամքը՝ որ շափ կարելի է՝ կարգաւորեն ու շափաւորեն, եւ աս բանս աւելի դիւրաւ կրնան ընել, եթէ պղտիկուց կամ տղայութեան ատեն իրենց անձանց վրայ տիրելն ու պատշաճ եւ վայելուչ եղած բանն առանց հակառակութեան յօժարութեամբ կատարելը սորված կ'ըլլան: Քայց իրենց անձանց վրայ աս տէրութիւնն ստանալը, կամ թէ իրենք զիրենք զսպելն ու շափի մէջ բռնելը սորվելու համար, պէտք է որ բանաւոր ու կանոնաւոր աղատութիւն մը ունենան: Եւ եթէ ան ատեն անմտական գործողութիւններ ընելու ըլլան, պէտք չէ ամենեւին մտնալ աս պարագան՝ որ մարդ կեանքին աս հասակին յառաջանալու ատենը՝ որուն մէջ ընդունակութիւն ստանալու կը սկսի, իր մերձաւորին վնաս մը չհասցընելով՝ երբեմն ստիպողական վիճակի մը մէջ կը գտնուի, եւ շատ մեծ հակում կ'ունենայ՝ իր գործողութիւններուն ամէն մէկ պատճառը, որուն որ կարելի ըլլալը բացայայտ իր առջին կը դրուի՝ իրրեւ ճշմարիտ սեպելու եւ ճանչնալու, եւ աս բանս աղէկ նկատելու է անոր յանդիմանութեան ընդունակ ըլլալն որոշելու ատենը:

21. Աս հասակի անձանց հետ վարուելու կերպը:

Վեռակիրթ, զգայական ու ինքնահաւան երիտասարդը մասնաւորապէս կենաց աս ժամանակը շատ հեղ յանդգնութիւն մը կ'ունենայ այն ամէն անձիւքն արհամարհելու եւ պղտիկ սեպելու, որոնք նորածեւութեանց (մոտանկրոն) չեն հետեւիր, այնչափ բարակ վարմունք չեն ունենար եւ բարձր ու ազնուականութեան անունով երեւելի եղած չեն: Ասոր համար շատ աղէկ ու հարկաւոր բան է՝ աս հասակի մէջ ըլլողներուն առջին ազգատոհմի ազնուականութեան, պատուաւոր աստիճաններու եւ հարստութեան վրայ մեծ համարում չըսու-

ցընել, եւ զիրենք համարելու աշխատիլ որ այսպիսի բախտին պատահական բարիքները՝ ոչ ստոյգ յարգութեք մը ունին, եւ ոչ ալ ճշմարիտ արդիւնք ու անանձին իրաւունք մը կրնան տալ: Արշափ որ աս ճամբուն ու միջոցին աղէկ ու օգտակար բլլալուն վրայ համարուած ենք, այնչափ ալ ցաւով կը խոստովանինք որ հիմակուան ատենս շատերն աս բանիս մտադրութիւն չընելէն զատ՝ ասոր հակառակը կ'ընեն. որուն պտուղն ան կ'ըլլայ՝ որ ասանկ ծուռ կարծիքներով մեծցած երիտասարդը, իրմէ աղէկներուն ադ վերը յիշուած երեւակայական բարձրութիւնն ու տիտղոսները շունենալուն համար, զիրենք արհամարհած ու անպատիւ սեպած ատենը՝ ինք իր վարմունքովն ուրիշներուն առջին ծիծաղելի ու անտանելի կ'երեւայ *:

Շատ ցաւալի փորձերով տեսած ենք ու կը տեսնենք որ շատ հեղ ճնողք իրենց բարի վարքովը՝ զաւկըններնուն բարի օրինակ ու բարի առաջնորդ չեն բլլար, ուստի եւ չեն կրնար այն շիտակ ճամբան ցուցընել, որուն վրայ նորահաս տղաք քալելով՝ իրենց ժամանակաւոր ու յաւիտենական երջանկութիւնը պիտ'որ հասնին: Ասոնք՝ իմաստուն մատենագրի մը ըսածին համաձայն՝ խեցեմութիւն վրայ պատմուած առակը գործքով իրենց վրայ կը կատարեն: Առակը կ'ըսէ որ ծեր խեցեմութն իր ձագին՝ ձեռքով առջելի ճամբան կը ցուցընէր, ըսելով թէ աս է շիտակ ճամբան, իսկ ինք ետ ետ կ'երթար, անանկ որ պզտիկ խեցեմութը չէր կրնար յառաջ երթալ, ինչու որ կը տեսնէր թէ ծերին ըսածն ըրածին կամ բռնած ճամբուն բոլորովին հակառակ էր: Ասանկ շատ ճնողք իրենց գեռարոյս զաւկըններն իրենց յօժարութեան, հակման կամ բերմանց ու իրենց կիրքերուն մէջ կը թողուն, ինչպէս կողմնացոյց շունեցող նաւակ մը ժայռալից ծովուն խոռ-

Օր մը պատուական եպիսկոպոս մը ընկերութեան մէջ համարձակութեամբ ըսաւ թէ իր հայրը խողարած էր: Հոն երիտասարդ ազնուական մ'ալ կար, որն որ եպիսկոպոսին անանկ անարգ հօրմէ ճնած բլլալը լսելով, սկսաւ զանիկայ ծաղրել ու արհամարհել: Ան ատեն եպիսկոպոսը հանդարտութեամբ մը իրեն ըսաւ. թէ որ հրամանքիդ հայրը խողարած բլլար, անտարակոյս հրամանքդ հիմայ խող կ'արածէիր:

վեալ ալեացը մէջ, եւ կը յուսան որ եթէ նաւարարն
ապահով նաւահանգիստ մը հասնիլ կը բաղձայ, ինք
իրմէ կրնայ իր բանը յաջողցընել:

Համ ծնողք կատարելապէս գոհ ու հանգիստ
կ'ըլլան, երբ որ կը տեսնեն թէ իրենց զաւկըները բարակ
ու ազնիւ վարմունք մը ստացեր են, այլեւայլ լեզուներ
կը խօսին, եւ ժամանակին ու տեղւոյն պահանջած ինչ չափ
բարակ ու գովելի շարժմունքով բարեկիրթ կ'երեւան: Աս
ասանկ ըլլալով, կը տեսնես որ քիչ մը կարողութիւն ու
նեցող աները շատ իրիկուն մասնաւոր դիտաւորութիւն-
ներով իրենց բարեկամներն ու ազգակիանները զբօսանքի
համար կը ժողվեն. որոնց մէջ երիտասարդք կամ ման-
կահասակ անձինք մէկտեղ կու գան նիւթի մը վրայ կը
սկսին խօսիլ, սրտաշարժ երգեր կ'երգեն, զանազան
ձեւերով իրարու շաքարեղէն ու խմելիք կը բաժ-
նեն, կը կաքաւեն, երբեմն ալ աս խաղերու եւ զուար-
ձալի զբաղմունքներու ատենը՝ մէկդի կը քաշուին, իրա-
րու հետ առանձին խօսելու եւ զբօսելու համար: Իսկ
աս միջոցին ծերագոյնք ու ծնողք կամ խաղի սեղանին
քով մեծ մտադրութեամբ իրենց թուղթը կը խաղան,
կամ իրենց դրացիներուն ու ճանչուորներուն պակասու-
թեանց վրայ կը խօսին. երբեմն նաեւ վտանգաւոր ու
համեատ սրտերու անախորժ խօսքերով ատեննին կ'ան-
ցընեն:

Աս կերպ վարմունքներով կ'անցնին նորահասակ
պատանիներուն ու օրիորդներուն դաստիարակութեան
վերջին ատենները, թող նոյն իսկ դաստիարակութեան
ատեն եղած սխալները, որով անոնց սրտին մէջ ամէն
դի մեծերու եւ պղտիկներու, աղքատներու եւ հարուստ-
ներու մէջ տարածուած զբօսանքի սէրը կը մտնէ կը
հաստատուի: Ալ անկից ետքը աշխատութենէ փախչե-
լով ու անձնդիրութեան ետեւէ ըլլալով, ամէն կերպ
պարտքերնին կատարելը մէկդի կը թողուն եւ վայելմանց
ու զուարճութեան ետեւէ կ'ըլլան, զբօսանքն իրենց կե-
նացը մի միայն նպատակը սեպելով, եւ դեռ տասնու-
հինգ տարւան եղած ատեննին՝ ամօթխածութիւնը կամ
ամբշնալը բողբոլին մէկդի ձգած կ'ըլլան:

22. Աս հասակին մէջ հանդիպող վտանգները, մուրրելու հնարքները խափանելու միջոցներ:

Տարիներն անցնելով ու հասակը կատարելութեան հասնելով, զգայականութիւնը՝ հոգեւոր, բարոյական ու մտաւոր մաքրութիւնը մեծ վտանգի մէջ կը ձգէ. կրնամ ըսել որ ասոր բացած պատերազմն անդադար է ու ամենեւին վերջ չունի, որուն սաստկանալուն կ'օգնեն զգայականութիւնը գրգռող ու շարժող ներքին ու արտաքին պատճառները: Ան ամէն բաները՝ որոնք զգայականութեան ուժը կ'աւելցընեն, երեւակայութիւնը կը գրգռեն, բարոյականին կամ բարեբարութեան սկզբունքն ու կանոնները կը խախտեն, բանականութեան ազդեցութիւնը կը բթացընեն եւ կամ բարոյական բարի զգացումը կը խղզեն, անոնք զգայական հեշտութեան ու վայելման ցանկութիւնը կը բորբոքեն, ու անմեղութեան նորածաղիկ տնկին վրայ կ'իղիչ ցանկութեան կայծակներն ու կրակը կը թափեն . . . :

Երեւակայութիւնը եւ անով զգայական գրգռներն արթնցընող պատճառներուն մէջ գլխաւորները կը սեպուին տղոց աս ժամանակին համար անպարկեշտ գիւրքեր կարդալ ու անվայել նկարներ տեսնել, մանաւանդ երբ որ ասանկ գրգռած երեւակայութիւնն ու զգայութիւնը՝ անպարկեշտ խօսքերով ու շար ընկերութիւններով աւելի եւս կը գրգռի ու կը տաքնայ: Աս բանիս ուրիշ տեսակ գրգռիչ մ'ալ օտար ազգաց մէջ շատոնց կը գտնուէր, իսկ մեր աղղին մէջն ալ քանի մը տարիէ ի վեր տարածուելու սկսած կ'երեւայ, այսինքն՝ վտանգաւոր վէպեր (Ռոմաններ) կարդալ, շէ թէ միայն Էւրոպացւոց, մանաւանդ գաղղիերէն լեզուով գրուածները, հապա տաճկերէն ու հայերէն թարգմանութեամբ ալ, որոնք ժամանակիս երիտասարդները մեծ փափագով մը կարդալու ետեւէ կ'ըլլան: Ամանք աս տեսակ գրքեր կարդալն արդարացին ել կ'ուզեն, ըսելով թէ անոնց մէջ գործածուած քաղաքավարական խօսակցութեան կերպը, գրուածքին զարդարունութիւնն ու բարակ վարմունքի վրայ անոնց մէջ յիշուած խօսքերը, մարդուս

կրթութեան ու բարակնալուծն շատ կ'օգնեն: Աս խօսքերս ըսողները չեն մտածեր որ աս կերպ ընթերցուածները մարդուն սիրտն աւելի մեղկ ու հեշտասէր կ'ընեն՝ քան թէ կը կրթեն, երեւակայութիւնը վտանգաւոր պատկերներով կը լեցընեն, եւ հոգւոյն համար գրեթէ այն մնասները կու տան, զորոնք ոգելից խմելիքներն ամէն որ ու յաճախ գործածելը՝ Ֆիզիքական կենաց կամ մարմնոյն վրայ կը բերէ:

Այլ թէ աշուրներնուս առջին միայն մեր ազգային գրքերն ու հայերէն լեզուով գրուած ու տպուած հեղինակներն ունենայինք, կրնայինք ըսել որ մինչեւ հիմայ խիստ քիչ գրուածներ կան՝ որոնք բարի վարուց ու բարի սրտի եւ զգացմանց աւրուելուն պատճառ ըլլան: Բայց իտալերէն ու մանաւանդ գաղղիերէն լեզուին ուսումն ազգերնուս մէջ շատ տարածուած ըլլալուն եւ օրէ օր ալ աւելի տարածուելուն, անոնց մէջ եղած շատ ու շատ անպատշաճ, անվայել, անպարկեշտ ու գայթակղեցուցիչ եւ մոլորեցուցիչ գրքերը, եւ յատկապէս բարի վարքն աւրելու կամ վտանգի մէջ դնելու եւ մոլորեցընելու համար գրուած տեարակները, մատենիկներն ու մատենները պէտք է որ բարի ու զաւակասէր ծնողաց եւ դաստիարակներուն մեծ վախ, մտմտութեամբ ու շափե աւելի զգուշութիւն ունենալու պատճառ ըլլան: Սակայն որովհետեւ հիմակ օտար լեզուներ ու մանաւանդ գաղղիերէն սորվելը՝ կրթութեան ու բարակ քաղաքավարութեան համար իբր բոլորովին հարկաւոր միջոց սեպուելու սկսած է, ուստի չենք կրնար խորհուրդ տալ որ աս լեզուաց ուսումը վերցուի. ուրեմն ուրիշ միջոցներ պէտք է որ փնտռենք աս շարիքը՝ որչափ կարելի է՝ խափանելու համար: Առաջին միջոցն ան է՝ որ ծնողք իրենցմէ կամ ուրիշ բարեպաշտ ու իմաստուն անձի մը ձեռքով իրենց զաւակաց կարգալու գրքերը քննելով՝ անանկ անոնց ձեռքը տան: Արկրորդ՝ յաջող անձինք կամ վարպետներն ու դաստիարակները տղոց լեզու սորվեցուցած ատեննին՝ միշտ պէտք է որ ջանան անոնց միտքը համոզել, որ իրենց ազգին եւ ուրիշ ազգաց ընտիր մատենագիրներն ու նախնական մաքուր ոճով շարագրած գրքերը ոչ միայն իրենց լեզուա-

դիտութեան մէջ յառաջ երթալը կը դիւրինցընեն, հաս-
պա նաեւ թէ գրելու եւ թէ խօսելու մէջ հաստատուն,
այրական, ջղաւոր, հաճոյական ու կրթիչ ոճ մը ունենա-
լու շատ կ'օգնեն: Երբորդ՝ թէ ծնողք եւ թէ դաստիար-
ակները եւ ուսուցիչները պէտք է որ համոզիչ ու հաս-
տատ խօսքերով նորակիրթ երիտասարդներուն առջին
դնեն ու հասկըցընեն՝ թէ իրական պատմութիւնները,
ինչպէս ազգային պատմութիւնը, երեւելի անձանց վար-
քերը, ժամանակներու երեւելի դիպուածոց պատմու-
թիւնները՝ որչափ աւելի յարգի են կեղծեալ պատմու-
թիւններէն, զարդարուն առասպելներէն, բանասերէն
ու անհիմ վէպերէն, եւ եթէ ասանք մտադրութեամբ
կարդացուելու ըլլան, որչափ զուարճութիւն ու օգուտ
կը պատճառեն, եւ թէ առանձնական կենաց, թէ քա-
ղաքային տնտեսութեան եւ թէ ընդհանրապէս մարդուն
կրթութեան համար ինչպիսի օգտակար դասեր կը մա-
տակարարեն: Աս միջոցներով կարելի չէ որ երիտասար-
դի մը սիրտը չվառի, եւ այն վեր ի վերոյ զուարճացընող
անպիտան վէպերն ու տետրակները ձեռքէ թող տա-
լով՝ այն օգտակար պատմական գրքերը մտադրութեամբ
ու սիրով կը կարդայ, եւ անոնց մէջ կարդացածներուն
վրայ իր կարողութեան համեմատ դատում ընելով՝ իր
կենաց համար մեծամեծ օգուտներ կը դանէ:

Մարդ գործ գործելէն ու զանազան հարկաւոր
զբաղմունքներէն դադրելու եւ պարապութեամբ ժամա-
նակ անցընելու սկսածին պէս, մարդկային ընկերութեան
ու հասարակութեան թշնամի կ'ըլլայ, որովհետեւ մար-
դուս ու մարդկային ընկերութեան ամենէն մեծ ու առա-
ջին օրէնքը՝ օգտակար զբաղմունք ունենալն ու գործելն
է: Ասոր համար մեծերուն գլխաւոր պարտքերէն մէկն
ալ աս է՝ որ երիտասարդները միշտ յորդորեն ու քաջա-
լերեն իրենց վիճակին ամէն պարտքերը ճիշդ ու աղէկ
կատարելու, եւ ամէն ատեն զբաղմունք ու գործք ունե-
նալու, անանկ որ ամենեւին ժամանակ ու անով առիթ
եւ պատճառ չունենան՝ մտքերնին պարապ ու գրգռիչ
խորհուրդներով զբաղեցընելու, կամ թէ ժամանակին
երկայնութեան վրայ ձանձրանալով դանդաւակու, որն

որ աշխոյժ ու գործասէր երիտասարդն ան ատեն կը զգայ՝ երբ որ պարապ կենալու կամ պարապորդ մարդկան ընկերութեան մէջ գտնուելու կը պարտաւորի: Արբեմն կը հանդիպի որ ուսումը լմնցընող երիտասարդ մը՝ պարապութեան մէջ մնացած ըլլալով, եւ ան պարապութենէն ձանձրութիւն իմանալով, անվնաս զբաղմունքի մը ձեռք կը զարնէ, ինչպէս երաժշտութեան, նկարչութեան, եւ այլն. բայց ասիկայ խիստ քիչերուն վրայ կը տեսնուի. եւ հասարակօրէն միշտ ստոյգ է որ երիտասարդի մը առանց զբաղմունքի մնալն՝ իրեն ամէն մոլութեանց սկիզբ կ'ըլլայ, զորոնք ի գործ դնելու՝ երիտասարդական սրտին պարապութենէ զգացած ձանձրութիւնն ու զբաղելութեան զրգիւր շատ կ'օգնեն *:

Աս բաներուն վրայ աղէկ խորհրդածութիւն ընելով, Եւրոպայի կրթեալ ազգաց մէջ տեսածներնէս՝ գրեխաւոր միջոց մը կը գտնենք, որն որ ուսմանց ու գպրոցի կապերէն եւ գաստիարակաց ձեռքէն ելլող պատանիներուն գատարկակեցութեան ու անկէց յառաջ եկող մոլութիւններուն բաւական արգելիչ կրնայ ըլլալ: Ասանկներուն գիւրութիւնն ու միջոց տալու է՝ իրենց պարտք եղած գործքերը կատարելէն ետքը՝ պարապութեան ատենները ուրիշ ուսում կամ արուեստական զբաղում մը եւ կամ զուարճալի ու միանգամայն օգտակար գործք մը ունենալու, որուն նաեւ իրենք ալ մասնաւոր բաղձանք կամ բերում ունենան: Աս զբաղմունքները կամ ուսումները՝ զանազան տեղերու, պատանեկաց յարմարութեան, ժամանակին ու ծնողաց վիճակին ներկելուն համաձայն կրնան ընտրուիլ. քանի մը գիւրին զբաղմունքը, ձկնորսութիւն, թռչնորսութիւն, հասարակ որսորդութիւն, զանազան բնութեան նիւթերուն, թռչուններու, ժժմունքներու, հանքային նիւթերու քաղուածք մը ընելու կարգի դնել, խաւարարտէ զանազան վարպետական

° Աիկերոն կ'ըսէ որ «Հռոմայի մեծութիւնն ու փառաւորութիւնը՝ միշտ յառաջ կ'երթար ու կը ծաղկէր, քանի որ երիտասարդներուն գատարկակեցութիւնն ամէն կերպով արգելուած էր»: Հռոմայեցւոց մէջ սրբազան օրէնք մըն էր որ պատանի մը տասը տարեկան ըլլալէն ետքը՝ փողոցներու վրայ պարապորդ ու անգործ ասդին անդին չպարտի:

ամաններ կամ ձեւեր շինել, ճախարակագործութեան
դիւրին գործուածքներ շինել, դիրք կազմել, փայտի վրայ
զանազան ձեւեր փորել, սառեւրագրութեան ու նկարչու-
թեան ետեւէ բլլալ, դիւրին երաժշտական գործիքներ
սորվիլ, երբեմն զանազան նիւթերու վրայ գրել՝ բայց
աւելի արձակ խօսքով քան թէ ոտանաւոր. վերջապէս
պարսպութեան ատեն բանով մը զբաղել, որ նախ՝ միտքն
անզբաղ մնալով՝ մնասակար մտածութիւններ ունենալու
ատեն չգտնէ, երկրորդ՝ բան սորվելու ընթացքը շարու-
նակուի ու չմիջահասի, եւ երրորդ՝ նորահաս պատանի-
ներուն օրինաւոր պատուասիրութեան եռանդը՝ որն որ
բարի վախճանով եղած ատեն՝ մարդկային ընկերութեան
միշտ օգտակար է, բորբոքած մնայ ու չմարի:

Պատանեկաց համար ըսածներս՝ նորահաս օրիոր-
դաց համար ալ կ'իմացուի. նոյն կերպով ասոնց ալ հոգ
տանելու է որ միշտ զբաղմունք մը ունենան, պարսպ
կենալու վտանգի մէջ չգտնուին: Արեւամ բսել որ աս-
ոնց համար աւելի հոգ տանելու է աս կտորիս մէջ՝
քան թէ պատանեկաց համար, որովհետեւ օրիորդ-
ներն իրենց ֆիզիքական ու հոգեկան վիճակին կամ տրա-
մագրութեան համեմատ եւ միանգամայն իրենց վիճակին
գործքերուն հանգամանաց նայելով, շատ դիւրաւ կրնան
մտքերնուն խորհուրդները սնուցանել ու վտանգաւոր
զգացմունքներուն հետեւիլ, որով եւ անանկ վտանգաւոր
ու անկարգ վիճակի մէջ կրնան իյնալ, որ իրենց մարմնոյն
ալ հոգւոյն ալ անհնարին շարեաց պատճառ կ'ըլլայ:
Անոց աս ատեններուն մէջ օրիորդաց դաստիարակու-
թեան համար շատ զգուշաւորութիւն ու մտադրութիւն
հարկաւոր է, որովհետեւ օրիորդ մը աս ատենները վայ-
ելուչ ու պատշաճ կարգին սահմանէն քիչ մը դուրս ե-
լածին պէս՝ զարհուրելի անկարգութիւններու լաբիւրին-
թոսի մէջ կ'երթայ:

Շատ հարկաւոր ու օգտակար բան կը սեպենք
պատանեկաց աս ատեններուն համար որ իրենց յորդոր
արուի մասնաւոր տեսրակ կամ գրքոյկ մը շինելու, իբր
օր-գէր մը, որուն մէջ իրենց կարգացած գրքերէն ազուր
ու օգտակար հատուածներ հանելով՝ գրեն, նաեւ իրենց

ուսմանց ու կենցաղավարութեան մէջ տեսած ու լսած օգտակար, նշանաւոր ու յիշատակաց արժանի բաները նոյն գրքուկին մէջ անցընեն. դարձեալ անուանի ու մանաւանդ դասական մատենագիրներուն մէջ գտնուած երեւելի վճիռները կամ զօրաւոր խօսքերն ու վճռական պարբերութիւններն օրինակեն, եւ աշխատին զանոնք իրենց յիշողութեան մէջ աղէկ տպաւորել: Ինչու որ մարդուն հոգւոյն արտագրիչ զօրութիւնը շատ նիւթի կը կարօտի, որովհետեւ՝ բնախօսի մը գեղեցիկ օրինակին համեմատ՝ աս զօրութիւնն իբր քիմիական քուրայ մըն է, որն որ իր մէջը գտնուած բանը, այսինքն՝ տեսնուածը, լսուածը, կենաց մէջ փորձուածը (գլուխն եկածը), սորվածը՝ իրենց յատուկ հիւթովը կ'եփէ ու նոր հաստուած կամ բան մը կը հանէ:

Արեւակայութեան, արուեստական հանձարի կամ մտածող (նկատող) մտքին առջի պտուղները կամ հաստուածները՝ գրեթէ միշտ միայն անսկզբ իրենց, այսինքն տեսածը, լսածն ու հասկըցածը՝ կրկնել, նորէն դուրս հանել մըն է: Բայց շարունակեալ ու ժրաջան կրթութեամբ եւ ուսմամբ կամաց կամաց թռնի, սկզբնական կամ աննկատելի յօրինուածը, իբր անձնական ու սեպհական հնարք երեւան կու գայ: Այլ որ որոշուած ատենի մը մէջ յաջողակութեամբ, ազատութեամբ ու եռանդուն մտքով ուրիշներէն աւելի բան մը կ'ըմբռնէ, եւ ըմբռնածները՝ շուտով իրարու հետ կապակցելով՝ պայծառ ու յայտնի ճշմարտութիւններ կը գտնէ, անիկայ իրաջրնէ հասնաւոր ունի: Աս հանձարը՝ գայլախաղէն՝ կրակ, մութ ամպերուն խորունկ ծոցերէն՝ կայծակ դուրս ցատկելուն նման՝ ինք գինքը կը ցուցընէ, եւ շատ անգամ բիւրաւոր արգելքներու յաղթելով՝ իրեն ճամբայ կը բանայ յառաջ կ'երթայ * : Անգղիացի մատեն-

o Կեծամեծ ու երեւելի արանց վարքը մտադրութեամբ կարգանք, եւ կը տեսնենք թէ աշխարհքիս վրայ հանձարով, ուսմամբ ու երեւելի գրուածքներով եւ գործքերով անուանի ըլլող մարդիկ ինչպիսի դժուարութիւններու յաղթելով, ինչ ծանր ծանր նեղութիւններ կրելով, եւ ինչչափ երկայն ժամանակ աշխատութեանց փշոտ ճամբուն վրայ քաշելով, իրենց հանձարին պտուղները տուին, եւ անանկով փառաց տաճարին դուռը հասան ու անմահ անուն ժառանգեցին: Ա-

նազիր մը հանձարին վրայ ասանկ կը խօսի. Հանձարը,
 կ'ըսէ, շուտ ըմբռնում (յղութիւն) մը ունի, եւ անկից
 ետքը դիւրին ծնունդ մը, այսինքն՝ հանձարաւոր մարդը
 շուտով կ'ըմբռնէ ու կը դատէ, եւ մտածութիւնն ի
 գործ կը դնէ: Շատ անգամ պարզ տաղանդ կամ ձիրք
 մը հանձարաւորութիւն կ'անուանի, եւ աս բառը հիմա-
 կուան երիտասարդք երբեմն բնական զուարճախօսութեան
 կամ ճարպկութեամբ խօսելու ձիրքին համար անգամ
 շարաշար կը գործածեն: Բայց աղէկ գիտնալու է որ
 յատկապէս հանձար ըսածնիս՝ աշխարհքիս վրայ խիստ
 քիչ կը գտնուի, եւ երբ որ պատանւոյ մը վրայ ասանկ
 հանձարի հետքն ու ստոյգ նշանները տեսնուելու ըլլայ,
 պէտք է անոր վրայ կրկին խնամքով ու արթուն հոգու-
 ղութեամբ զգուշութիւն ընել. ինչու որ ան գերագոյն ու
 կրնամ ընել աստուածային կայծը, որն որ անոր հոգւոյն
 մէջ կը գտնուի, որ եւ որ մը իբրեւ արեգակ՝ լոյս ու ջեր-
 մութիւն պիտ'որ տարածէ, կրնայ հասարակ կրակի դառ-
 նալ, եւ չէ թէ միայն իր ամանը խանգարել, հապա նա
 եւ իր բոլորտիքն ալ մեծամեծ միասնէր տարածել: Ա-
 բովհետեւ բնութեան ամէնիմաստ Արարիչն անանկ կարգ
 մը դրած է, որ յատուկ հանձար կամ հանձարաւոր
 գլուխ ըսածնիս՝ աշխարհքիս վրայ խիստ քիչ գտնուի,
 անոր համար մարդուս զուր ու անօգուտ աշխատութիւն
 կ'ըլլայ՝ բռնութեամբ ու խստութեամբ ասանկներուն
 թիւը շատցընել ուզելը: Իրացընէ աշխարհք ու ազգն
 ասանկ գլուխներու կամ մարդիկներու շատ կարօտու-
 թիւն ունի, որոնց միտքն ու սիրտը օրինաւոր կրթու-
 թիւն առնելով՝ թէ առանձինն ու թէ իրարու հետ
 իրենց կարողութեան համաձայն գործելով, մարդկու-
 թեան մասնաւոր ու ընդհանուր օգուտը յառաջ տանե-
 լու միաբան ու ձեռք ձեռքի տուած աշխատին: Ամէն
 մէկ մարդ իր կարողութեան ու զօրութեան համեմատ՝
 պէտք է որ կարգով ու կանոնով կրթուի, իր վիճակին,

սոնց մէջէն շատերուն համար աշխարհքիս վրայ կամ եւ ոչ
 մէկ եւ կամ շատ փոքր յիշատակարան մը կանգնուեցաւ:
 Բայց շատ աւելի աղէկ է՝ որ արդիւնքը կանգնուած յիշա-
 տակարանէն աւելի ըլլայ, քան թէ յիշատակարանն արդիւն-
 քէն վեր սեպուի:

գանուած ժամանակին ու տեղւոյն պէտք եղած գործ-
քի մը մէջ մտնելով՝ իր կրթութեան պտուղները տայ,
եւ միանգամայն ընդունակութիւն եւ յարմարութիւն
ստանայ՝ ձեռքէն եկած օգնութիւնը հասարակաց բա-
րւոյն ընելու * :

23. Ազգատոհմի հանգամանաց ազդեցութիւնը :

Ինչպէս որ ամէն մէկ տուն կամ ազգատոհմ իր
յատուկ կերպարանքը կամ գծագրութիւնն ունի, ա-
սանկ ալ իր յատուկ խառնուածքն ու սովորական յօ-
ժարութիւնները կամ բերմունքները կ'ունենայ : Ասոր
համար ծնողք իրենց զաւկրներուն աղէկ մտադրութիւն
ու հօկողութիւն ընելով՝ կրնան հասկընալ ու տեսնել
թէ անոնց վրայ արգելելու կամ շիտկելու, մէկգի ձգե-
լու կամ հաստատելու ինչ բան կայ, թէ անոնց աւելի
ազատութիւն տալ պէտք է, չէ՛նէ՛ իրենց վրայ խստու-
թիւն բանեցընել, ինչու որ իրենք (ծնողք) հարկաւո-
րապէս կը յիշեն ու խղճմտանքնին ալ իրենց կ'ազդէ
թէ իրենք իրենց պղտիկութենէն վեր ինչ բանի մէջ
սխալած են, ինչ բանի մէջ աղէկ ճամբայ բռնած են,
որ բանի մէջ եւ երբ գծբախտ գտնուեր են : Եւ թէ-
պէտ իրենց զաւկրներն ուրիշ ժամանակի ու տեղւոյ պա-
րագաներու մէջ գտնուին, ուստի եւ իրենց գործքե-
րուն ու գործելու եղանակին մէջ իրենց ծնողաց (նոյն
հասակին մէջ եղած ատեննին) ունեցած զգածմունքը
չունենան. բայց սկզբնական շարժիչները՝ արմատին վրայ
ունեցած ազդեցութիւննին, բողբոջներուն վրայ ալ կ'ու-
նենան. ինչու որ սկզբնական հիւթերը նոյն են, ուստի

* Աս կտորիս վրայ Բասագորի մատենագիրը շատ աղուոր ու զօ-
րաւոր խօսք մը կ'ըսէ, որն որ հոս գնելը պատշաճ կը սե-
պեմ. «Հասարակաց գործքի մը մէջ մտնող մարդը, կ'ըսէ,
պէտք է որ իրեն անանօրինելի օրէնք մ'ընէ՛ իրեն յան-
ձնուած ամէն մէկ գործքն ու պաշտօնը ամէն զօրութեամբ
կատարելու, եւ ամէն մէկ գործողութիւնն իր բոլոր մտա-
դրութեան արժանի սեպէ. ինչու որ ամէն մէկ գործքը՝ հա-
սարակաց օգտին յարարերութիւն մը ունի, եւ ամէն մէկն ան
մեծ շղթային անգամն է, որն որ քաղաքային ընկերութեան
բոլորտիքը կը շրջապատէ : Ով որ խել մը փոքր գործքեր
կամ պաշտօններ հաւատարմութեամբ ու աղէկ կը կատա-
րէ, անիկա մեծ գործք մը կատարած կ'ըլլայ, նաեւ շարիք
մը խափանելը՝ բարիք մը ընելու շափ արդիւնաւոր է,» :

խմաստուն առաջնորդութիւնը՝ երիտասարդ ու նոր մեծ-
ցող անհասաներն ազնուացրնելու եւ աղէկցրնելու մեծ
ազգեցութիւն կ'ընէ:

Մարմնոյն որպիսութիւնը, ապրելու կերպը, կրթ-
թութիւնը, խառնուածքն ու այլեւայլ պարագաները՝
մարդուն յօժարութիւններուն կամ բերմունքներուն
կ'օգնեն ան կամ ան բանն ուղելու կամ շուղելու, եւ աս
բանս կրից արթննալուն ու զօրանալուն առիթ կու
տայ, որոնց բնական ու անձնական սկիզբն ուսկից բլլալը
մտադիր ծնողք կամ դաստիարակները դիւրաւ կրնան ի-
մանալ: Ամէն կիրքերը կամաց կամաց կ'արթննան ու կը
յայտնուին, եւ ամէն մէկ գործադրութեամբ, կամ թէ
ըսենք՝ ամէն մէկ հեղ կատարուելով, կը զօրանան. ուս-
տի անոնց արթննալն արդելելու համար՝ մասնաւորապէս
հսկել պէտք է որ ցանկութեանց կատարումը սովորու-
թեան չդառնայ: Անսանձ կիրքերը՝ մարդն իր ցանկու-
թիւններուն գերի կ'ընեն, որով մարդ իր կատարելալ
կործանումն ու կորուստը կը գանձէ. իսկ թէ որ կիրքերը
բնական ու բարոյական միջոցներով շափաւորուելու եւ
մարդկութեան օգտակար կերպով խոհեմութեամբ կար-
գի դրուելու բլլան, կրնան պիտանի ու անվնաս բլլալ:
Չոր օրինակ, շափաւոր ու կարգաւորեալ պատուասիրու-
թիւնը՝ մարդը դիւցազն կ'ընէ, երկիւղը՝ մոլի ու գէշ
մարդը շարիք ընելէն ետ կը կեցընէ, սէրը՝ մարդկային
ազգին աճելուն ու շատնալուն պատճառ կ'ըլլայ. ասանկ
խմացիք ուրիշ կիրքերուն վրայ ալ: Արբ որ ծնողք կամ
դաստիարակները կ'ուղեն իրենց ազոց սրտէն կիրք մը բո-
լորովին խլել հանել, պէտք է նային որ անոնց մտադրու-
թիւնն ու փափագը ան կիրքին հետ կապակցութիւն
կամ յարաբերութիւն ունեցող առարկաներէն որչափ որ
կարելի է անուշ ու յարմար ճամբով մը մէկդի դարձը-
նեն, միտքն իրեն մասնաւորապէս հաճելի բլլող նիւթով
մը զբաղեցրնեն, եւ ան ամէն պարագաներէն զգուշացը-
նեն, որոնցմով կիրքերը կ'արթննան ու կը գրգռին:

Տղոց կամ պատանեաց սիրտը բարերար ազգեցու-
թեամբ կրթելու համար՝ պէտք է աղէկ մտադիր բլլալ
թէ իրենց խառնուածքն որ ու ինչպիսի գիպուածներու

կամ առիթներու մէջ կը յայտնուի: Մասնաւորապէս կամ բարկացում խառնուածքը՝ որն որ սաստիկ զգայունութեամբ ու զօրաւոր ազդեցութեամբ յայտնի կ'ըլլայ, շատ մեծ զգուշութեամբ ու տեւական եւ երկայնամիտ խնամքով բարեխառնելու է, իսկ արիւննային խառնուածքը՝ որն որ միշտ աճող դրդութեամբ ու շատ բայց տկար ու կարճատեւ ազդեցութեամբ յայտնի կ'ըլլայ, պէտք է տկարացընել՝ առանց իր ցոյցներուն կամ գործքերուն մտադիր ըլլալու: Տկար զգայականութիւնն ու հանդարտ բայց երկարատեւ եւ զօրաւոր ազդեցութիւնը սեռամասնաւորապէս խառնուածքի նշանակ են, որուն դէմ պէտք է միշտ ուժով ու յարատեւութեամբ աշխատիլ: իսկ տկար զգայականութիւնն ու միանգամայն տկար ազդեցութիւնը մասնաւորապէս խառնուածքի ցոյց է, որն որ պէտք է տեւողական ու ազդու կերպով արթնցընել:

Աս ամէն խառնուածքները կամ բնական յարմարութիւնները զգուշութեամբ դիտելով եւ կարգով ու կանոնով մշակելով ու բարեխառնելով, կրնան ծնողք ու դաստիարակք իրենց խնամաց յանձնուած պատանիները կամաց կամաց համողել ու հաւանեցընել որ իրենց վարքն ու վարմունքը սորված ու առած բարի խրատներուն ու կանոններուն (սկզբունքներուն) յարմարցընեն, եւ ասանկով աղէկ նկարագիր (բարք) մը ստանան, որով իրենց բռնելու ճամբան կամ գործելու կերպը զանազան դիպուածներու մէջ առաջուրնէ կրնայ ճանչցուիլ:

24. Առանձինն օրիորդաց կրթութեան հանգամանքը:

Իգական սեռը կամ կանանց բնաւորութիւնը թէ ֆիզիքական կամ բնական եւ թէ մտաւորական կամ բարոյական զօրութեան նկատմամբ արական սեռէն կամ էրիկ մարդկանէ շատ վար ու ետ կը մնայ. բայց կարծես թէ աս ստորնութիւնը ճանչնալով՝ աս կտորիս մէջ հասարակչութիւն մը ստանալու կ'աշխատի, եւ շատ անգամ նաեւ իբր թէ վրէժխնդրութեան հոգիէ մը շարժելով՝ խորամանկութեան զէնքերը ձեռք կ'առնէ, եւ կը ջանայ որ անկարգ ճամբաներով հասնի ան բանին՝

զորն որ շիտակ ճամբու վրայ քալելով՝ չիկրնար գտնել :
Աս կտորիս մէջ նոյն իսկ տկարամիտ կանայք երբեմն ա-
նանկ կեղծաւորութիւն, խաբէութիւն ու խորամանկու-
թիւն կը բանեցրնեն, որ խիստ սրատես էրիկ մարդիկը
կարող կ'ըլլան խաբել ու իրենց ուզածին պէս բանեցր-
նել : Արդ՝ որովհետեւ մասնաւորապէս շոյելով մեծցած
աղջիկները կ'աշխատին իրենց որդեակը ծնողաց սրտին
վրայ տիրելու եւ ինչ որ շողոքորթութեամբ, արցունքով
ու կեղծաւորութեամբ կամ ստախօսութիւններով չեն
կրնար ձեռք բերել՝ շարաշար գոռոզութեամբ կը ջանան
ստանալ, անոր համար այսպիսիներուն հայրերն ու մայ-
րերը պէտք է որ ամէն կերպով մտադիր ըլլան, եւ իրենց
գոտերաց նկարագիրը կամ բնաւորութիւնն աղէկ քննեն
ու հասկրնան, անոնց յօժարութիւնները շատ հեղ զա-
նազան կերպով փորձեն, եւ ուր որ կը տեսնեն թէ անոնք
խաբէութիւն կամ ծածուկ շարութիւններ կը բանեցր-
նեն, իրենք ալ իբրեւ հողեւոր բժիշկ՝ ամէն կերպ խոհա-
կան խստութիւնն ի գործ դնեն : Աս պակասութիւններն
աւելի ան աղջիկներուն վրայ կը տեսնուին՝ որոնց ծնողքը
կամ քովն ըլլողները առաջուրնէ շատ ներողամտու-
թիւն ու թուլութիւն ցուցրցած ըլլալով, անդգալաբար
իրենց կարօտութիւնները կամ ուզելու բաներնին ու
պահանջմունքնին շատցած են, ինչու որ սնտախոռու-
թիւնը կամ սնտախ պարծանքի ետեւէ ըլլալը, հաճոյ
ըլլալու եւ զանազան վայելմունք ունենալու բաղձանքը,
պղտիկ պղտիկ բաներ գողնալը, նորասիրութեան եռանդն
ու ասոնց նման ուրիշ անկարգութիւնները՝ ան սոսկալի
անդունդները կամ փոսերն են, որոնք երբեք չեն լե-
ցուիր, եւ մեծ զոհ մ'ընդունելէն (մէկ բաղձանքը կա-
տարուելէն) ետքը՝ աւելի մեծ զոհ կը պահանջեն : Աս
բանիս վրայ անոր համար աւելի մտադրութիւն ու զգու-
շութիւն ընելու է, որ հեղ մը իր ծնողաց, ազգականնե-
րուն ու դաստիարակներուն հետ ստախօսութեամբ ու
խաբէութեամբ վարուելու վարժող աղջիկը՝ կարգուելէն
ետքը իր երկանը հետ ալ նոյնպէս կը վարուի, եւ թէպէտ
հետը շատ մեծ օժիտ բերած ըլլայ, իր շար ու անարժան
բաղձանքները կատարելու համար բաւական չ'ըլլար :

Արդ՝ աղջիկ մը ասանկ պահասութիւններէն ու մոլութիւններէն պահելու եւ բժշկելու համար՝ պէտք է աւելի իր բարոյական զգածմունքը կամ բարքն ու կրօնական զգացումը կրթելու աշխատիլ, քան թէ միտքը, ինչու որ աւելի դիւրին է կանանց սիրտը շարժել՝ քան թէ անոնց միտքը բանով մը համոզել. որովհետեւ յայտնի փորձերը կը ցուցնեն որ ասանք հեղ մը շարժելէն (փղձկելէն) ու ամբշնայլէն ետքը՝ կը սկսին զղջալ, եւ եւթէ ասիկայ շատ հեղ կրկնուելու ըլլայ, իրենց անկարգութիւններն ալ շիտկելու յոյս կ'ըլլայ: Ան բանս կատարելը դիտաւորաբար մօր մը պաշտօնն է, որն որ ասիկա աւելի աղէկ կրնայ յաջողցնել՝ թէ որ իր խեղճիցած կամ շոյելով մեծցած ու անկարգութեան մը վարժած դասերը իր վարմունքովը բարի օրինակ կու տայ. կամաց կամաց մեծ բնկերութիւններէն կամ այցելութիւններէն ու զրօսանքներէն ետ կը կենայ, աւելի տան մէջ նստելով՝ անոր կառավարութեան ու կարգին կանոնին աւելի միտ կը դնէ, աւելորդ ծախքերն ու կարօտութիւնները (պիտոյքը) կամաց կամաց կը քիչցնէ. իր պարտքերն աղէկ կատարելը միտքը բերելով ու իր տան բարեկարգութեան աւելնալը տեսնելով, իր կենացը դուարթութիւնն եւ ուրախութիւնը անոնցմով գանկելու կը նայի. պերճութեան կամ շքեղութեան, նորասիրութեան ու դատարկակեցութեան ետեւէ ըլլողներուն հետ տեսնուիլը բոլորովին կը կտրէ, եւ ինք զինքը կանանց ճշմարիտ զարդ ու պարծանք ըլլող առաքինութիւններուն կու տայ:

«Շեղութիւնը, կ'ըսէ Հեռիս անգղիացին, կանանց առաքինութեանց թագին վարդն է, անոր հետ իբրեւ քոյր միացած է համեստութիւնը. բայց աւելի՛ հազար անգամ աւելի գեղեցիկ ու պայծառ է անմեղութեան (անմեղ օրհորդի մը) երեսին վրայ ամօթխածութեան կարմրութիւնը՝ քան թէ առտուան լոյսը ծագած առտենը երկինքին արեւելքի կողման երեւն երեւցող կարմրութիւնը»։ Թէ որ աղջկան մը սրտին մէջ աղաւնուոյ միամտութեան ու հեղութեան տեղ՝ շարութիւնը կը տիրէ, ճշմարիտ սիրոյ բնդունակ շիկրնար ըլլալ, ո՛չ ինք կրնայ երջանիկ ըլլալ եւ ո՛չ ուրիշները բախտաւոր ընել:

Թէպէտ եւ հազար ու մէկ հմտութիւններ, ճարտարութիւններ ու կերպ կերպ ձիրքեր ունենայ: Ասանկ հմտական տեղեկութիւններն ու ազնուական եւ քիչ մը ատեն սիրտերը յափշտակող վարմունքը՝ անպիտան ու տղեղ զգեստի մը վրայ բանուած զարդարուն ասղնագործի կը նմանի, որով բանաւոր ու խելացի մարդու մը սիրտը բոլորովին չիկրնար շարժել ու շահիլ:

Աս կտորիս վրայ երկայն խօսակցութիւն ընելը անայժմ հարկաւոր չտեսլով, խելացի ու բարեպաշտ մայրերուն ու հմուտ դաստիարակներուն կամ դաստիարակուհիներուն խնամոցը յանձնելու պատշաճ կը դատենք իրենց մատաղ ու դեռակիրթ դասերաց ու աշակերտուհիներուն ընթացքին կամ կենաց, սրտին եւ մտքին աղէկ ու խնամստ առաջնորդներն ըլլալը: Ասանկ ճամբայ մը բռնուելու ըլլայ, եւ ազգին օրիորդներն ասանկ խնամստ հոգածութեամբ ու հաստատուն առաջնորդութեամբ կառավարուելու ըլլան, ան ատեն սէրը, ակնածութիւնը, երախտագիտութիւնն ու բարեպաշտութիւնը զօրիորդներն ամէն կերպով կը զգուշացնեն՝ առանց իրենց ծնողաց կամքին ու դիտութեան բան մը չընել, եւ ասիկայ իրենց բոլոր ապագայ կենացը համար շատ մեծ օգուտ ու ազգեցութիւն կրնայ ունենալ:

25. Ծնողաց վարմունքն իրենց զեռահասակ որդւոց հետ:

Թէ որ հայր մը առանց իր հայրական պատիւն ու մեծարանքը որդւոյն առջեւը պզտիկցընելու՝ իր բոլոր վարմունքը յառաջուրնէ անանկ բռնած ու կարգի դրած ըլլայ, որ որդին զանիկայ իր ամենէն մեծ ու մտերիմ բարեկամը սեպէ, ան ատեն իր ամէն ծանրակշիռ դորձքերուն մէջ զանիկա իրեն բոլոր դաղանիքներուն դիտակ ու հաւատարիմ խորհրդատու կ'ընէ: Աս ասանկ եղած ատեն՝ խոհեմ հայրը պէտք է որ միտքն իր անցուցած կեանքին վրայ դարձնէ, եւ կարգաւ յիշէ՝ իբրեւ պատմութեան գրքի մը մէջ կարդալու պէս՝ թէ իր բոլոր ընթացքին մէջ, կամ թէ ըսենք՝ աս կենաց նաւագնացութեան մէջ, ինչպիսի ժայռերու, յորձանքներու, ան-

դունդներու, մէկ խօսքով՝ ինչպիսի վտանգաւոր վայր-
կեաններու հանդիպած է, որոնցմէ կամ առ ու ան կեր-
պով յաջողակի ազատեր ու անմիաս անցեր է, եւ կամ
դժբախտաբար քիչ շատ մնաս կրեր է: Ասոնց յիշատա-
կութիւնը՝ իր զաւկին ճամբայ ցուցըցած ատեն՝ իրեն մեծ
օգնութիւն կ'ընէ: Ասանկ խորհրդակցութեան ու հօր եւ
որդւոյ մէջ ընտանեկան խօսից պէտք է շատ հեղ մայրն
ալ մասնակից ընել, ինչու որ ասոր քաղցր ու հաշտեցու-
ցիչ վարմունքն ասանկ բաներու մէջ չէ թէ միայն բա-
րերար ազդեցութիւն ունի, հապա նաեւ շատ հարկաւոր
է, վասն զի կրնայ ըլլալ որ խիստ բարքը, ծանր խօսքերը
կամ բարկացոտ բնաւորութիւնը հօր մը սիրտը դրդուէ իր
որդւոյն դէմ անիրաւ վճիռ մը տալու:

Հաւելով պէտք է ըսել թէ շատ հեղ կը տես-
նենք որ իր ֆիզիքական ու հոգեկան կարողութենէն վեր
յանդդնող կամ ջանացող հայր մը, որն որ իր կողակցին
ու որդւոցը խիստ հարկաւոր պահանջմունքը մեծ դժուա-
րութեամբ կրնայ կատարել, իր զաւկրներուն դէմ ապա-
ժամ սպառնալիքը կամ վախ տուող խրատները յաճա-
խելով, անոնց առջին իր յարգը շատ կը կորսունցընէ,
որովհետեւ այն խստութիւններուն համար իր ետեւէն
արհամարհանօք կը վարուին եւ իր խօսքերն անպտուղ
կը թողուն:

Ասոր համար պէտք է անէկ աշխատիլ որ երիտա-
սարդներուն մէկ դիպց անչափ թուլութիւն չցուցուի,
իսկ մէկալ կողմանէ տարապայման խստութիւն չբանե-
ցուի. հապա միջին ու խոհեմ ճամբով հաստատուն ըն-
թացք մը սորվեցուի: Արեւնց թոյլ տալու է որ ընկերու-
թեանց կամ մարդկան մէջ մանեն ու քաղաքավարու-
թեամբ վարուելով՝ դուսնուն, երբեմն անմիաս խաղ մը
խաղան, իրենց մտքին գաղափարներն ուրիշի հաղորդեն,
որ եթէ ծուռ գաղափար մը ունին՝ շիտկուի, սխալ կար-
ծիք մը ստացեր են՝ ուղղուի, իրենց մտաց ուժը բանեցը-
նեն, զգածմունքներնին բարեկարգեն, բանաւոր պա-
տուասիրութիւնը բորբոքեն, հոգեւոր ծուլութիւնը դար-
մանեն, շափաղանց ուժգնութիւնը շափաւորեն, օրուան
դէպքերուն վրայ խօսին, եւ իրենց ժամանակուան պատ-

չաճ սովորութեանց ըստ կարելւոյն յարմարին. եւ ասանկ բաներու մէջ իբր թէ իրենց կենաց համար դպրոց կամ վարժոց մը դանեն, որով աշխարհքիս մէջ ապագայ ժամանակներն ունենալու աստիճաններնուն՝ ինչպէս որ պէտք է՝ պատրաստուին:

Արթուած ու բարերար մարդկան հետ կենցաղավարելով՝ իր խորհուրդներն անոնց յայտնելը եւ անոնց խորհուրդները լսելը՝ միեւնոյն զուարճութիւնն ու հաճութիւնը կու տայ մարդու, որն որ մարդ բնութեան դեղեցկութիւնները նկատելով՝ կրնար ունենալ: Աս երկուքին տուած զուարճութիւնը միշտ նոր կը մնայ, ամենեւին չիձանձրացրնէր, ամէն ատեն մարդուն սիրտը կը զուարթացրնէ: Ասոր համար պէտք է որ երիտասարդները միշտ ընկերական հաղորդակցութեան մէջ ապրին, որով չէ թէ միայն ճարտարախօս (կարգով կանոնով խօսող), մարդասէր եւ ուրիշներուն ուրախակից ու կարեկից կ'ըլլան, հապա իրենց մտաւոր կրթութիւնը յառաջ տանելով ու կատարելագործելով, մեծ զուարճութիւն ու հաճութիւն կ'ունենան: Թէ որ պզտիկուց կամ տղայութեան ատենէն վայելուչ ու գովելի վարմունք ունենալու վարժած են, պատանեկութեան կամ երիտասարդութեան ատեն խոհական ու խելացի խօսակցութիւններուն սրտանց մտադիր կ'ըլլան, մանաւանդ թէ ասանց ձանձրացուցիչ հարցմունքներ ընելու՝ այն խօսակցութեանց երբեմն մասնակից ալ կ'ըլլան, եւ անոնց մէջ ցուցրցած դատաստաննին կամ մտաւոր դատումնին, ինչպէս նաեւ իրենց դործողութիւնները յայտնապէս կը ցուցրնեն՝ թէ իրենք ճշմարիտ բարեկամք մարդկութեան են. եւ ահա աս է ճշմարիտ կրթութեան կամ դաստիարակութեան յաջող հետեւանքը, որն որ մարդ գրքեր կարդալով չիկրնար սորվիլ:

Խոհական ծնողք ու դաստիարակները իրենց ձեռքին տակ ըլլող երիտասարդներուն անանկ ընկերական խաղեր խաղալու թոյլ կու տան, որոնք դիտեն թէ խաբող ու հրապուրող չեն, եւ ասանկ խաղերու մէջէն աւելի բնորելու է անանկները՝ որոնց մէջ մարդ իր միտքն ալ օգտի կրնայ կրթել:

26. Աս հասակի անձանց ուրիշներուն հետ վարուելուն մէջ կրթութիւնը :

Ամէն մէկուն իր անձնական կամ յատուկ ձիրքերը (կատարելութիւնները) ըստ պատշաճի յարգելը, ուրիշի ծառայութիւն կամ օգնութիւն ընելը, բնական կարեկցութիւնը կամ թէ բռնեք՝ ուրիշի ցաւակից կամ ուրախակից ըլլալու յարմարութիւնը՝ շարեկամութիւն կը պատճառեն ու կը ծնանին : Ճշմարիտ բարեկամութիւնը պարապ խօսքերու եւ խոստմունքներու վրայ հաստատուած չէ, հապա հարկաւոր եղած ատեն բան մը զոհելու, այսինքն՝ նեղութեան մէջ ըլլողին՝ գործքով օգնելու, վտանգի մէջ արիութիւն ցուցնելու, եւ ուրիշին մտմտութիւն ու հոգերը փարատելու համար ջանալու վրայ : Արդ՝ թէ որ երիտասարդք իրենց աս հասակին մէջ կը սկսին իրենց սովորութիւն ընել՝ որ շուտով ու առանց աղէկ մը մտածելու ուրիշի բարեկամ չըլլան, իրենց կենսակցութեան մէջ զգուշաւոր ըլլան, եւ մտածմունքնին ու զգածմունքնին ուրիշներու հաղորդելու ատեն՝ բաւական մտազրութիւն ընեն, ալ անկից ետքը աս կտորիս մէջ ցաւելու եւ զղջալու դժուարաւ պատճառ կ'ունենան : Ալ որ շատ մարդկան բարեկամ ըլլալ կ'ուզէ, ամենեւին մէկու մը ճշմարիտ բարեկամ չ'ըլլար . որովհետեւ բարեկամութիւնը, բուն ճիշդ ու բարձր նշանակութեան նայելով, ներքին ու հոգեկան համակրութիւն ըլլալուն, մի եւ նոյն ատեն շատ մարդիկներու հետ շիկրնար հաստատիլ : — Անանց մէջ հասարակօրէն ճշմարիտ բարեկամութիւն դժուարաւ կրընայ դանուիլ, եւ աս բանս աւելի եւս հաստատութեամբ կ'իմանանք՝ երբ որ մտածենք թէ կանանց համար ի բնութեան սահմանում է՝ որ իրենց սէրն ու կեանքը բոլորովին իրենց էրկանը եւ ետքը զաւկրներնուն տան կամ զօհեն : Ծնողք երբ որ իրենց զաւկրներուն վրայ սոսկ կամ ան անձի համար բարեկամութեան նշաններ կամ զգածմունքներ կը տեսնեն, պէտք է որ ան անձինքն աղէկ դիտեն, անոնց վրայ պակասութիւն մը տեսնելու ըլլան նէ խոհեմութեամբ ուղղելու աշխատին, եւ եթէ հասկրնալու ըլլան որ ան պակասութիւններն իրենց զաւկրներուն

վրայ փաստակար արդեցութիւն մը կրնան բնել, ասուն չկորսունցրցած ու առանց արտաքին պարագաները կամ թէ բունք օգուաները նկատելու՝ ան բարեկամութեան կապերը կամ կենսակցութիւնը քակելու նային:

Հիմակուն ատենիս սովորական եղած կրթութիւնը կամ քաղաքավարութիւնը մտաց գործունէութեան ու կրթութեան վեր ի վերոյ ու շատ անկատար բլլալուն պատճառ կ'ըլլայ, որով եւ շատ պարապ կամ անզգայ սրտեր ու անպիտան ծանօթութիւններով լեցուած գլուխներ կը դանտին: Աւտի Հիմակ ուրիշ ատեններէ աւելի հարկաւոր է երիտասարդներուն միտքը համոզել որ միայն հարազատ կրօնասիրութիւնը կամ բարեպաշտութիւնը, բարեբարութիւնն ու հաստատուն եւ հիմնական գիտութիւնը՝ կրնայ մարդու շնորհել այն անձնական յատուկ արժանաւորութիւնը՝ որն որ յատկապէս սրատիւն կ'ըսուի. եւ որուն համար մարդ ինք իրեն կը համոզուի թէ իրաւընէ պատիւ է եւ ուրիշներն ալ անոր անանկ բլլալը ճանչնալու կը պարտաւորին: Անկրթութիւնը, ինք զինքը մեծ ու պատուոյ արժանի սեպելը, արտաքին շքեղութիւնը, անառակ վարմունքը, ինչպէս նաեւ հարստութիւնն ու ցեղի ազնուութիւնը չեն կրնար մարդու ճշմարիտ պատիւ բերել: Երաւի արիական համարձակութիւնը՝ մարդու պատուոյ արժանի կ'ընէ, բայց յատկապէս արի ու համարձակ ըսուելու համար պէտք է որ մարդ հասարակաց բարւոյն կամ ազնուական վախճանի մը համար ինք զինքը քաջութեամբ վտանգի մէջ դնէ. իսկ թէ որ մէկը չնչին կամ ոչինչ պատճառի համար ինք զինքն անխոհեմութեամբ վտանգի մէջ դնելու բլլայ, յանդուգն կը սեպուի ու պատուոյ արժանի չէ:

Աս հասակին մէջ պատանեաց ու օրիորդաց զգեստն ալ իրենց վրայ բառական մտաւոր կամ բարոյական արդեցութիւն կ'ընէ: Երիտասարդաց մէջէն ոմանք անզգայ անտարբերութեամբ մը զգեստներու կարգաւորութեան ու մարմնոյ մաքրութեան ամենեւին հոգ չեն տանիր. իսկ ոմանք գլուխներնուն մազերը մեծ փութով կ'երկընցընեն ու կը շիտկեն, գեռաբոյս մօրուքնին ու բնչացքնին կը զարդարեն, եւ արտաքոյ կարգի նորասիրութեան ետեւէ

բլլալով, ամենուն աչքն իրենց վրայ դարձրնելու կ'աշխատին: Քայց խեղճերն ասանկ սնտոխ հնարքներով ու նորակերպ ցոյցքերով զամէնքը զարմացրնել եւ երբեմն սուոր նուոր սիրտը շահիլ կարծած ատեննին՝ բան հասկըցող ու աղէկ կրթուած մարդկան առջին ծիծաղելի ու արհամարհելի կ'ըլլան:

Օրիորդներն ընկերութեան կամ մարդկան մէջ ապրելու պարտաւորած բլլալով, իրենց բնութեան համաձայն՝ գրեթէ հարկ մը կը սեպեն նորասիրութեան ճամբան ամէն ճշդութեամբ բռնել: Աս կտորիս մէջ աստեք իրենց մտքին մէջ բուն աս գաղտուկ վախճանն ունին՝ որ բնութենէ ունեցած վայելչութիւննին ու արտաքին ձիրքերնին աւելցրնեն ու աւելի աչքի հաճոյական ընեն եւ ուրիշներուն սիրտն ու սէրը շահին: Շատերը կիրակի ու տօնի օրերը մետաքսեղէն զգեստներով կը զարդարուին ու դուրս կ'ելլեն, իսկ տան մէջ հասարակ հաստ զգեստներ հագնելու եւ անարդ ծառայութիւններ ընելու կը պարտաւորին: Շատերն ալ հարուստներուն ու իրենցմէ վեր բլլողներուն հետ հաւասար երեւալու համար՝ կերակուրնին շէն հողար, անօթութեամբ կը շարշարուին, իրենց ուժէն աւելի կ'աշխատին, երբեմն նաեւ ծածուկ անկարգութիւններով ծար կը փնտռեն գեղեցիկ զգեստներ ու զարդեր գնելու: Ինչ ցաւալի ու տրտմալի բան է, որ շատ աղջիկներ նորասիրութեան եռանդով ու փափագով իրենց բարի վարքը, անմեղութիւնն ու սրտերնուն եւ մտքերնուն հանգստութիւնը վտանգի մէջ կը դնեն. եւ աս սքանչելի ու պատուական գանձերը հեղ մը կորսուելէն ետքը, ալ ան օրիորդները կարդուած ատեննին՝ ինչ օժիտ կրնան բերել իրենց ամուսիններուն, եւ անոնցմէ ինչ բարիք պահանջելու կրնան համարձակիլ: Եւ թէպէտ ոմանք իրենց զարդասիրութեան ու նորասիրութեան միջոցներովը բախտաւոր գտնուին, էրիկ մարդկան հաճոյ բլլան ու անով աշխարհք մտնեն, սակայն փորձը հաստատութեամբ ցուցրցած է ու միշտ կը ցուցրնէ որ այն էրիկ մարդիկ ասանկ օրիորդաց վարմունքին ու ախորժակին համաձայն վարմունք ու ախորժակ ունեցող, տկարամիտ, պարապ գլուխ, զգայութեանց

գերի ու հեշտասէր մարդիկ են, եւ իրենց ընթացքն ու
կեանքը՝ միայն արտաքին ցոյցներու եւ պարագաներու կը
յարմարցնեն: Բայց ո՞վ չի գիտեր որ ասանկ ամուսնու-
թեանց մէջ գրեթէ անկարելի է որ ընտանեկան բարե-
բախտութիւն ու կարգաւորեալ անտեսութիւն գանուի,
եւ զաւկրներուն բանաւոր ու բարի կրթութիւնը յաջողի-
որովհետեւ այսպիսի ամուսնակցաց մէջ փոփոխ յարգու-
թիւն ու մեծարանք չի գանուիր, ամէն բարոյական զգած-
մունքը զգայական կենաց կը դառնայ, եւ բոլոր կենաց
շէնքը դրսանց աղուոր ու փառաւոր ալ երեւայ՝ ներսանց
փուտ ատաղձով յարմարած ու խախուտ է, եւ երբ որ է
նէ՛ բոլորովին կործանելու վտանգի մէջ կը գանուի:

27. Ապագայ վիճակը կամ կենաց պայմանի ընտրու-
թիւնը:

Թէպէտ եւ բարի կրթութեամբ մեծցած երիտա-
սարդ մը պէտք է որ իր ապագայ վիճակն ինք ընտրէ,
եւ բարեկամական խորհրդակցութիւն կամ համոզիչ
խրատներ ան ատեն հարկաւոր են՝ երբ որ ասանք առանց
երկար ու խորունկ մտածութեան, կրիւք կոյրնալով կամ
անհիմն փափագով, իրենց անձին ու աշխարհքի աղէկ
ճանօթութիւն չունենալով, վիճակ մը ընտրելու կը փու-
թան. բայց վիճակի ընտրութիւնը՝ մարդուն կենաց ամե-
նէն երեւելի ու գլխաւոր վայրկեանն է: Կնչու որ բուն
անոր մէջ կը գանուի ան սերմը՝ ուսկից ատենին պիտ'որ
երեւան գայ ու դուրս ելլէ առողջ ու սնուցիչ կամ ան-
օգուտ ու բոլորովին դառն պտուղը: Ասոր համար պէտք
չէ երիտասարդաց ու օրիորդաց բոլորովին ազատ թողուլ
իրենց ապագայ վիճակն ընտրելը. վասն զի թէ որ աս
ընտրութեան մէջ անյաջող ու դժբախտ գանուելու
ըլլան, յայտնի կամ գաղտնի իրենց ծնողաց դէմ կը
տրանջեն ու յանցանքն անոնց վրայ կը ձգեն. որովհետեւ
ասանք իրենց զաւկրներուն կենաց հանգամանքը, կրթու-
թեան չափն ու պայմանը եւ իրենց նկարագիրը կամ
բնաւորութիւնն աւելի աղէկ կը ճանչնան, ուստի եւ ի-
րենց պարտքն էր՝ անոնց վրայ աղէկ հող ու խնամք ու-

նենայ : Առանց հաստատուն մտածութեան ու անխոհեմութեամբ վիճակ մը բնարողը՝ չէ թէ միայն իր անձին վնաս կ'ընէ, հապա նաեւ իր ազգականներուն ու ասանկով բոլոր քաղաքային ընկերութեան կամ ազգին ալ : Ինչու որ հասարակաց ընդհանուր բարիքն ու երջանկութիւնը կը պահանջէ որ ամէն վիճակի ու կարգի մարդիկ այն աստիճանին ու կարգին հասնին ու անոր մէջ հաստատուին՝ որուն համար իբր թէ իրենց բնութիւնը զիրենք որոշած կ'երեւայ, եւ որուն մէջ իրենց պարտքերը ճշդութեամբ ու բոս ամենայն հանգամանաց կրնան կատարել :

Փորձուած բան մըն է՝ որ ծնողք իրենց զուկրներուն համար մասնաւոր վիճակ մը սահմանելու մէջ շատ հեղ առանց հասուն ու հաստատ խորհրդակցութեան կամ մտածութեան կը գործեն, եւ միայն արտաքին պատճառներէն ու պարագաներէն շարժելով՝ բան մը կ'որոշեն կ'ընդունին կամ ետ կը ձգեն : Արբեմն մայրը կամ մօրաքոյրը, երբեմն կնքահայրը կամ դրացին ու երբեմն ընտանի բարեկամ մը կամ ինք զինքը գիտուն ու հմուտ ցուցնող անձ մը երկայն խօսքերով ու խրատներով հօր մը ականջներն ու գլուխը լեցրնելով, զանիկայ իր զուկին ապագայ վիճակն որոշելու եւ ընտրելու մէջ կը սխալեցրնեն, առ երեւոյթ շահ մը՝ մեծ օգուտ կը կարծեցրնեն, շնչին արգելք մը՝ անյաղժեւի փափանիչ կ'երեւցրնեն, բուն իրական դժուարութիւններն ու սահմանները՝ ոչնչի տեղ դնել կու տան, եւ անանկ վիճակ մը կամ կենաց կերպ մը անոր առջին կը դնեն՝ որուն այն երիտասարդին ոչ բնաւորութիւնը եւ ոչ կրթութեամբ յարմար ու համաձայն է, նաեւ Ֆիզիքապէս ալ յարմարութիւն ու մարմնոյ կազմութիւն կամ ոյժ չունի :

Նստանիքի մը մէջ երիտասարդի մը համար ընտրուելու վիճակին վրայ խօսք ու խորհուրդ եղած ատեն, անոր աս կամ ան վիճակի փափագ ու յօժարութիւն ունենալը՝ որոշիչ պատճառ պէտք չէ բլլալ : Աւելի պէտք է անոր մինչեւ ան ատեն բռնած ընթացքէն ու ցուցրցած փոյթէն եւ բրած գործքերէն մակաբերել ու որոշել՝ թէ իր կամքն անկից ետքը ամէն դժուարութիւն-

ներու մէջ մինչեւ վերջը դործունեայ ու հաստատ պիտ'որ
կենայ: Չոր օրինակ երիտասարդ մը ուսմանը լմնցնելու
լու ատենները միտքը դրած կ'ըլլայ որ բժշկութիւն սոր-
վի, բայց իր ջղացը դիւրագրգռութիւնն ու իր երեւակայ-
ութեան հանգամանքը իրեն անկարելի կ'ընեն՝ վտան-
գաւոր ու ծանր հիւանդութեանց ու վիրաբուժական
դործողութեանց կամ հատմանց մէջ սրտին սոսկումն ու
զղուանքը յաղթել, ուստի եւ աւելի կ'ընտրէ իր կեան-
քէն երեք կամ չորս տարի կորսնցնել՝ քան թէ այն
ընթացքին կամ պաշտօնին մէջ մինչեւ ցվախճան յարա-
տելել: Ամանք ալ քահանայական վիճակը կ'ընտրեն՝ ա-
ռանց իրենք զիրենք աղէկ մը քննելու, թէ արդեօք
բաւական խոնարհութիւն ու անձնաբացութիւն ունին՝
որ աս բարձր ու գերադանց պաշտօնին ամէն պարտքերն
ու պահանջմունքները կարող ըլլան կատարել: Ասանկ
պէտք է իմանալ ուրիշ այսպիսի ծանր պարտքեր ունե-
ցող վիճակներուն կամ կենաց կերպերուն վրայ: Ասոնց
ամէն մէկն ընտրելէն առաջ պէտք է շատ աղէկ քննու-
թիւններ ընել ու մեծ խոհեմութիւն բանեցրնել, ինչու
որ մարդ հեղ մը վիճակ մը ընտրելէն ետքը՝ անոր մէջ
յառաջ երթալը դժուարին սեպելով՝ անիկայ թող տա-
լու եւ ուրիշ նոր վիճակ մը ընտրելու ստիպուած ատեն,
չէ թէ միայն պարսպ տեղ ժամանակ, ստակ ու աշխա-
տութիւն կորսնցուցած կ'ըլլայ, հապա նաեւ սա միասն
ալ կ'ունենայ՝ որ նոր ընտրած վիճակին մէջ ալ փա-
փագելի վախճանի մը շիկրնար հասնիլ, եւ սա բանս՝ այս
ինքն ցանկալի վախճանին չհասնիլը՝ աւելի հաւանական
կրնայ ըլլալ, թէ որ մարդ ինք զինքն ու նոր ընտրած
վիճակին պարտքերը սուր աչքով կամ հասուն խորհրդով
բոտ ամենայն պարագայից քննած չ'ըլլար:

Վիճակի փոփոխութիւնը կամ մէկ վիճակը թող
տալով՝ ուրիշ վիճակի անցնիլը, ամենեւին օգտակար ու
գովելի բան չէ, եւ չէ թէ միայն ժամանակի կորուստ է,
հապա մութի մէջ ասդին անդին խարխափելու կը նմա-
նի: Հանձարաւոր դլուխներն ամենէն աւելի իրենց ապա-
գայ վիճակն ընտրելու մէջ թեթեւութեամբ կը շարժին,
ուստի եւ իրենց անխոհեմութեամբն ու յանձնապա-

տանութեամբ շատ մեծ սխալներու մէջ կ'իյնան, եւ զանազան վտանգներու յաղթելու ուժ ու հաստատութիւն ալ ունենան, սակայն այդպիսի վտանգներու եւ պատերազմներու մէջ բոլորովին անվնաս ու անարատ չեն կրնար մնալ: Հասարակօրէն խօսելով՝ ասոնց իրենց առանձին կամքովն ու մտածութեամբ գտած ու բռնած ճամբան ու կենաց ընթացքը՝ միշտ օրինաց համաձայն չըլլալուն, ոչ երբեք ճշմարիտ երջանկութեան կրնայ հասցընել*:

Չենք կրնար ամենեւին ուրանալ՝ որ ամէն մէկ գիտութիւն մարդուն սրտին ու ոգւոյն վրայ յատուկ ազդեցութիւն մը կ'ընէ, զոր օրինակ իրաւագիտութիւնը հասարակօրէն անոգայ ու կառասէր (վիճասէր) կ'ընէ. բժշկութիւնը կարեկից, մարդասէր ու (բուն արհեստին յաջողուիլն անստոյգ ըլլալուն) շատախօս կ'ընէ: Սոյնպէս ամէն մէկ մեքենական արհեստն ալ մարդուն բարուցը վրայ անտարակոյս իր ազդեցութիւնն ունի, անանկ որ վարժ ու հմուտ մարդ մը անձի մը վարմունքէն անոր դրաղմանց ինչ ըլլալը կրնայ մակարելել:

Ամէն մէկ վիճակ իր սփոփութիւնը կամ զուարճութիւնը եւ իր ծանրութիւնն ունի. եւ ով որ կ'ուզէ իր վիճակին ծանրութիւնը թեթեւութեամբ ու առանց յուսահատութեան կրել, մարմնական վայելմանց համար ունեցած յօժարութիւնն աւելցընելու չէ, ինչու որ անիկայ ամէն հեղ շիկրնար կատարել. վայելմունքը մինչեւ ամենէն սաստիկ աստիճանին հասցընելու պէտք չէ որ աշխատի, հապա ապագային համար ալ քանի մը աստիճան թողու եւ պահէ, ամէն դժուարին ու անհաճոյ բաներն իբր անփոփոխելի՝ ուստի եւ համբերութեամբ կրուելու բան մը սեպէ, եւ աս անցաւոր կեանքէն արտաքոյ կարգի

* Բենիամին Ֆրանքլինին վարքը կարգալով՝ կը տեսնենք որ աս մեծանուն մարդն իր վիճակը կամ կենաց կերպը շատ հեղ փոխեց, եւ սակայն շատ բանի մէջ օգտակար ու գովելի վախճաններու հասաւ. սյսինքն այլեւայլ վիճակի մէջ յաջող ու բախտաւոր եղաւ: Բայց ինչպէս մատենագիր մը աղէկ կ'ըսէ, սյսպիսի յաջողութիւն կամ յաջող եւք մը ունենալու համար պէտք է նախ՝ Բենիամին Ֆրանքլին մը ըլլալ. եւ երկրորդ՝ աշխարհքի ու կենաց հանգամանքներուն անանկ յաջող ու յարմար կապակցութեան հանդիպելու է, ինչպէս որ ինք հանդիպեցաւ:

մեծ կամ բոլորովին հանդարտեցուցիչ սփոփութիւն ու զուարճութիւն փնտռելու չէ: Մարդ միայն աս կանոնները դնելով ու պահելով՝ կրնայ կատարել նոյն խել իր բնութեան մէջ դանուող այն ցանկութիւնը կամ փափագը՝ որն որ միշտ կը ցանկայ որ հաճոյականը միշտ անհաճոյէն աւելի դանուի, եւ ասանկով երջանկացուցիչ զուարթութեան մէջ ապրիլ:

Արիտասարդաց ապագայ վիճակն ընտրելու պատրաստութիւն մը տեսնելու զգուշաւոր դիտողութիւնը ծնողաց ու դաստիարակներուն առջի ու գլխաւոր խնամքներուն մէկը պէտք է ըլլայ: Բայց ասանկով ալ աս կտորիս մէջ հաստատուն բան մը որոշելը՝ դեռ միշտ շատ դժուար բան մըն է, ինչու որ աս բանս յաջողութեամբ կատարելու համար՝ ամէն մէկ երիտասարդին կամ ապագայ քաղաքացւոյն բնական (Ֆիզիքական), մտաւորական ու բարոյական հանգամանքները ինչպէս նաեւ աշխարհքիս բոլոր կարգերն ու պարագաները կարելի եղածին չափ ուղիղ կշռել ու քննել պէտք է: Աս կտորիս մէջ բան մը որոշելը հիմակ ուրիշ ատեններէ աւելի դժուար է, ինչու որ հիմայ շոգւոյն միջոցաւ (շոգենաւերով ու շոգեկառքերով) եւ հեռագրական գործիքներով ամէն բան սոսկալի շուտ ընթացք ուստի եւ փոփոխութիւն մը գտաւ, անանկ որ հիմայ շատ ու շատ բանի վրայ մէկ տարւան մէջ աւելի փոփոխութիւն ու տարբերութիւն կ'ըլլայ, քան թէ առջի ատենները քառորդ դարի կամ քսանուհինգ տարւան մէջ:

Աղէկ կրթուած անձ մը, որն որ իր ուսման ընթացքը յաջողութեամբ լմրնցուցած եւ փիլիսոփայութեան կանոնաց համաձայն շիտակ մտածելու վարժած է, իր վիճակն ընտրելու մէջ միայն բանաւոր պատճառներով ու աշխարհքիս հանգամանքն ուղիղ դիտելով ու դատելով՝ բռնելու ընթացքը կ'որոշէ, իր ապագայ բարեբախտութեան հիմնիչ ըլլալու բաղձալով՝ ամէն բան ծանրութեամբ ու խոհեմութեամբ կը քննէ, եւ խոհեմ ու փորձառու մարդու մը խորհուրդներն ալ շնորհակալութեամբ իրեն օգնական կ'ընէ: Բայց կան շատ ծնողք, որոնք իրենց զաւակներն իրենցմէ քանի մը աստիճան վեր

ու առաջ տանելու կը բաղձան, եւ բոլոր ուժով կը ջանան որ իրենց ամէն յոյսերուն կատարումն այն նոր բախտախնդրին վրայ տեսնեն: Ասանկ աստիճանէն ու ստփորութենէ վեր ելլելու ջանքին՝ բարի վախճան ունենալը միշտ տարակուսելի է, եւ կրնայ շատ հեղ գէշ վերջ մը ունենալ, ինչպէս տխուր փորձերը ցուցըցած են: Ասանկ դիպուածի մէջ ծնողք՝ բուն հարկաւոր եղած ատեն՝ իրենց զաւկրներուն օգնութիւն կամ առաջնորդութիւն չեն կրնար ընել, ինչու որ բուն իսկ իրենք անանկ ատեններ ուրիշ օգնութեան կարօտ են. անոր համար պէտք է որ անոնք շուտով ուրիշ առաջնորդութեան յանձնեն. սակայն ասոր մէջ ալ՝ թէ որ ուրիշ արգելք չգտնուելու ըլլայ՝ կը ստիպուին ի վախճանի ամէն դիպք վրայ եկող դժուարին պարագաներու պատճառով տեսնել ու խոստովանիլ որ չարաչար խաբուած են:

Աւրեմն ամենայն ինչ հաստատուած է աս բանին վրայ, որ մարդ ինք զինքն ու աշխարհքն աղէկ ճանչնայ. ուստի եւ ծնողք Աստուծոյ իրենց տուած սիրոյ պատուները կամ աւանդները, մանաւանդ հիմակուան ժամանակները, պէտք է որ մարդկային ընկերութեան օգտակար ու պիտանացու ընելու ջանքով կրթեն, որ անոնց կեանքը բոլոր աշխարհքի ու մանաւանդ իրենց ազգին մէջ գոյութեան արժանի ըլլայ:

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ժ

Ժնողաց ու տնակասն դաստիարակին յարարերոսթիակն-
ներն ու պարտքերը իրարոսն նկատմամբ:

1. Օրինաւոր ու կատարեալ դաստիարակութեան
մէջ ծնողաց ամենէն մեծ դժուարութիւն պատճառող ու
անոր համար շատ մեծ զգուշութիւն պահանջող հանգա-
մանքը՝ յարմար ու ըստ կարի կատարեալ դաստիարակ ու
կրթիչ մը գտնել ու ընտրելն է: Աս ընտրութեան մէջ
պէտք է որ ծնողք ամենայն ճշգուշութեամբ խոհեմու-
թիւն ի գործ դնեն, ամէն պարագաները հաստատուն
խորհրդածութեամբ քննեն ու ընտրուելու անձին վրայ
հաստատուն ու ապահով տեղեկութիւններ ունենան:
Հոս պէտք է որ դաստիարակ ըլլալու անձին բնաւորու-
թիւնը կամ նկարագիրն ու նոյն պաշտօնին անհրաժեշտ
կարեւոր ըլլող սեպհականութիւնները կամ հանգա-
մանքը ծնողաց կողմանէ ընտրութեան ատեն աղէկ նկա-
տուին: Իսկ նոյն դաստիարակին կողմանէ՝ իր աս մեծ
պաշտօնն ըստ ամենայն պահանջմանց աղէկ վաշտելու հա-
մար տան մը կամ գերդաստանի մը մէջ մտնելէն առաջ՝
նկատելու եւ դիտելու հարկաւոր հանգամանքն են. Ա.
դաստիարակութեան նկատմամբ ծնողաց ունեցած ըմ-
բռնումը կամ դադափարները, Բ. իրենց բնաւորութիւնը,
Գ. տան մէջ սովորական եղած հասարակ կարգը, Դ.
բոլոր գերդաստանին հանգամանքը:

2. Բնաւոր ու յարմար դաստիարակ սեպուելու հա-
մար բաւական չէ միայն նոյն պաշտօնին հասնելու ջանա-
քը, ինչպէս նաեւ ազգականներուն եւ բարեկամներուն
յանձնարարութիւնն ու բարեխօսութիւնը: Ծնողք պէտք
է որ դաստիարակ ըլլալու ետեւէ ըլլող անձին ջանքէն
ու իրեն համար եղած յանձնարարութեանէն առիթ առ-
նուն՝ նոյն անձին հետ ծանօթութիւն ընելու եւ իր ա-
մէն կարեւոր հանգամանաց վրայ ճիշդ տեղեկութիւններ
առնելու: Երբեմն շատ ընտիր դաստիարակն ալ կրնայ
գերդաստանի մը համար այնչափ յարմար կրթիչ շնե-
պուիլ. ինչու որ կարելի է թէ իր կարծիքն ու մտածելու

կերպը՝ նոյն գերդաստանին մէջ ծնողաց եւ ուրիշ գրե-
խաւոր անձանց մտածելու կերպին բոլորովին կամ գոնե
բայտ առաւել մասին հակառակ ըլլայ: Այսպէս զգու-
շաւոր տեղեկութիւններն ուրիշ քանի մը մեծ օգուտնե-
րէն զատ առ օգուտն ալ ունին՝ որ ծնողք անոնցմով
դաստիարակին բուն բնաւորութիւնը, իսկ դաստիարակը՝
ծնողաց ու կրթութեւ լու տղուն բնաւորութիւնը կը ճանչ-
նան: Ասով երկու կողմանք ալ շատ անպատշաճութիւն-
ներէ ու անխորհուրդ ընթացքին մնասներէն ազատ կը
մնան, զորոնք իրօք պատահելէն ետքը՝ շիտկելը կամ
անհետ ընելն անկարգ անձնասիրութենէ կամ պատկա-
ռանքէն մեծ մեծ արգելքներ կը կրէ: Թէ որ հեղ մը
ամէն կարեւոր քննութիւնները թէ ծնողաց եւ թէ
դաստիարակին կողմանէ ի գործ դրուելէն ետքը՝ տան մը
մէջ դաստիարակ կամ ուսուցիչ դրուելուն պատշաճ ա-
տենին հոգ կը տարուի, անկից ետեւ ծնողք շէն ստիպիր
իրենց զաւակաց կրթիչները յաճախ կամ շուտով փո-
խելու. որուն շատ մնասակար գործ մ'ըլլալը առ մէկ
հանգամանքէն յայտնի կ'ըլլայ՝ որ ամէն մէկ դաստիարակ
իր առանձնական կամ անձնական տեսութիւնն ու սոր-
վեցրնելու եւ դաստիարակելու կերպն ունի: Արդ երկայն
խօսքերով ցուցրնել հարկ չկայ՝ թէ տղայ մը քիչ մը
ատեն մէկ ընթացքով ու ոճով, քիչ մը ատեն ուրիշ
կամ հակառակ ընթացքով կրթութեւ լու որ ըլլայ, որչափ
դժուարութիւններու կը հանդիպի, ինչչափ դանդաղ
յառաջ կ'երթայ, մանաւանդ թէ իր յառաջադիմու-
թեան մէջ որչափ կ'արգելուի: Սոյնպէս թէ որ դաս-
տիարակ մը՝ գերդաստանի մը ամէն (իրեն գիտնալու կա-
րեւոր ըլլող) հանգամանքը զգուշութեամբ չքննած ու
չխմացած՝ իբրեւ կրթիչ նոյն տան մէջ մտնելու ըլլայ,
եւ հոն իր յուսացածը չգտնէ, կամ թէ իր ընթացքը
հոն բայտ պատշաճի յառաջ տանելու անհնարին դժուար-
ութիւններ գտնէ, ի հարկէ (բայտ մարդկային տկարու-
թեան՝ անձնասիրութեան ու շահասիրութեան խոր-
հուրդներէն շարժելով) հոնկից դուրս ելլել (իր դեռ
նոր ձեռք բերած շահուն աղբիւրը թողուլ) չ'ուզեր, եւ
մէյ մը սկսած գործքն աղէկ գէշ՝ կը շարունակէ, առանց

խիղճ մը ունենալու կամ հոգ մ'ընելու՝ թէ իր խնամոց յանձնուած տղաք իր դաստիարակութեան օգուտը նոյն ատեն կը վայելեն ու ետքն ալ անոր շահը պիտ'որ տեսնեն, թէ չէ:

3. Ծնողք իրենց զուակաց կրթութեան համար աներևուն մէջ դաստիարակ մը առած ատեննին՝ պէտք է որ իրեն հետ անանկ վարուին ու այնպիսի մեծարանք ցուցնեն՝ որ անով իր յարգն ու վարելու պաշտօնին բարձրութիւնն ու ազնուութիւնը բոլոր տան մէջ ու տնեցւոց եւ արտաքնոց առջեւը յայտնի ըլլայ ու ճանչցուի: Ամէն բանէն առաջ ասիկայ պէտք է հաստատ բռնել՝ որ կրթիչը կամ դաստիարակը վարձով բռնուած ծառայ մը կամ տան մէջ ստորին անձանց մէկը չէ, հասկա տանտէրէն ու տիկինէն ետքը՝ իրրեւ ան գերդաստանին պատուելի անդամներուն մէկը՝ ամենէն աւելի պարտուպատշաճ մեծարանքն, ակնածութիւնն ու պատին ընդունելու իրաւունք ունի: Պէտք է յիշել միշտ՝ որ տան տղոց (որոնք գերդաստանին ու ազգատոհմին յաջորդները պիտ'որ ըլլան) գրեթէ բոլոր ապագայ բարիքն ու բախտը անոր ձեռաց ու խնամոց յանձնուած է. ուստի եւ ծնողք նոյն դաստիարակին վրայ ինչպիսի ու ինչչափ ակնածութիւն, սէր ու խնամք կ'ունենան, նոյնպիսի ու նոյնչափ սէր ու խնամք ունեցած կը սեպուին իրենց նոյն դաստիարակէն կրթուելու զուակաց վրայ: Եթէ ծնողք հեղ մը կը սկսին իրենց զուակաց դաստիարակին հետ անտարբերութեամբ վարուիլ ու իրեն պարտուպատշաճ երախտագիտութիւնն ու արդիւնաւորած յարգը չցուցնել, զուակներն ալ անոնց օրինակին հետեւելով՝ կը սկսին իրենց դաստիարակին հետ նոյն կերպով վարուիլ, եւ ասոր հետեւանքն ու պտուղն ան կ'ըլլայ՝ որ օր մ'ալ իրենց ծնողաց պարտուպատշաճ ըլլող երախտագիտութիւնն ու մեծարանքը կը զլանան: Ինչու որ ծնողք իրենց զուակաց դաստիարակն ընտրելէն ու տան մէջ առնելէն ետքը՝ զանոնք իր խնամոցը կը յանձնեն, բոլորովին անոր ձեռքին տակ կը թողուն, եւ տղաք իրենց բոլոր ժամանակը կամ անոր մեծագոյն մասը դաստիարակին քովն ու ընկերութեան մէջ կ'ան-

ցընեն: Ա՛լ անկից ետքը միայն դաստիարակին ձեռքն է
տղոց ապագան. ինք զիրենք կը կրթէ, կը սորվեցընէ,
անոնց ուսմանց ու վարմանց վրայ կը հսկէ, ամէն բան կը
կարգադրէ, բարին, իրաւացին եւ պարտուպատշաճն ա-
նոնց կը ցուցընէ, շարէն ու անպատշաճէն կը հեռացընէ
ու վտանգներէն կը զգուշացընէ: Ասոնք են դաստիարակի
մը՝ ուղիղ կարգաց, իր խղճմտանքին եւ յանձն առած
պաշտօնին համեմատ կատարելու գործքերը: Արդ թէ որ
ճնողք սա գործքերը յանձն առնող անձին, որ է իրենց
զաւակաց դաստիարակին հետ առանց կարեւոր մեծա-
բանաց ու երախտագիտութեան վարուելով, ուստի եւ
զինքն այնչափ մեծարելի ու կարեւոր անձ մը չսեպելով՝
անոր սիրտը կտարեն, մտացը մէջ անպատշաճ խորհուրդ-
ներ սնուցանելու ստիպեն կամ գոնէ առիթ տան, ինքն
ալ՝ ըստ մարդկային տկարութեան՝ (իբր անոնց ըրածին
հատուցում մը ընելով) իր խնամսցը յանձնուած տղոց
սրտին մէջ այն անպատշաճ զգածումները տնկելէն չի-
զգուշանար, զորոնք տանտիրոջ ու տանտիկնոջ իր վրայ
ցուցրցած վարմունքը սրտին մէջ պատճառած են . . . :
Աս մտածմունքներէն յորդորուելով ու զաւակաց բարիքն
ու ապագան մտածելով, միանգամայն մարդկային ազ-
նուական զգացմանց հետեւելով՝ բարեկիրթ ու խոհեմ
ճնողք իրենց զաւակաց կրթութեան համար ընտիր, ի-
մաստուն ու խնամատ դաստիարակ մը աներնուն մէջ առ-
նելէն ետքը՝ զանիկայ իրենց սիրելի ու հաւատարիմ բա-
րեկամաց կարգը կը դնեն ու իրեն հետ իբրեւ այսպիսի
բարեկամի մը հետ վարուելէն զատ, իրեն հետ յաճախ
կը խորհրդակցին, եւ իրենց բարեկամական վստահու-
թեամբն անոր աշխատութեան մասնակից ըլլալով՝ իր
ճանր ու դժուարին պաշտօնը չէ թէ միայն աւելի յօ-
ժարութեամբ կատարելու, այլ նաեւ դիւրինցընելու
կ'օգնեն: Այսպիսի վարմանց պտուղն ան կ'ըլլայ՝ որ դաս-
տիարակն իր աշակերաններուն կամ իր խնամսցը յան-
ձնուած տղոց ճնողացն իր վրայ ցուցրցած սիրոյն, մե-
ծարանաց ու վստահութեան օրէ օր աւելի արժանի ըլ-
լալու, կամ մանաւանդ անոնց իր վրայ ունեցած բարի
համարման ստուգիւ արժանի ըլլալը ցուցընելու համար

Չանքն ու փոյթը կը կրկնապատկէ, աւելի մեծ եռանդեամբ իր սաներուն կրթութիւնը եւ ուսումը յառաջ կը տանի, ամէն նոր դժուարութիւններուն համբերութեամբ յաղթելու կ'աշխատի, ու իր պաշտօնն ըստ ամենայն հանգամանաց անձանձրոյթ եւ յարատեւութեամբ մինչեւ ցվերջին տարին եւ օրը կատարելու շիգանդադիր:

4. Ղասափարակի մը տան մը մէջ մտնելու սկիզբը նշանաւոր վայրկեան մըն է ու շատ բան աս վայրկեանէն կախում ունի: Առանձինն աս վայրկեանին մէջ, կամ տան մը իրեն ծանօթ ըլլալու սկսած ատենը կը սկսին նոյն տան ամէն ընտանեաց ու բարեկամներուն քննող աչուրներն իր վրայ դառնալ, զինքը դիտել, քննել ու իր հանգամանաց վրայ դատաստան ընելու եւ վճիռ տալու պատրաստուիլ: Ասոր համար պէտք է որ դաստիարակն աս սկզբնական ու նշանաւոր քայլափոխին ատենը իր զգեստին, կերպարանաց ու վարմանց մէջ խոհական մարդու մը վայլած հանգամանքով (բայց առանց կեղծաւորութեան ու շողոքորթիչ եւ բռնական ձեւերու) երեւնայ, ոչ արտաքոյ կարգի պարզամիտ ու վախկոտ, ոչ շատ համարձակ ու շուտափոյթ կամ անխորհուրդ ըլլայ: Ի սկզբան իրեն յանձնուած սղոց հետ քաղցրութեամբ ու բարեկամական կերպով, բայց միանգամայն մասնաւոր զգուշութեամբ ու ծանրութեամբ, իսկ տան մէջ ըլլող ուրիշ ամէն անձանց հետ քաղաքավարութեամբ, բայց ոչ ամենայն ընտանութեամբ ու համարձակութեամբ վարուելու ջանայ: Աչուրներն ու ականջները խոհեմութեամբ ու զգուշութեամբ զբաղեցընէ, որչափ որ կարելի է ու խոհեմութիւնը կը ներէ՝ ամէն բան լսելու, ամէն բան տեսնելու ջանայ, միայն իր լեզուն քիչ մը ատեն անգործ ու անզբաղ մնայ, այսինքն աւելի լռելու քան թէ խօսելու պատրաստ ըլլայ: — Առջի օրէն այսպիսի իմաստուն դիտողութեամբ ու շրջահայեցութեամբ աշխատի բոլոր տան կարգերուն կամ ընթացքին հանգամանաց վրայ որոշ ու ճիշդ գաղափար մը ստանալու, ծնողքը կամ տանտէրն ու տանտիկինը, տղաքը, ուրիշ ընտանիքը, ազգականները, բարեկամներն ու ծանօթները

դիտէ ու քննէ, եւ աս ըրած ատենն իր յատուկ բնաւորութիւնն ու մտածելու կերպը կամ իր անձին հոգեկան հանգամանքն ու համոզումը յիշելով, իբր թէ ի խորհուրդ կոչելով, նայի թէ արդեօք պիտ'որ կարենայ նոյն տան մէջ իր պաշտօնին պարտքերը ճշդութեամբ ու հաւատարմութեամբ կատարել: — Ինչպէս ծնողք երկայն ու զգուշաւոր քննութիւններէ ետքը իրենց զաւակաց դաստիարակը կամ ուսուցիչը տան մէջ պիտ'որ առնուն, որպէս զի յայտ մասին անզգուշութեամբ վարուելով՝ չպարտաւորին իրենց անձանց ցաւովն ու զաւակաց վնասովը փոփոխութիւն մը ընել. այսպէս նաեւ դաստիարակն ալ յառաջագոյն ամենայն զգուշութիւնն ի գործ պիտ'որ դնէ՝ մինչեւ որ տան կամ գերդաստանի մը մէջ հաստատուի, որպէս զի ինքն ալ իր նախատինքնովը կամ վնասովը շատիպի փոփոխութիւն մ'ընելու, այսինքն յանձն առած պաշտօնէն հրաժարելու: Այսպէս երկու կողմանէ ալ խոհեմութեամբ ու զգուշութեամբ սկսուելու եւ յառաջ երթըցուելու որ ըլլայ, քիչ ատեննուն մէջ դաստիարակին ու ծնողաց մէջ այն կարեւոր բարեկամական ու բնտանեկան կապն ինք իրմէ կը հաստատուի, անիկայ ալ իրարու վրայ փոփոխ վստահութիւն մը ծնանելով՝ երկու կողմն ալ (ծնողքն ու դաստիարակը) ամէն հնարքներով կը ջանան նոյնը հաստատուն պահել. եւ ասոր բարերար ազդեցութեամբը տղոց կրթութիւնը յաջողութեամբ յառաջ կ'երթայ ու բաղձացուած կատարելութեան կը հասնի:

5. Շատ ծնողք իրենց տան մէջ զաւակներնուն կրթութեան համար դաստիարակ մը բնտրելու առնելու ատեննին՝ շատ անգամ միայն կը քննեն ու կը փնտռեն թէ արդեօք նոյն անձը շատ բան ու աղէկ սորված է, այլեւայլ լեզուներ գիտէ ու կը խօսի, իրենց ամէն պահանջածն ու բաղձացածը կատարելու պատրաստ է թէ չէ: Շատ դաստիարակներ ալ շատ անգամ տան մը մէջ մտնելը կամ անոր մէջ մնալը յանձն կ'առնուն՝ միայն բնդունելու վարձին (վճարման), նոյն պաշտօնին եւ ուրիշ պաշտօններու մէջ յառաջ երթալու, եւ ուրիշ այսպիսի անձնական ապագայ շահերու յոյսէն յորդորե-

լով: Եւ երբ որ իրենց աս յոյսին կատարուելուն նշան-
ները կը տեսնեն, ամենեւին հոգ մը չեն ըներ՝ թէ տան
անձինքը՝ մեծերն ու պղտիկները իրենց հետ ըստ պատ-
շածի ու կարեւոր խնամքով ու մեծարանքով կը վա-
րուին, թէ չէ: որովհետեւ իրենք իրենց յուսացած ու
բաղձացած շահն ու վարձը անխափան ընդունիլն իրենց
նպատակ ըրած ըլլալով՝ կրած արհամարհանքնին կամ
տան մէջ վարձկան ծառայի մը հաւասար սեպուիլը բանի
տեղ չեն դներ:

6. Հատ ճնողք իրենց զաւակացը կըթութեան
կամ ընդհանրապէս դաստիարակութեան վրայ կամ ա-
մենեւին գաղափար ու տեղեկութիւն չունենալնուն եւ
կամ ծուռ գաղափար ունենալնուն՝ դաստիարակին ինչ
ըլլալն ու անոր հետ վարուելու կերպը չեն գիտեր: Ասոր
համար այսպիսի ճնողք իրենց տան մէջ հասարակ ծա-
ռայ մը, խոհակեր մը, սենեկապետ մը, գործակալ մը
առնելու ատեննին աւելի հոգ, խնամք ու զգուշութիւն
կը բանեցրնեն, քան թէ իրենց զաւակաց ուսուցիչ կամ
դաստիարակ ընտրելու ատեննին: Աս բանիս պատճա-
ռը՝ շիտակ նայուելու ըլլայ՝ կրնայ ըսուիլ թէ միայն ան
է՛ որ տան ուրիշ ամէն ծառաները կամ վարձկանները
ճնողաց կամ տանտիրոջ ու տանտիկնոջ անձնական պի-
տոյից կամ գիւրութեան ու ծառայութեան համար
կ'առնուին. իսկ ուսուցիչը կամ դաստիարակը՝ միայն
զաւակաց պիտոյից համար: Աս ասանկ ըլլալով՝ թէպէտ
եւ դաստիարակը տան մէջ ուրիշ ծառաներէն կամ
վարձկաններէն քիչ մը աւելի վճարքով բռնուած անձ
մը (ծառայ մը) սեպուելու պէս կ'ըլլայ, ի վերայ այսր ա-
մենայնի շատ դաստիարակներ՝ իրենց պաշտօնին բարձրու-
թիւնն ու ազնուութիւնը շնկատելով ու իրենց դրամա-
կան շահուն միայն միտ դնելով՝ ճնողաց այսպիսի նուաս-
տացուցիչ վարմունքն արհամարհելի լռութեամբ ու ան-
հոգութեամբ յանձն կ'առնուն ու գոհ կ'ըլլան:

7. Ղշդութեամբ խօսելով՝ պէտք է ըսել որ միայն
դաստիարակին ձեռքն է թէ ճնողաց ու թէ զաւակաց
կամ կըթուելու տղոց մտքէն այն անարգական գաղա-
փարը գուրս հանել՝ որ ինք (դաստիարակը) վարձքով

բռնուած ծառայ, վարձկան մըն է: Եւ աս բանս կրնայ
ընել՝ երբ որ միշտ ու ամէն առթի մէջ իր անշահասիրու-
թիւնը յայանի կը ցուցընէ եւ իր բոլոր վարմունքովը ա-
մենուն միտքը կը համոզէ՝ որ ինք ոչ ընդունած վարձքին
ու ոչ առած պարգեւներուն վրայ հոգ մը ունի, հասկա
իւր բոլոր փոյթն ու ջանքն ան է՝ որ իր աշխատութիւնն
ու խնամքը ճանչցուի ու ըստ այնմ իրեն պարտուպատշաճ
ըլլող յարգն ու ազնուական մեծարանքը հատուցուի:
Ասոր համար երբ որ կը տեսնէ կ'իմանայ՝ որ տան մեծերն
իւր իրաւանց ու պարտուպատշաճ մեծարանաց միտ չեն
դներ եւ սակայն իբր իր աշխատութիւնը վարձատրե-
լու մտքով՝ իրեն դիւրութիւն մ'ընել, պարգեւ մը տալ
կ'ուզեն, ինք խոհական ծանրութեամբ այն պարգեւէն
կը հրաժարի: Բայց պատշաճ կերպով կը ցուցընէ՝ որ իր
բաղձացած մէկհատիկ վարձն ու ամենէն մեծ պարգեւը՝
ճնողաց իրեն հետ բարեկամական ընտանութեամբ վա-
րուիլը, իր վրայ վստահ ըլլալը, իր վրայ գոհ ըլլալնին ու-
րիշներուն ալ յայանելը եւ զինքն ամէն տեղ պարտու-
պատշաճ մեծարանաց արժանի ցուցընելն է: Թէ որ դաս-
տիարակը՝ իր ամէն պարտքերը հաւատարմութեամբ կա-
տարելուն վրայ ապահով ըլլալով՝ այրական հաստատու-
թեամբ աս վերողբեալ ընթացքը կը բռնէ, անկէց ետքը
ալ ճնողք՝ թէ որ միայն ազնուական զգացմունք ունե-
նան՝ կը հասկընան, կը համոզուին որ դաստիարակը՝
վարձկան ծառայ մը չէ, հասկա մեծարանաց արժանի
անձ մըն է, եւ իրենք քանի որ իրեն աս պատշաճական
մեծարանքը չեն հատուցաներ, անոր տուած ուրիշ ամէն
վարձքերնին ու պարգեւնին՝ իր պաշտօնին վայլած
հատուցում չէ:

Տ. Աթէ դաստիարակը կ'ուզէ՝ որ իր աշակերտներն
իրեն հետ իբրեւ տան մէջ ըլլող վարձկան ծառաներէն
մէկուն հետ շվարուին, պէտք է որ ջանայ զանոնք այնպէս
կրթել՝ որ ամէն ծառաներուն հետ առ հասարակ վայ-
ելութեամբ վարուին, անոնց վրայ հրամայող տիրոջ
կերպով շքունանան, անոնցմէ ամէն ծառայական գործ-
քը քաղցրութեամբ պահանջեն կամ խնդրեն ու ամէն
գործքին կատարմանէն ետքը անոնց ըստ պատշաճի շնոր-

Հակալ ըլլան : Թէ որ աս բանիս մէջ զանցառութիւն
կամ անհոգութիւն կ'ընէ, պէտք է որ ինք իրեն մեղա-
դիր ըլլայ՝ երբ որ տան ծառաներն իրեն հետ սիրով ու
ըստ պատշաճի շէն վարուիր, եւ իր աշակերտներն ալ
զինքն իբր ուրիշ ծառաներէն աւելի վարձ առնող ծա-
ռայ մը կը սեպեն, զինքն անոնց կարգը կը դնեն ու իրեն
հետ իբրեւ այնպիսի անձի մը հետ կը վարուին : Այսպիսի
վարմանց հետեւութիւնն ալ ան կ'ըլլայ՝ որ տղաք նոյն
վարմանց մէջ վարժելով՝ պղտիկուց հրամայելու միտում
կը ստանան եւ ուրիշները բանի տեղ չդնելու եւ արհա-
մարհելու կը սովորին : Նախ առաջին տան ծառաներուն
վրայ դռնողնալու, իշխելու կը սկսին. ետքը իրենց ու-
սուցչին կամ դաստիարակին վրայ, վերջապէս իրենց
ճնողաց վրայ : Գեռ հնազանդիլ շտրված՝ հրամայելու
եւ իշխելու փափագ կ'ունենան, եւ որովհետեւ միայն
հրամայելը եւ իրենց ուզածը կատարել տալը իրենց
գլխաւոր փափագն է, անոր համար իրենց կամացը գէժ
ըլլող եւ ոչ մէկ հրամանին կը հնազանդին :

Գ. Ճնողաց համար մեծ պակասութիւն ու ան-
կարգ վարմունք կը սեպուի՝ իրենց զաւակացը դաստիա-
րակները յաճախ ըստդտանելը, զանոնք պակասաւոր
ցուցնելն ու անոնց վրայ արտնջելը : Գժբախտութեամբ
կը գտնուին անանկ ճնողք՝ որ երբ որ իրենց անհաճոյ
բան մը կը տեսնեն, երբ որ իրենց զաւակը վայրկեան մը
իրենց հաճոյիցը համաձայն շինասիր, շիկենար, շիքալեր,
երբ որ իրենց հաճոյ եղած ատենը շիխօսիր, շիլուեր,
զինքը զբօսանքի տանելու ատեննին՝ ուսման զբաղած
կ'ըլլայ, վերջապէս իրենց տխուր կամ սրտերնին
անհանդիստ եղած ատենը՝ կը խաղայ կը զբօսնու, այս
ամենայն մեծ պակասութիւններ սեպելով՝ տան դաս-
տիարակին վրայ բերաննին կը բանան, ինք պէտք է որ
ճանր ճանր տրտունջներ ու կշտամբանք լսէ : Այսպիսի
ճնողք հազիւ երկու երեք ամիսը մէյ մը իրենց զաւակ-
ներուն կըթութեան վրայ մտադիր ըլլալու հաճած ա-
տեննին՝ ամենեւին խիղճ շէն ըներ ամէն փոքր պակասու-
թեան պատճառն ու յանցանքը խեղճ դաստիարակին
վրայ ձգել, անիկայ իր անհոգութեան պտուղը սեպել,

առանց նկատման իրեն արտունջ ընել եւ գուցէ յան-
դիմանութիւն տալ . ան ալ՝ չէ թէ առանձին տեղ
մը, կամ՝ ինչպէս կ'ըսուի՝ գլուխ գլխի տուած, հապա-
յայտնի ու հրապարակաւ, նոյն իսկ զաւակաց եւ ընտա-
նեաց, երբեմն նաեւ ծառայից առջեւը: Այսպիսի վար-
մանն սրչափ անպատշաճական, անկարգ ու վնասակար եւ
գաստիարակի մը վայլած նկատման ու պատուոյն հակա-
ռակ ըլլալը՝ այնպէս ծանուցուած հանգամանք մըն է՝ որ
անոր վրայ երկայն խօսիլը եւ ծնողքն անկից զգուշացը-
նելը աւելորդ կը սեպենք: Բայց երկու կողման օգտին
կամ զգուշութեան համար կ'ըսենք՝ թէ պէտք չէ որ
ծնողք որպիսի եւ իցէ փոքր կամ մեծ գործ մը՝ գաս-
տիարակին ներկայութեան պախարակեն ու արհամարհելի
ցուցնեն: Սակայն գաստիարակն ալ ծնողաց նկատմամբ
նոյնպէս վարուելու պարտական է: Արկու կողման, ծնո-
ղաց ու գաստիարակին համար պէտք է որ հաստատուն
օրէնք ու թէութիւն մը ըլլայ՝ ամէն բանի վրայ առան-
ձինն իրենց մէջ, գլուխ գլխի տուած խօսիլ ու խոր-
հրդակցիլ, ան ան բանին վրայ իրարու միտքը լուսաւորել .
մէկ կողմը մէկալ կողման համաձայնիլ ու զիջանիլ տա-
րակուսելի հանգամանաց մէջ, ուր որ տղաց օրինաւոր
կրթութեան աւելի մեծ օգուտ ծագիլը յայտնի կը տես-
նուի: Արբ որ ծնողք ու տնական գաստիարակը միեւնոյն
նպատակը դիտելով, իրարու հետ միշտ խօսքով, խոր-
հրդով ու գործքով կամ վարմունքով համամիտ կ'ըլլան
ու համաձայնութեամբ կը գործեն, գաստիարակութեան
կամ կրթութեան մէջ ամենեւին շփոթութիւն, արգելք
ու խափանում չիմաներ: Աս կարեւոր դաշնակաւորու-
թիւնը հաստատուն պահելու համար՝ պէտք է որ թէ
ծնողք ու թէ գաստիարակն ամէն արտաքին միջամտու-
թիւնը կամ օտար անձանց գաստիարակութեան մէջ
խառնուիլն ամէն ջանքով արգելուն: Այն, կրնան բա-
րեմիտ ու հմուտ բարեկամաց մէկ կամ մէկալ օգտակար
խորհուրդին ահանջ դնել ու մտադիր ըլլալ, որովհետեւ
հմուտ ու իմաստուն անձանց խրատն ու խորհուրդը կրնայ
ըստ պարագայից օգուտ մը ունենալ, իրենց ժխտական
ու հաստատական գատաստանը ծնողաց ու գաստիարա-

կին միտքը մէկ կամ մէկալ կարեւոր հանգամանաց վրայ
զարթուցանել եւ լուսաւորել: Ի վերայ այսր ամենայնի
օտար անձանց դաստիարակութեան ընթացքին խառ-
նուիլը հասարակօրէն նոյնին յաջողելուն արգելք կ'ըլլայ:

10. Տնական դաստիարակին մէկ գլխաւոր պարտքն
ալ է՝ ամէն ջանքը բանեցրնել որ տան տղաք թէպէտ
եւ ամէն անձանց հետ պատշաճ կերպով, մեծարանօք ու
վայելուչ քաղաքավարութեամբ վարուին, ուրիշներուն
պակասութեանց ու անկարգ գործքերուն վրայ շփոթազին
ու կատակ չընեն, մէկու մը գէժ յանդուգ ու արհամար-
հատ չըլլան, սակայն աս ամէն բաներու մէջ առանձինն
իրենց ճնողաց ամենայն զգուշութեամբ ու եռանդով վայ-
ելուչ ակնածութիւնն ու մեծարանքն ամէն առթի մէջ
ցուցրնեն: Եթէ դաստիարակը տեսնէ որ իր աշակերտ-
ներն իրենց ճնողաց վրայ պակասութիւն կամ սխալ մը
նշմարած են, ինչպէս կիրք մը, բարկութիւն, ծառայից
գէժ խստութիւն, եւ այլն, ջանայ ամենայն խոհեմու-
թեամբ ու զգուշութեամբ անոնց միտքը սխալողին ուրիշ
բարի բարի հանգամանաց վրայ դարձրնել, աշխատի
միշտ օրինաւոր պատճառ մը գտնել՝ նոյն վայրկենական
սխալմունքը նուազցրնելու համար. սակայն ոչ երբեք
հնարքներ փնտռէ՝ ինք իրմէ ստգտանելի կամ պակաս-
րակելի գործք մը գովելու կամ արդարացրնելու: Ընդ-
հանրապէս ջանայ ու հոգ տանի տղոց մտքին ու սրտին
մէջ ճնողաց վրայ սէր ու մեծարանք զարթուցանելու
ու սնուցանելու: Թէպէտ եւ ճնողք շատ անգամ յանի-
րաւի ալ իրենց զաւկրները պակասաւոր ցուցրնելու, ամ-
բաստանելու եւ պատժելու ըլլան, պէտք է որ դաստիա-
րակը զանոնք (ճնողքը) միշտ ջատագովելու աշխատի:
Իմաստուն դաստիարակ մը պէտք է որ միշտ յիշէ՝ թէ իր
պաշտօնին մէջ իրեն աւելի արգելիչ կրնան ըլլալ ան
ճնողք, որոնք իրենց զաւկրներուն վրայ շափազանց կամ
անկարգ սէր ունենալով ու անոնց հետ անչափ ներողա-
մտութեամբ վարուելով՝ անոնց իրական պակասութիւն-
ներն ալ անտես ընելու կամ նաեւ բարեքելու կը ջա-
նան, քան թէ ան ճնողք, որոնք՝ առանց ճնողական
սիրոյն վնաս մ'ընելու՝ զաւկրներուն հետ խստութեամբ

կերթան ու երբեմն արդիւնաւորածներնէն աւելի պատ-
ժուելնին կ'ուզեն: Անոր համար երբ որ տղաք ծնողաց
խստութեան վրայ աժգոհութեան կամ տրտունջի նշան
մը ցուցնելու ըլլան, դաստիարակը ծնողաց բռնած ճամ-
բան արդարացընելու համար անոնց իրաւունքը պաշտպա-
նէ եւ ցուցնէ որ այն սէրը՝ զորն որ ամէն ծնողք իրենց
զաւակաց վրայ ունին, նոյն իսկ իրենց խիստ վարմանց մէջ
գլխաւոր գործողն է, ուստի եւ զաւակներն իրաւունք
չունին անոնց վրայ տրտունջ ընելու:

11. Տնական դաստիարակին ու ծնողաց մէջ տղոց
կրթութեան յաջողելուն համար եղած միաբան ու միո-
րինակ գործակցութիւնն ուրիշ մէկ կողմանէ ալ արդելք
կրելու եւ շփոթուելու վտանգի մէջ կրնայ իյնալ: Եր-
բեմն բարի ու իրենց զաւակաց օգուտը սրտանց բաղձա-
ցող ծնողք՝ տեսնելով անոնց իրենց դաստիարակին վրայ
ունեցած մեծ սէրը, սրտերնուն մէջ նախանձ մը կը ծնա-
նի, զդաստիարակն իրենցմէ աւելի երջանիկ կը սեպեն՝
որ իր աշակերտները զինքն այնչափ կը սիրեն ու անկից
վայրկեան մ'ալ չեն ուզեր բաժնուիլ: Աս նախանձը ծնո-
ղական սիրոյն պատուէն ու հետեւութիւնն ըլլալով, պէտք
է որ դաստիարակն անոր վրայ ամենեւին չայլայլի ու իր
վարմանց կերպն ու ընթացքը չփոխէ, մանաւանդ թէ այն
բարի նախանձն իբրեւ բոլորովին ներելի զգացում մը սե-
պելով, այսպիսի որդեւէր ծնողաց վրայ ունեցած բարի
համարման մէջ աւելի եւս հաստատուի: Արդէն յայտնի
բան մըն է՝ որ բարի ու խոհեմ ծնողք իրենց աս զգա-
ցումը կամ նախանձը շուտով ու դիւրաւ սրտերնէն կը
հեռացընեն, երբ որ հեղ մը կը սկսին ըստ պատշաճի
մտածել՝ որ իմաստունն ու բարի դաստիարակն իր նուիր-
ական պարտուցը համեմատ միշտ կը ջանայ իր սաներուն
սրտին մէջ որդիական սէրը մշակելու եւ օրէ օր աւելի
բորբոքելու: Սոյնպէս եւ կրնան իրենց զաւակաց պա-
տուական ու փորձ դաստիարակին վրայ ապահով ըլլալ՝
որ իր խնամոցը յանձնուած մատաղ սրտերուն մէջ ամէն
նուիրական ու կարեւոր զգացմունքը սնուցանելու շիղան-
դաղիւր, իր աշակերտներուն անդադար կը յիշեցընէ այն
ամէն երախտիքն ու բարերարութիւնները, զորոնք իրենց

ճնողաց սէրէն ու բարութենէն կ'ընդունին . ամէն որ ի-
րենց միտքը կը բերէ՝ ճնողաց իրենց առողջութեան , հո-
գեւոր ու մարմնաւոր յառաջագիմութեան եւ հանգըս-
տեան համար ունեցած մեծ հոգն ու խնամքը եւ երբեք
անհոգ չ'ըլլար իրենց մտաց մէջ ճնողաց այսչափ սիրոյն ,
բարութեան ու խնամոց յիշատակները զարթուցանելով
ու նորոգելով՝ իրենց սիրտը որդիական երախտագիտու-
թեան զգածմունքով վառելու . ստոյգ դիտնալով որ ե-
րախտագէտ զաւակը նաեւ երախտագէտ աշակերտ կ'ըլ-
լայ : Այս ամենայն մտածելով բարի ու իմաստուն ճնողք ,
իրենց զաւակացը՝ դաստիարակներնուն վրայ ունեցած
սէրը եւ անոր բոլորովին յարած ըլլալը հանգարտ սրտով
կը տեսնեն , նոյն դաստիարակին բարի բարի հանգա-
մանքը յիշելով եւ անոր խոհական խնամոց վրայ ապահով
ըլլալով , չէ թէ միայն սրտերնուն մէջ ճնած նախանձը
շուտով մարելու կը ջանան , հապա նաեւ անոր վրայ հա-
մարումնին աւելցընելով , երկու կողման մէջ եղած սքան-
չելի դաշնակաւորութիւնն ու միաբանութիւնը մինչեւ
ցլխածան հաստատուն պահելու կ'աշխատին :

Մինչեւ հոս գրածներնէս ի զատ՝ ճնողաց ու
տնական դաստիարակին յարաբերութեանց ու իրարու
նկատմամբ ունեցած պարտքերուն վրայ քանի մը ընդհա-
նուր տեղեկութիւններ ալ կրնայինք գրել : Բայց մինչեւ
հիմայ ըսածնիս բաւական սեպելով , աւելի եւս ընդար-
ձակ տեղեկութիւններ ունենալու բազմացողները մեր
Ռատոռալի ազգային Դաստիարակոթեան անուամբ հա-
նած մատենին կը խաւրենք , որն որ թէպէտ եւ առան-
ձինն դաստիարակաց համար շատ կարեւոր է , սակայն
ճնողաց ալ չէ թէ միայն օգտակար՝ հապա նաեւ կա-
րեւոր կրնայ ըլլալ , մանաւանդ անոր Երրորդ Մասը :

The first part of the paper is devoted to a general
 consideration of the subject. It is shown that the
 theory of the subject is not yet complete, and
 that there are many points which require further
 investigation. The author then proceeds to a
 detailed examination of the various aspects of the
 subject, and shows how they are interrelated.
 The second part of the paper is devoted to a
 study of the history of the subject. It is shown
 that the subject has a long and interesting
 history, and that it has been the subject of
 much research and discussion. The author then
 proceeds to a study of the various theories which
 have been advanced, and shows how they are
 related to the subject. The third part of the
 paper is devoted to a study of the various
 applications of the subject. It is shown that the
 subject has many important applications, and
 that it is of great value in many fields of
 study. The author then proceeds to a study of
 the various methods which have been used in the
 study of the subject, and shows how they are
 related to the subject. The fourth part of the
 paper is devoted to a study of the various
 results which have been obtained in the study
 of the subject. It is shown that there are many
 interesting results, and that they are of great
 value in many fields of study. The author then
 proceeds to a study of the various problems
 which remain to be solved, and shows how they
 are related to the subject. The fifth part of
 the paper is devoted to a study of the various
 conclusions which have been reached in the
 study of the subject. It is shown that there are
 many important conclusions, and that they are
 of great value in many fields of study. The
 author then proceeds to a study of the various
 implications of the subject, and shows how they
 are related to the subject. The sixth part of
 the paper is devoted to a study of the various
 prospects of the subject. It is shown that there
 are many interesting prospects, and that they
 are of great value in many fields of study.

Յ Ա Ն Կ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Մեկ միևնույն վեց տարեկան տղոց կրթութիւնը:

Հոգեկան կրթութեան վախճանը:	1
Մարդուն վախճանը:	2
3. Հոգեկան կրթութեան սկսելու ժամանակը:	3
4. Ծնողաց տան մէջ ու ծնողքէն պիտ'որ սկսի կրթութիւնը:	4
5. Ո՛վ ու ինչպիսի մարդ պիտ'որ ըլլայ տղոց կրթիչը:	6
6. Ի՞նչ կերպով ու ճամբով տղուն սիրաւը շարժելու պէտք է սկսիլ:	8
7. Պզտիկ տղոց հետ վարուելու կերպն ու հանգամանքը:	12
8. Պզտիկ տղաքը դաստիարակելու համար դիտուելու գլխաւոր հանգամանքները:	17
9. Տղոց ներքին կամաց ու զգացմանց կրթութիւնը:	21
10. Տղոց մտաց կարողութիւններուն կրթութիւնը:	28

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

վեց միևնույն տասնորոշիկ տարեկան տղոց կրթութիւնը:

11. Ա՞ 7—15 տարեկան տղոց դաստիարակութեան հանգամանքն ու պայմանները:	34
12. Ա՞ ատենուան դաստիարակութեան այլ եւ այլ նիւթերը:	35
13. Կրթութիւնն աղէկ գլուխ հանելու համար ծնողք ու դաստիարակք իրենց վարմանց մէջ ինչ ընթացք պիտի բռնեն:	39
14. Ա՞ (7—15 տարեկան) տղոց հետ ինչպէս պէտք է վարուիլ:	44
15. Ի՞նչ կերպով եւ ո՞ր հասակի մէջ բարձրագոյն կրթութիւնը պէտք է հոգալ:	46

16. Գաստիարակն ինչ հանգամանքներ պիտի ունենայ, ինչ ընթացք պիտի ունենա իր ամեն մէկ աշակերտին հանգամանաց համեմատ:	49
17. Կրթութեան եւ ուսմանց մէջ գաստիարակին բռնելու ընդհանուր կարգերը:	55
18. Գաստիարակութեան մէջ աս (6—15) տարւան շրջոց սորվելու գլխաւոր ուսմունքը:	59
19. Չգոյական կարողութեան կամ զգացմանց կրթութիւնը:	66

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Դ

Տասնութիւնգ տարւունք վեր շրջոց տղոց կրթութիւնը:

20. Աս հասակի անձանց գաստիարակութեան հանգամանքը:	69
21. Աս հասակի անձանց հետ վարուելու կերպը:	70
22. Աս հասակին մէջ հանդիպող վտանգները, մոլորելու հնարքները խափանելու միջոցներ:	73
23. Ազգատոհմի հանգամանաց սողեցութիւնը:	80
24. Առանձինն օրիորդաց կրթութեան հանգամանքը:	82
25. Ծնողաց վարմունքն իրենց դեռահասակ որդւոց հետ:	85
26. Աս հասակի անձանց ուրիշներուն հետ վարուելուն մէջ կրթութիւնը:	88
27. Ապագայ վիճակը կամ կենաց պայմանի ընտրութիւնը:	91

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ժ

Ծնողաց ու անական գաստիարակին յարաբերութիւններն ու պարտքերը իրարու նկատմամբ:	97
---	----

